


Ահնու

ԱՄԱՍԱԳԻՐ

ԿՐՈՆԱԿԱՐ - ԳՐԱԿԱՐ - ԲԱԼԱԿՐԱԿԱՐ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՐՊԽԱՋԵՄԸ ՀԱՅ ՊԱՏՐԱՄՐՈՒԹԵԱՆ



ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
ԵՐՊԽԱՋԵՄ

1943

Մ Ի Ռ Ա

ԺԷ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1943

» ՀՈԿՏ. - ՆՈՅ. - ԴԵԿՏ. »

ԹԻՒ 10-11-12

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Տարօրինակ թուի թերևս խորագիրը մեր Խմբագրականին, քանի որ աւելի քան ստոյզ է թէ այդ հայրենիքը իր զաւակներուն սրտին խորը բնաւ չէ դադրած իրաւ ըլլալէ։ Մշուշներ, պատմութեան բերումներ, այդ հայրենիքին զաւակներուն և երկրին իրականութեանը մէջտեղ, պատուարի, վարագոյրի նման դեր մը ունեցած են, բայց երբեք՝ անթափանց ընծայելու չափ զանոնք իրարու։

Երկար, շատ երկար եղաւ մեր սպասումը, եւ խոր՝ մեր տառապանքը, բայց բնաւ չպակսեցաւ մեզի յոյսին քաղցրութիւնը։ Անցնող քառորդ դարուն՝ մեր հայրենիքը, իբր հաւասարապատիւ անդամ Խորհրդային Միութեան, արդէն գոյութիւն ունէր և կը վայելէր հզօր պաշտպանութիւնը այս վերջինին։ Հակառակ որ ան մեր պատմական բնաշխարհին մէկ մասը միայն կրանքանդակէր, բայց մեր միակ ազգային տունն էր և կենդանի վառարանը մեր դարաւոր ձգտումներուն, երազներուն և հաւատքին։

Հայ սփիւռքը հակառակ հայրենի հողի իր կարօտին, տագնապներ ու վարանումներ ունեցաւ։ Ոմանք ցաւով մտածեցին թէ Հայ նոր Հայրենիքը չունէր այն բացարձակ անկախութիւնը զոր մենք կ'ուզէինք որ ան ունենար։ Ուրիշներ՝ խորթ և օտարոտի կը զտնէին Խորհրդային Հայաստանի իրաւակարզը։ Եւ տակաւին զտնուեցան դժողոններ՝ թէ Հայաստան ինչո՞ւ իր դուռները լայնօրէն չէր բանար Սփիւռքի ստուերաշխարհներու մէջ նստող կիսակործան հողիներուն։

Իբր զզացում՝ արգար, բայց իրականութեան քիչ համապատասխան այս մեղադրանքները այսօր մեղմացած և անուշցած են այլիս։ Այսօրուան աշխարհին մէջ մեր ծաւալն ու տնտեսութիւնը ունեցող ոչ մէկ ժողովուրդ կրնայ վայելել այն անկախութիւնը՝ զոր մենք կը պահանջենք յաճախ։ Իսկ տարածքը մեր երկրին՝ այն շատ պղտիկցած «ածուին», որուն մեծ մասը գեռ երէկ երկար ու ինամուտ ոռողումներու և մշակման կը կարօտէր, կը մնայ հետևաբար անբաւական իր ծոցին մէջ տակաւ աճող աւելի քան մէկ միլիոն բնակչութեանը համար։ Հայրենիքը տասնեակ մը տարիներ առաջ զերագոյն զոհողութիւններու զինով միայն կրցաւ իր դուռները բանալ զաղթաշխարհի թէկ քիչ՝ բաց բախտական իր զաւակներուն։ Քիչեր, շատ քիչեր, ճիշտ կերպով ուզեցին արժեկորել տաժանազին ըլլալու աստիճան ներքին այն հզօր ճիզը՝ զոր մեր երկիրը կը ջանար եւ կը նիւթէր, մշակելով հողը, բանալով ջրանցքները, զարգացնելով

զիւղատնտեսական աշխատանքները, յառաջ տանելով ձկնարուծութիւնն ու անտառամշակութիւնը, եւ ուշագրաւ համեմատութիւններու հասցնելով ճարաբարագործութիւնը իր բոլոր երեսներուն վրայ:

Եատցան նորակերտ բնակարաններու թիւը, զուարժ կանաչութիւններով ծածկուեցան դարերով անմշակ հողերը, չնորհիւ բացուած ջրանցքներու և ջուրի բաշխութեաներու: Հոյակապ զործարանները — որոնցմէ օմանք՝ քառուչուի, պահածոյի և քոնեակի, կը մըցին բովանդակ Խորհրդային երկիրներու նման հաստատութիւններու հետ — իրենց չողեալինդ աշխատանքին մէջ տակաւ շատցուցին պակսող բարեիքները: Նիւթական շինարարութեան հետ՝ յառաջադրուեցան փարչական և ընկերային բարենորոգութեար, ինչպէս նաև առողջապահական և մըտաւորական աշխատանքներ: Մասնաւոր զարկ արուեցաւ կրթական և մշակութային զործին, և երեան մայրաքաղաքը՝ գարձաւ կեղրոն հայ մտքին:

Ժողովրդային լուսաւորութեան հարիւրաւոր հիմնարկութիւններ, զրադարաններ՝ ամէնուրեք, որոնց մէջ Հայաստանի պետական համբային զրադարանը կը նկատուի Սովիէտ Միութեան առաջնակարգ զրադարաններէն մէկը, չնորհիւ իր ունեցած հագուազիւտ հատորներուն. շուրջ մէկ ու կէս միլիոն զիրքեր:

Գալրոցներու ցանցը որ այսօր զոյութիւն ունի մեր հողին վրայ, և կըրթական հիմնարկութիւնները, երբեք իրենց նմանը ունեցած չեն: Հակառակ պատերազմի արհաւիրքին, այդ կարգի ձեռնարկները կը շարունակուին անընդհատ, ժողովրդական կրթութեան և լուսաւորութեան ի հաշիւ: Իսկ զոյութեան շքեղ պայքարը զոր հայ արի արանց զինուորները կը մղեն իր զաւակներու արիւնով դեռ նոր զնուած հայրենիքին ի խնդիր, վեր կը մնայ ամէն զնահատանքէ:

Սակայն այս բոլորին պէտք կա՞ արդեօք, Հայաստանը սիրելու համար: Հայրենիքի սէրը փոխարինութիւն չի պահանջեր. անիկա զերիվեր է ամէն կարզի հաշիւներէ և նկատումէ: Մենք տակաւին այսօր կը մեզաղբենք մեր այն նախնիքը որ իրենց թագաւորին կամ իրարու դէմ թշնամական դիրք բռնելով կը վտանգէին երկրին շահերը: Քաղաքացիական առաքինութիւնները որքան մշակուին և ընդհանրանան՝ այնքան ալ կը նուազին մարդկային այն տկարութիւնները որոնք երբեմն կը համնին մինչեւ մատնութիւն, մինչեւ հայրենադաւութիւն:

Դեռ երէկ, գաւառական վարժարանի մը կառուցումը, հայու մը նախարարանուամը, հայերէն թերթի մը երեւումը և կամ նոր եկեղեցիի մը հիմնարկէքը՝ հրձուանքով ու փառքով կ'ուսեցնէր մեր կուրծքերը. ի՞նչպէս չըերկրի «նորամանուկ» Հայաստանին համար, ուր նոր կեանք, նոր զործ և յառաջդիմութեան նոր հորիզոններ կան, հագար անզամ նահատակուած բայց չմեռած այս ժողովուրդի զաւակներուն համար:

Հեռատես ժողովուրդները կը դուշակեն ապագայ հնարաւորութիւնները, զգուշանալով արկածալից փորձերէ, և էական մեծ նպատակին համնելու համար պատեհ առիթին վիտեն սպասել: Կարճատես ժողովուրդները միայն անընդունակ են լայն հայեացքներու և հորիզոններու, պահանջելով իրենց բաղձանքներու անմիջական կատարումը՝ անհամբեր և ջղազրպիս: Մենք՝ Հայերս, զըժքախարար եղած ենք յաճախ այս վերջիններէն. հազիւ ըմբռնած թէ ինչ է Ազատութիւնը, զնուեցինք անոր տիրանալ անյապաղ. ուզեցինք որ Հայաստան մէկ օրէն, և մեր օրով վերականգնի. և մեր կորստարեր արշաւեն մէջ փոխա-

նակ նահանջելու կամ կասելու, շարունակեցինք մեր խելայեղ վագքը, կոյք բախտին քմահաճոյքին յանձնելով յանախ մեր ազգային գոյութիւնը :

Այսօր վարանումի և երկրնարանքի պէտք չունինք . Հայստանի և ամբողջ Հայութեան բախտը կապուած է Խուս մեծ ժողովութիւնն, որ մեզի կ'ընծայէ երաշշիքը ցեղային մշակոյթի տեականութեան և անհատական կեանքի ապահովման :

Իսկ տակաւին ամիս մը առաջ Սովորէթ. Սահմանադրութեան բարեփոխութիւնը, որ Միութեան բաղկացուցիչ Հանրապետութեանց իւրաքանչիւրին կ'ընծայէ ներքին ազատութեան հետ միասին՝ նաև արտաքին յարաբերութեան լիազորութիւն, յարգելով Միութեան մաս կազմող իւրաքանչիւր պատիկ ժողովուրդին ինքնորոշուած անկախութիւնը, այս կերպով առիթ կ'ընծայէ անոնցմէ իւրաքանչիւրին աւելի լայն զետիններու վրայ մշակելու իրենց քաղաքական և նիւթական ձիրքերը, ինչպէս նաև ցեղային ընդունակութիւնները :

Այսօր ուրեմն աւելի քան իրականութիւն մըն է մեր հայրենիքը, որ իրաւունք պիտի ունենայ ոչ միայն իր սեպհական բանակն ունենալու, այլ նաև դիւանական ներկայացուցչութիւնները, դաշնքներ կնքելու եւ արտաքին այլ դործեր կարգադրելու օտար պետութեանց հետ : Մեր ժողովուրդը այսօր առաւել քան երբեք խոր վստահութեամբ կը նայի Սովորէթ Խուսիոյ, որուն հովանիին ներքե հայ երկիրը, վերջի քառորդ դարու շրջանին, խելքէ վեր աճումի և բարգաւաճումի արդիւնքներ ունեցաւ, և պիտի շարունակէ ունենալ : Խորհրդային Հայաստանը, այսօր, Թիւրքիոյ Հայութեան բնաջնջումէն վերջ, կոչուած է կատարելու իր պատմական հին գերը, որպէս ազգին ծանրութեան կեղրոն և կենսունակութեան վառարան :

Հայրենիքին երազովը տապկուող Հայ Սփիւռքը իր մէջ կը համրէ այսօր աւելի քան կէս միլիոն խանդավառ սրտերու շքեղ զումարը, զոր աշխարհագրական եւ քաղաքական պայմաններ կը տարանջատեն բայց չեն յաջողիր խորտակել անոր խոյանքը : Սփիւռքի Հայութիւնը ուրեմն իրբե քանակ, որակ եւ կարելիութիւն, արհամարհելի չըլլալով հանդերձ՝ հանդերձուած չէ միամինակը իրացնելու այն կարելիութիւնները, որոնք կարենային ապահովել իր գոյութիւնը : Վասնզի մենք չունինք այն կոռւանները, մեր պաշտպան սուրբերը, զոր հայրենի հողն ու անոր վրայ ստեղծուած ողին միայն կրնան արգասաւորել :

Մի՛ ըսէք, աղիտալի ինքնախաբէութեամբ, թէ Հայը հակառակ իր նկատմամբ ի զործ զրուած հալածանքին և կոտորածներուն, գեռ կը շարունակէ ապրիլ : Մեր անթիւ նահատակութիւնները, մեր օտարացած լեզուները ու մանաւանդ խորթացած հոգինները հակառակ պիտի փաստեն վազը, շարունակելու համար իրենց հիւժասպառումը զաղութներուն մէջ : Վկայ այս բոլորին՝ հայրենիքի ծոցէն նետուած մեր զաղթականութիւնները՝ ի Բիւզանդիոն, ի Լեհաստան, ի Հնդկաստան, յեղիպտոս և Եւրոպական ուրիշ երկիրներ : Այսօրուան հայ զաղութներն ալ սահմանուած են, անողոք որոշադրութեամբ մը, նոյն ճակատազրին : Քաղաքականութիւն և քաղաքակրթութիւն հաւասարապէս թրշնամի են անոնց՝ իրենց պարտադրուած օտարութիւններուն մէջ :

Յարզը զիտնանք Խորհրդային Հայաստանին, ուր հայ լեզուն ու մշակոյթը կը ծաղկի, ու հայ երզն ու երազը հայ հողին ու հովին շունչէն կ'առնեն իրենց տարրերը : Հասարակաց խօսքերու արձադանագ մը չենք ուզեր որ արթնցնեն մեր այս

նկատողութիւնները ընթերցողի հոգիին մէջ։ Մենք ամէն բանէ առաջ և ամէն բանէ վեր՝ կը հաւատանք Հայ Հոգիին, և դարաւոր փորձառութեամբ սորված ենք թէ այդ հոգիին զերագոյն պաշտպանը դարձեալ Հայ Հայրենիքն է՝ ամէն բանէ առաջ և ամէն բանէ վեր։ Հայ արուեստագէտը Լոնտանէն, Նիւ-Եորքէն, Փարիզէն, կարենայ թերևս խորունկ ներշնչումներ իւրացնել, բայց չի կրնար այդ ներշնչումները հայացնել, — որ հոս կը նշանակէ ազատազրել անցաւորը որոշ տեսականի մը մէջ — որքան ատեն որ անոր աչքը չկշտանայ գոյներու, զիծերու կախարդական այն հանդէսէն, որ երկիրն է, որ հայրենիքն է ամէն հոգեկան դրութեան դիմաց։ Ենչ շքեղ էին Արևմտահայ Գրականութիւնը փառազարդող տաղանդները, բայց ո՞քան քիչ է հայրենի շեշտին, ձայնին բաժինը այդ տաղանդներէն մեզի ժառանգ մնացած գործերէն ներս, վասնզի այդ զրականութիւնը իր խոշոր մասով չէ պաշտպանուած Հայոց Հայրենիքէն։ Թէ Եւրոպայի, թէ Ամերիկայի մէջ, Հայ միտքը գեռ նոր՝ մեծ անուններ նույիրեց այդ Մշակոյթներուն։ Մենք զանոնք կորսուած չենք նկատեր, բայց կը ցաւինք որ անոնք աճում՝ մը չեն եղած Հայ մտքի փառքին վրայ։ Ահա թէ ինչու չենք դադրիր պահանջելէ այդ Հայրենիքին իրականութիւնը՝ կենդանի և բարախուն, Սփիւրքի բոլոր խաւերուն ալ հոգիէն ներս։ Ան որ օրուան իր աշխատանքը կ'աւարտէ և իր քայլերը կ'ուղղէ իր տունը, շի այցուիր արդեօք այն միւս իրականութենէն, որ Խորհուրդն էր ըլլալու այդ տունին, այս անզամ սեպհական հողի երեսին, իբր մէկ բջիջը Հայ Հայրենիքին։

Հայ հարուստը որ օտար հոգին վրայ ստիպուած է լաստակերտել իր ընդուն չնորհները, հոգի ընդերքէն կամ տնտեսական մրցադաշտէն քաղելով այն բոլոր բարիքները, որոնք իրենը ըլլալու չափ իր ցեղին արժէքները կը կրկնաւորեն հոգեալէն, թերևս ինքինքը պիտի զգայ այլապէս բարձրացած, եթէ երբեք իր ձեռնարկներուն վերև և անոնց խորը գտնէ Հայրենիքի Ազիին անզրէպ պաշտպանութիւնը։ Կ'ակնարկէնք այն ամէն կառոյցներուն, հաստատութիւններուն, որոնց գումարումովը պայմանաւոր է ամէն քաղաքակրթութիւն։ Հայ միտքը, հայ տնտեսութիւնը, հայ արդիւնաբերական ստեղծագործութիւնը՝ Հայրենիքի վրայ և համար։

Այն սերունդը որուն աչքերը բացուեցան առաջին Մեծ պատերազմի սարսափներուն վրայ, և ոսկորները ճանչցան մեր պատմութեան ամէնէն մեծ աղէտին ծանրութիւնն ու արհաւափրը, այսօր կը մնայ Սփիւրքի քաւարանեան պայմաններուն մէջ։ Մեր խօսքը այն երիտասարդ սերունդին է, որ իր ուսերուն է առած ազգային կեանքի իրական տագնապը, մէկ կողմէն շահելով իր մարմինը, միւս կողմէն տառապելով՝ իր հոգիին վրայ կարենալ պահելու ներսական պայքարը։

Հայոց Հայրենիքը այս տղոց հոգիին արտամութիւններուն վերև աշտարակուող զեղեցկութիւնն է։ Այդ է պատճառը թերևս, որ անոնք ամէնէն աւելի զգան այդ կառուցուող Հայրենիքին շքեղ հմայքը, անով լուսաւորելու իրենց ներկային նսեմութիւնները։ և անոր մէջ զրած իրենց երազներուն ու հաւատքին շերմութիւնը, շարունակեն արծարծուն պահել և սպասել՝ միշտ խանդու ու յուսալից, այն օրուան, երբ իրենց արի բազուկները ամբողջութեամբ պիտի տրամադրուին Հայ Հայրենիքին ոյժին, փառքին և զեղեցկութեամ։

Եւ ապա զալու համար մեր հողին ամէնէն աւելի մթաստուերող իրողու-

թեան՝ կրօնի աղատութեան, վստահ ենք այսօր առաւել քան երբեք, որ ան իբրև սկզբունք մը միայն պիտի չմնայ Խորհրդային կարգերէն ներս, այլ պիտի ընդունուի տակաւ, ըլլալու խարիսխը մարդուն իմացական, բարոյական և գեղագիտական ապրումներուն: Խորհրդային իրաւակարգը, մանաւանդ այս վերջին Մեծ պատերազմէն վերջ, ըմբռնել կը թուի թէ ժողովուրդի մը կեանքին սկզբունքը և իր ոյժին ու մեծութեան զաղտնիքը նիւթականը չէ և չի կրնար ըլլալ, և թէ ան կը կայանայ հրայրքին մէջ՝ զոր ժողովուրդները կ'ընծայեն հոգեկան արձէքներուն:

Կրօնը անհրաժեշտ ազդակ մըն է քաղաքակրթութեան. և Խորհրդային Ռուսիան, իրմէն ժամանակաւորապէս հերքուած այս մեծ ճշմարտութիւնը վերստին ընդունելու ճամբռն մէջ է, ինչպէս ցոյց կուտան ցարդ այդ ուղղութեամբ առնուած քայլերն ու զիջումները:

Ընդհանուր այս շրջափոխութեանը մէջ ապահով ենք որ Հայաստանեայց Եկեղեցին ալ պիտի չուշանայ վերագտնել իր դարաւոր խորհուրդին ամբողջ շքեղութիւնը, գառնալու համար Հայոց Հայրենիքին ոչ միայն հրայրքը, պատմական անոր կերպարանքին բիւրեղացումը, այլ և պիտի անդրադարձէ համազգային համարքիստոնեայ հոգեղէն իրականութեան նոր խորվճները, նոր բիւրեղացումները:

Մեր այս զգացումները՝ երեսյթներու մակաբերումներ ըլլալէ աւելի, իրականութիւններ են բարեբախտաբար, և խոր վստահութիւն կրնան ներշնչել բոլոր անոնց՝ որոնք Հայրենիքի սիրով և մտածումով ապրեցան և կ'ապրին:

Սփիւռքի Հայութիւնը իբրև Եկեղեցի, դպրոց, տնտեսութիւն և հանրային կեանք, կը շարունակէ պահել անշուշտ ինչ որ ունի ցարդ, եղածը նորոգելով և աւելի զարգացնելով, ժամանակի ընձեռած կարելիութիւններուն համեմատ: Ընել այս ամէնը՝ պարտք և անհրաժեշտութիւն է, որպէսզի Սփիւռքի Հայութիւնը իբրև ժողովուրդ և ազգ չկորսուի օտարութեան մէջ և մնայ միշտ անբաժան ոչ միայն իր Հայրենիքի զաղափարէն, այլ նաև անոր Փիզիք ամբողջութենէն:

Վստահ ենք թէ Հայաստանի իմաստուն վարիչները պիտի զիտնան այս ամէնը, իրենց հայրենաշէն մեծ ու սրբազն գործին մէջ չմոռնալու համար Մեծ Պանդուխսը՝ Սփիւռքի Հայութիւնը, որ հայրենի կիզիչ կարօտը իր հոգիին խորը, անընկճելի կորովով և ապազայի հաւատքով կը շարունակէ վեր բռնել իր ֆիզիքական շէնքին հետ միասին իր հոգիին կառոյցը, Սփիւռքի մշուներէն նայելով այն հեռաւոր բաղձանքին որ այսօրուան Հայոց Հայրենիքն է:

Սրտապնդիչ է հաստատել որ արտասահմանի մեր բոլոր զաղութներուն մէջ, օրուան կարգախօսը կը կազմէ Հայոց Հայրենիքին օգնելու մտածումն ու ճիզը, ինչ որ տարիներէ ի վեր գործով ու խօսքով կը յանային ընել արդէն Հ. Բ. Բ. Միութիւնը, Հ. Յ. Ռ., Հ. Ե. Ընկերակցութիւնը, Հ. Ե. Միութիւնը, և կարդ մը Հայրենակցական Միութիւններ և կազմակերպութիւններ, խորունկ և անայլայլ ուխտով, և հայրենի վերաշնուրութեան անսահանչ սիրով և հաւատքով:

Այսօր առաւել քան երբեք մօտ ենք այդ երազին իրականութեանը, որուն բաղձանքով կը բացուին այս օտարութիւններու մէջ իր խանձարուրը քակող մանուկին շրթները, և զոր չտեսնելու մղաւանչէն կը տառապին գերեզմանին մօտեցող պանդուխտ հայորդիները:

ԽՄԲ.

Ա.

ԿՐՈՆԱԿԱՆՔԱՐՈՉ ԾՆՆԴԵԱՆ

«Ոչ զոյց նոցա տեղի լիջեւանին»:
(Ղուկաս Բ. 7)

Սուրբ Ծննդեան տօնը մեծամեծ դասեր կը պարունակէ, ու շատ մը խորհրդածութիւններու կը մղէ մեզի: Մարիամի և Յովուէփի Նաղարէթէն Բեթղեհէմ գալը՝ ապացոյց է անոնց հնաղանդութեան: Նորածին Փրկչին չքաւորութիւնն ու ամէնքէն լքուած վիճակը՝ աշխարհի ճոխութեանց անձնատուր չըլլալ ու մեր վիճակին համակերպիլ կը սորվեցնեն մեզի: Հրեշտակներուն օրհներգութիւնն ու հրաշալի աստղին երեռումը՝ այդ աստուածային Մանուկին ամենակարողութիւնը կը յայտնաբերեն: Հովիւներուն ու մոգերուն այցելութիւնն ու երկրպագութիւնը՝ երկրպագութեան և սիրոյ մեր պարտականութիւնը կը լիշեցնեն՝ հանդէկ Աստուծոյ, որ այնքան սիրեց մեզի: Բոլոր այս խորհրդածութիւններն անշուշտընտանի են մեզ, զասնզի անոնցմով ներշընչուած ենք թէ կրօնական դաստիարակութեամբ և թէ եկեղեցին բեմէն մեր լուածքարողներով. այս խորհրդածութիւնները ներկայացած են նաև մեր միտքերուն ամէն անգամ՝ երբ աչքէ անցուցած ենք Ս. Աւետարանի էջերը: Ու հարկաւ մեր յափշտակուած հոգիները ի տես Քրիստոսի հրաշալի ծննդան մղուած են առաքինական զործերու, աղօթքի ու քրիստոնէական պարտականութեանց կատարումին:

Այսօր մեր Տիրոջ ծննդեան այս Սըրբավայրին մէջ, ուր անձամբ ներկայ զբանուելու երջանիկ բախտը ունինք, կ'ուղէի որ ուշադրութիւն դարձնէիք այն խօսքին վրայ, զոր բնաբան ընտրեցի քարոզիս. «Ոչ զոյր նոցա տեղի լիջեւանին». Անոնց տեղ չի կար իջեանին մէջ: Այս քանի մը բառերը երեան կը բերեն Հրեաներու տըմարդի խստաբառութիւնը, երեան կը բերեն նաև Հրեաներէն տարրերութիւն չունեցող քրիստոնեաներուն ապերախտութիւնն ու յանցաւոր անտարբերութիւնը:

Արեւելքի ժողովուրդներուն մէջ, ինչպէս մինչև այսօր, ասկէ առաջ աւ նուիրական օրէնք մը եղած է հիւրասիրութիւնը, ըլլայ նոյն խոկ թշնամիներու համար: Արդ, այդ հիւրասիրութեան պարտականութիւնը զանց առնուեցած Մարիամի և Յովուէփի համար, հակառակ որ անոնք չափազանց յոգնած էին ու մտատանջ վիճակ մը ունէին Բեթղեհէմ հասած ժամանակնին: Հակառակ որ ի տես ամենասուրբ Կոյսին պէտք էր որ մարդասիրութեան ու կարեկցութեան զգացումներով լեցուէին Բեթղեհէմի կիներուն սիրտերը: Հակառակ որ Մարիամի ու Յովուէփի ծննդավայրը Բեթղեհէմ քաղաքն էր, ու անկարելի էր որ Բեթղեհէմցիներուն ծանօթ չըլլային անոնց անունները, և ազգականներ ու բարեկամներ չունենային այնտեղ: Եւ սակայն գուռ մը անգամ չբացուեցաւ, ներս առնելու և հիւրասիրելու համար զանոնք: Իջեանը նոյն խոկ, որ Արևելքի մէջ ճամբրորդներու առջև բաց է միշտ, գոցեց իր գուռները անոնց երեսին. «Ճի ոչ զոյր նոցա տեղի լիջեւանին»: Եւ Մարիամ ու Յովուէփ ստիպուեցան զիշերը անցընել քաղաքէն գուրս, մթին ու խոնաւ քարայրի մը մէջ, որ ձմբան եղանակին իրքե պատրսպարան կը ծառայէր հովիւներուն ու անոնց հօտերուն: Այդպիսի տեղ մը ահա ծնաւ աշխարհի Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս:

Պիտի չփորձեմ Բեթղեհէմցիներուն այս անըմբոնելի տմարզութեան պատճառները փնտուել, թէ արգեօք ի՞նչ էին անոնք, անվստահութի՞ւն, ժլատութի՞ւն, եսասիրութի՞ւն թէ վրէժինդրութիւն, ասսոնք կարեռութիւն չունին այնքան, զասնզի Աստուած այսպէս նախասահմանած էր, և Մարիամ ու Յովուէփ անտրասունջ հնաղանդեցան Աստուծոյ կամքին: Մենք միայն բաւականանանք սքանչանալով Յիսուսի ծնողաց համբերութեան ու անոնց առ Աստուած ունեցած վստահութեան վրայ. առաքինութիւններ՝ որոնք ետքէն պիտի վարձատրուէին հովիւներու և մոգերու այցելութիւններով:

Այսպէս եղաւ Յիսուսի Քրիստոսի աշխարհ գալը: Ան որ ստեղծած էր ամենայն ինչ ու բացարձակ տէրն էր տիեզերքին, Ան որ պարզեած էր մարդուն կեանք, ա-

առջառմաթիւն, ստացուածք հայն, իր ծնած ժամանակ չի գտներ ո՞չ օրորաց, ո՞չ ապաստանաբան և ոչ ուրիշ յարմարութիւններ:

Բ

Աւ հիմա, ներկայ ժամանակիս մէջ ուր կ'ապրինք, փոխուած են արդեօք իրերը եւ լաւագոյն ընդունելութեան առարկայ կ'ըլլա՞յ արդեօք Յիսուս։ Հիմա կուտանն Անոր այն տեղը, որուն իրաւունք ունի կատարելապէս։

ա) Զեմ խօսիր անշուշտ հեթանոսներուն մասին, որոնք չեն ճանչնար Յիսուսը, ոչ ալ անհաւանիրուն մասին, որոնք կ'անարդեն ու կը հայնոյին զԱյն։ Բայց ինքնինքնին ճշմարիտ քրիստոնեայ համարողները ի՞նչ անչպէս կը վարուին Անոր հետ։ Ի՞նչ տեղ պահած են անոնք Անոր օրէնքներու պահպանութեան մէջ, իրենց կիանքին ու կենցաղաքարութեան մէջ, իրենց ալօթքներուն ու պաշտամունքներուն մէջ։ Ըստ երեսյթին այդպիսիները կը սիրեն ու կը յարգեն եկեղեցին, բայց հարցնենք թէ արդեօք Քրիստոս ներկա՞յ է այնտեղ, արդեօք Անիկա կը թագաւորէ մեր ընկերութեան ու ընտանիքներուն մէջ։ Կը վախնամ որ, ընդհակառակը, մենք ալ Բեթղեհէմի բնակիչներուն նման չենք ուղեր ընդունիլ Յիսուսը մեր մէջ, կը վանենք զԱյն մեր սիրտերէն, ու կ'արգիլենք որ Անիկա թագաւորէ ու ազգէ մեր հոգիներուն վրայ։

Այս, այսօրուան քրիստոնեանելուն մէջ մեր Տէրը Յիսուս Քրիստոս չունի իր տեղը, տեղ մը՝ որ արժանի ըլլայ Սսունձոյ, մեր Արարէն ու մարդկային ազդի Փրկչին։ Աւ պէտք է հաւատալ թէ առանց Յիսուսի չեն կրնար երջանկութիւն ու յաջողութիւն ձեռք բերել, միութիւն ու խաղաղութիւն ունենալ ո՞չ ազգերը եւ ոչ անհաւաները։

բ) Այն տեղը զոր Յիսուս իրաւունք ունի գրաւելու և զոր այժմ քրիստոնեաները ի մեծ վլաս իրենց կը մերժեն Անոր տալ, այդ տեղը Փրկիչը կը գրաւէ արդեօք մեր ընտանիքներուն մէջ։ Քրիստոնէական օրէնքներո՞վ արդեօք կը կառավարուին անոնք։ Կը կարդա՞ն անոնք Առորը Աւետարանը, ու կը պահե՞ն անոր պատուէրները։ Արդեօք Յիսուս է որ կ'առաջնորդէ հայրերն

ու մայրերը իրենց զաւակներուն կըրթութեան ու գաստիարակութեան մէջ։ Հաւատացէք որ այս տեսակէտով ալ մեր Տէրը իր տեղը չի գրաւեր մեր ընտանիքներուն մեծ մասին մէջ։ Ոչ գոյ նմա տեղի յիշեւանին։ Այս, Յիսուս չի թագաւորեք քրիստոնէական ընտանիքին մէջ, և երբ Յիսուս բացակայի անկէ, այլևս ո՞վ պիտի երաշխաւորէ ամուսիններու փոխադարձ սէրն ու հաւատարմութիւնը և զաւակներու բարւոք դաստիարակութիւնն ու հնազանդութիւնը։ Ո՞րքան գժրախատ են այն ընտանիքները, որոնցմէ հեռացած է Յիսուս, ու չ'օրհներ ու չի պաշտպաներ զանոնք այլես։

զ) Եթէ ընկերութենէն ու ընտանիքներէն անցնինք անհատներուն՝ ի՞նչ կը տեսնենք։ բոլորովին շատերը հեռացած են Փրկիչն ու չեն ճանչնար զԱյն, ու միշտ կը հայնոյին ու կը նախատեն Անոր ճշմարիտ հետեղողները։ Շատերն ալ բնաւ չեն խորհիր Աստուածորդիին վրայ։ Ամէնքը իրենց գործերուն և իրենց հաճոյքներուն անձնատուր՝ ժամանակ ու փափաք չունին Յիսուսի վրայ մտածելու։ Այդպիսիները, անշուշտ, ճանչցած են Յիսուսը իրենց մանկութեան ժամանակ, ու պիտի յիշեն թերեւս իրենց մահուան անկողինին մէջ, բայց հիմա որ և է տեղ չեն յատկացներ Անոր։ Ոչ գոյր նմա տեղի յիշեւանին։

Մենք ալ, իրեւ Յիսուսի Քրիստոսի անունով մկրտուածներ ի՞նչ տեղ պահած ենք Անոր համար մեր հոգիներուն մէջ։ Մե՞նք ալ արդեօք Անոր հետ կը վարուինք այնպէս՝ ինչպէս վարուեցան Բեթղեհէմի բնակիչները։ Յիսուս առաջին տեղը կը գրաւէ արդեօք մեր կեանքին մէջ, որուն արժանի է։ Օրուան մէջ ո՞րքան ժամանակ կը նուիրենք Անոր։ Անիկա կը պահանջէ որ առաւօտ և երեկոյ քանի մը պահեր աղօթենք իրեն, իսկ մենք կը հասուցանե՞նք մեր այդ պարտքը։ Եկեղեցիին զանգերը կիրակի ու տօն օրերը Աստուածոյ տունը կը հրաւիրեն մեզ։ Մեր առողջութիւնը թոյլ տուաւ մեզ երկար պտոյտներ կատարել երէկ, ու թերեւս գիշերն ալ թոյլ պիտի տայ երկար ժամանց մը ունինալ բարեկամիերու և դրացիներու հետ, բայց չի ներեր որ ժամ մը գոնէ Եկեղեցիին մէջ անցընենք։ ինչո՞ւ, որովհետեւ մեր սիրտերուն մէջ տեղ չունի Յիսուս։ Ոչ գոյր

նմա տեղի յիշեւանին։ Յիսուս մեր սիրատերուն դուռը կը բախէ և կ'ուզէ ներս մտնել ու հոն բնակիլ, բայց մեր սիրտերը զբաղած են սնոտի բաներով, աշխարհն ու սատանան տեղ բռնած են հոն, ու մենք չենք կրնար զանոնք հալածել, և Յիսուս չի կրնար ներս մտնել, վասնզի տեղ չկայ հոն իրեն համար։

Սուրբ Ծննդեան տօնը Աստուծոյ գէպի մեզ ունեցած անսահման սէլը կը յիշեցնէ։ Այս, Աստուծած կը սիրէ մեզ ու կ'ուզէ երջանկացնել մեզի, բայց երբ մերժելու ըլլանք իր սէրը, այն ատեն պիտի զրկուինք իսպառ Անոր այցելութենէն։ Բեթղեհէմ չուզեց ընդունիլ Փրկիչը, և Յիսուս անկէ ետք անգամ մըն ալ ոտք չկոխեց այնտեղ, ու իր հրաշքները, վարդապետութիւններն ու բարեգործութիւնները ուրիշ քաղաքներու մէջ կատարեց, ինչպէս կ'իմանանք Ա. Աւետարանէն։

Գգուշանանք, որ ասանկ դժբախտութիւն մը մեզի ալ չպատահի։ Յիսուս այսօր աշխարհ գալով կ'ուզէ այցելել մեզի, կ'ուզէ տեղ գրաւել մեր սիրտերուն մէջ։ Պատրաստ ըլլանք ուրեմն զինք ընդունելու վասնզի եթէ անգամ մը մերժենք, գուցէ այլևս չկարենանք ընդունիլ զինք, ինչպէս որ Բեթղեհէմ այնուհետեւ զրկուեցաւ Անոր այցելութենէն։

Աղօթենք ուրեմն այսօր, աղօթենք մեր բովանդակ կեանքին մէջ բոլոր անոնց համար, որոնք չեն ճանչնար կամ չեն ուզեր ճանչնալ Յիսուս Քրիստոսը։ Թո՛ղ մարդացեալ Աստուծորդին, որ ծնաւ այսօր փըրկելու համար աշխարհը, դարձի ու ապաշխարութեան շնորհը պարզեէ այդպիսիներուն։ Աղօթենք մասնաւորապէս մենք մեզի համար, և ողբանք՝ եթէ մինչև այսօր մեր բարի և մարդասէր Տիրոջ համար չենք կըրցած արժանաւոր տեղ մը պատրաստել մեր սիրտերուն մէջ։ Այն մսուրին առջև, որ իրեն իրեւ օրօրան ծառայեց, և ուրկէ անուշ ժպիտ մը կ'արձակէ գէպի մեզ, երգում ընենք սրտանց սիրելու զինքն ու ծառայելու իրեն այսուհետեւ։ Այս, առաջին տեղը յատկացնենք սիրտերնուս մէջ մեր քաղցր ու բարի Փրկիչին, ու բնաւ չկասկածինք թէ Ան ալ ի փոխարէն իր ընտրեալներու կարգին պիտի դասէ մեզ իր փառաւոր արքայութեան մէջ։

Մ. Ե. Ն.

ՊԵՏՔ Է ՔԱԼԵԼ ԵՐԱԶԻՆ

«Խնդրեցիք նախ զարգայութիւնն Ասունծոյ...» (ԱԿՍ. ԺԲ. 31)

Ճիշտ պիտի չըլլար անժամանակ եւ ուշացած համարիլ խորհուրդը այս պատգամին։ Ոչ այն օրերուն, երբ աստուծածաւ յին Վարդապետին քայլերը կը տանէին զինք իր վախճանին, իր Մեծ Զոհին, եւ ոչ այսօր, երբ այնքան հեռու կը զգանք մենք զմեզ, արքայութեան ստուերներուն իսկ նստելու։ Իր առաքելութեան վերջին հանգրուանին, իրեններուն հետ մտերիմ խօսակցութեան մը մէջ բսուած այս բարը, խորունկ բեկումէն կուգան իր փորձառութեան՝ իր ժողովուրդէն։ Ինք Աստուծոյ արքայութեան քարոզութիւնը բերելու էր եկած մարդերուն։ Ու երեք տարիներ չէին բաւած կարծես հասունցնելու համար կորիզը իր այդ խօսքին։ Այդ էր ամբողջ խորհուրդը իր մարդեղութեան։ Եւ ամէն հրաշք, ամէն բժշկութիւն Աստուծոյ արքայութեան ըղձանքը մատչելի զարձնող արարք մըն էր իրեն համար։ Այս կը հաստատէ նաեւ վկայութիւնը աւետարանիշներու, ամէն անգամ որ կը կրինեն — և միշտ բժշկութենէ մը, մարդկութեան տառապանքները ամոնքող արարքներէ յետոյ, — «Երջէր ի քաղաքու և քարոզէր զաւետարանն արքայութեան» (Մտթ. Դ. 27, Թ. 35)։ Հսել ուզելով այսպէս, թէ այդ աշխարհը, մարմինէն, ասոր ցաւերէն ազատագրուած հոգիներուն երանութեան աշխարհն է։ Եւ սակայն, այս բոլորին հակառակ, նոյն ժողովուրդը, զեռ քիչ առաջսիպեր էր զինք Անմիտ Հարուստին առակը պատմելու, զայրոյթով մը՝ անոր կուրացած հեշտասիրութեան, նիւթապաշտութեան գէմ։ Ու նոյն փորձառութեան արձագանգն է հիմա, որ տարբեր ձեւ ու տրտմութիւն կ'առնէ իր բառերուն և ձայնին մէջ, երբ կ'ըսէ իրեններուն։ — «Բայց խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ, և այն ամենայն յաւելցի ձեզ»։

Ի՞նչ հարկ կրկնութեան, տալու համար պարունակութիւնը այդ արքայութեան։ Անիկա խորունկ երազն է ամէն հոգիի։

Ճիշտ է որ թագաւորութեան մը խոր-

հըրդապատկերով մտածուած է յաճախ աւնիկա: Ճիշտ է որ անոր մասնակցողները, անոր բարիքներուն արժանի հանդիսացողները ընտրեալներ, իրենք զիրենք այդ վայելումին յարդարողներ են: Սակայն չէր կրնար աստուածային այդ թագաւորութեան ըմբռնումը այնքան սահմանափակ ըլլալ, միատարբ, միակ ցնդի մը զաւակներուն վերապահուելու աստիճան, ինչպէս էր ատիկա մտածումին մէջ հրեայ ցեղապաշտութեան: Միաւ էր մանաւանդ երկրաւոր թագաւորութեան մը գրութիւնը, մարմնական, տնտեսական, փառատենչիկ ակընկալութիւններու հետապնդումը տեսնել, և նպատակ իրբեք գնել անոր գոյութեան:

Արքայութեան երազը, աւելի խորունկ իրողութեան իր հանգամանքով, կ'ուրանայ ամէն մասնաւորութիւն՝ ազգային ու անհատական, կազմելու համար նոր որակով թագաւորութիւն մը, հոգիներու աշխարհէն: Եւ այնքան ընդարձակ՝ բոլոր մարդերը առնելու չափ իր հոգանին և իր վայելումին: Ո՞րն է այն հոգին, որուն երջանկութիւնը կարենար անխառն մնալ, անդրադարձովը իր աչքերուն դիմաց պտտող ցաւերուն, մարդկային տառապանքներուն, երջանկութեան ծարաւը ունեցող իրեն նըմաններուն: Երջանկութիւնը գերագոյն բարութեան հոգեվիճակն է, զեղումն է: Ի՞նչպէս ըմբռնել որ այդ լիութեամբը զեղուն հոգիներ, իրենց երջանկութեանը մէջ իսկ, չտառապէին ցաւակոծ հոգիներու հաշորյուն: Երբ հաւանական ալ է որ այս վերջիններու կարգին գտնուին սիրելիներ՝ իրենց յիշատակի խորչերը յարդարած երանութեան վայելքը ապրող իրենց հոգեկան դրութենէն ներս:

Այս է պատճառը որ արքայութեան ըշձանքը նկատենք ամէնէն խորունկ երազը ամէն հոգիի: Նոյնիսկ անոնց՝ որոնք պիտի վարանէին անոր կարելի իրականութիւնը ըմբռնելէ, խոստովանելէ: Ո՞վ պիտի չուզէր քալել այդ երազին: Զէ՞ որ ինքզինք ամբողջ, լեցուն զգալն է ատիկա: Զերծ՝ պակասին, կարօտին տառապանքէն: Աշխարհ մը, ուր բարութիւնը քաղցր կամար մը ըլլայ մարդոց նայուածքէն, մտածումէն, կեանքէն, գործերէն բխող: Ուր, Զարէն հարուածեալը կրկնապէս չխոշտանգուի մարդերէն: Ուր, ամէն իրէ, ամէն էակէ

աստուածային շունչ մը գոլորշիանայ, թեթև, անրջային, իրական: Ուր, մարդերը նուաղ տառապէին մարմինէն, ասոր լայն տիրապետութենէն: Ու ասիկա այսպէս՝ յաւլիտեաններով:

Ու ասիկա այսպէս՝ նաև յաւլիտեաններէն:

Ի՞նչ է իմաստը կրօններուն: Ինչո՞ւ կը տարուինք զանոնք ընդոծին համարելու մարդուն էութեան: Կա՞յ ժողովուրդ մը որ իր երջանկութեան խորունկ ըղձանքը պատարագ դրած չըլլայ խորանին վրայ իր պաշտումներուն: Մինչև իսկ շատ վարերէն սկսելով մարդկային ծագումին: Ի՞նչ են խոստումները բոլոր պիտութեանց, ձգումները բոլոր քաղաքակրթութիւններուն: Խաղաղութիւնն, բարօրութիւնն, լուսաւորութիւնն: Չէ՞ որ ասոնք միւս անուններն են արդէն երջանկութեան: Բայց մինչև քրիստոնէութիւնն, ամէն կրօն, ամէն պետութիւնն, ամէն քաղաքակրթութիւնն անբաւարար է եղած ամբողջական ընդգրընկումի մը, իրագործումի մը, այդ ակնկալութեան: Ասոնցմէ իւրաքանչիւրը մէկ մէկ թե միայն լուսաւորած, մէկ մէկ ակոս միայն խոր փորձած է բանալ երջանկութեան ըմբռնումէն: Ու ատով՝ թերի: Ու ատով՝ մարդերը կրակին մէջը ապրեցուցած՝ անդիմադիր այդ ծարաւին:

Քրիստոնէութիւնը կուգար ճիշտ շեշտը գտնել տալու մարդկութեան, իրեւ միակ գաղտնիքը անոր ծարաւին յագեցումին: Դարերու ճիզը, քաղաքակրթութիւններու ամբողջ փորձերը չէին յաջողած հաճեցնել մարդկային հոգին: Հրեայ ժողովուրդը ամէնէն աւելի զգացեր էր տառապանքը այդ որոնումին: Ո՞չ մէկ առանձնաշնորհում, ոչ մէկ մարդկօրէն մտածելի միջոց կարող չէր եղած տալ իրեն համայնական երանութեան մը վայելքը: Ո՞չ իր զոհերը՝ ենովային հաշտ աչքը հովանաւոր ունենալու համար անտառտի, թափառումի, գերութեան իր տարիներուն: Ո՞չ իր բանակները՝ յանուն Աստուծուց փառքին, իր ալ տիրապետութեան տեխնագիտութիւնները գոհացնել կարենալու համար: Ո՞չ իր վաճառականութիւնը՝ «մեղր ու կաթ»ով առատացնելու չափ ամայութիւնները իր լեռներուն ու դաշտերուն: Սակայն, գարերու այդ նժդեհութիւնը, պատրաստեր էր կարծես զայն աւելի հեշտ հե-

ուազգալու համար ճամբան, ուրիշ զինքը
տանիլ պիտի փարձեր, իր՝ ինչպէս ամբողջ
մարդկային հոգիին հաղորդ մէկ զաւակը
իր արիւնին։ Հոգ չէ թէ պիտի տառապե-
ցընէր զայն, իր բթացած կարողութիւննե-
րուն ըմբռնողութեամբը։ Աւ հազիւ ալ կա-
րենար բացուիլ գալիւթացի նոր Տեսանողէն
աւետարանուած երանութեան պատզամին։

Դարեր սակայն, ու քաղաքակրթութիւններ, պիտի քալեն այդ նոր տեսիլքին ուղիղով։ Ու մինչև այսօր։

Անոր մէջ ճախութիւն, վայելք, զրամ, փառքեր, նիւթական զիւրակեցութիւն, բոլոր վերածուած են իրենց նուազակոյն բայց ճշմարիտ արժէքին։ Արքայութիւնը, Յիսուսի մտքին մէջ, հանգիստարանն է հաւամապարփակ ապրումներու, ուր չեշտը ըլլար ոչ թէ նիւթեղենին այլ հոգեղէն իրուզութիւններու վրայ զրուած։ Նորաստեղծում մը, վերգնահատանք մը արժէքներու։ — Սիրել թշնամին, յազմել չարին բարիով, տառապիլ ցաւերովը իր նմաններուն, հրճուիլ երանութեամբը քոյր-հոգիներուն, մօտենալ մարդերուն իրեն ընտանի, նոյն երազէն համագրաւուած էակներու։ Նոյն Հօրը պատկերը տեսնել անոնց մէջ, ու ճանչնալ իր եղբայրօք, առանց ժամանակի ու ցեղի խտրութեան, և այսպէս համայնական զգացումով մը ապրիլ լուսաւոր աշխարհը նորաստեղծեալ այս թագաւորութեան։ Ահա արքայութիւնը, Խորունկ երազը ամէն հոգիի, Ազատութեան, հաւասարութեան, եղբայրութեան դարաւոր խոհական բոլոր մեծ շարժումներուն, տարերային պոռթկումներուն։ Արպէսզի դարրին կեղեքումները, վերնանդասակարգային խտրութիւնները, հետախաղ ջնջուին ունեսորի-չունեսորի պայքարներու արդիւնք աններդաշնակութիւնները։ Ու մարգոց հոգին ապրի հրճուանքը աննիւթ իր աշխարհին։

Համայնական այս երանութեան տիրա-
կան կարօտը ունին տողերը վերջին դարու
մեր ամէնէն թաւշային, անուշ զգացում-
ներու, անրջային հպումներու վայելքը անձ-
կացող քերթողին, երբ «Արդի Մարդուն
Հայր Մերը» կը բանածէ և աղօթելու . —

«Տուր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական ժաղիկներու պէս զայն ծովմբն նամքուս փրանի նայուածիներուն մէջ ամենուն եւ ամեն օր ...»

Աւ հասուն համերգի մը պէս, աղօթքը
ծխածան մեղեղին կը զառնայ զանգակնե-
րու, ճրագներու, բաշխուող երանութեան,
գութի՛ հանդէպ զրկեալներու, տառապող-
ներու: Կենսայորդ արել, անձրի ծերե-
րուն ու մանուկներուն, զաշտերուն, գեղ-
ջուկներուն ու բանուորին: Եւ այս բոլորին
հետ, անանձնական ուրախութիւն մըն է որ
կը լեցուի հոգիին մէջը քերթողին, ինչպէս
նաև ամէն սիրող էակի, իր աղօթքի աւար-
տումին, գերագոյն հրճուանքի մը մէջ կա-
մարելով մրժունջը:

Տուր իսծի, ՏԵՇ, ուրախութիւնն անանձնական ժողովի՝ հոգույն մէջ ամէնուն, համայնքական Հոգույն ամէն մասնիկնեռուն մէջ՝ ամէն ժամ:

Ճամբաներէն, ու զետերէն, ու դաշերէն.

0. Gswm. Übrkñi, m. lbn. Übrkñi, m. ñmrkñi.

Տաճիբներէն, ու սուներէն, ու դուռերէն:

Տնաւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական:

Աստուծոյ արքայութիւնն է ասիկա,
երկրի վրայ:

ի՞նչպէս ըսել սակայն, թէ աւելի եր-
ջանիկ ենք մենք այսօր, որովհետեւ մէր
քաղաքակրթութիւնը հարիւ բարպատիկ ա-
րագ ու առատ կը հայթայցիէ մարդուն բո-
լոր նիւթական կարիքները: Ի՞նչպէս հպար-
տանալ ճարտարապետական մէր ամէնէն
գեղեցիկ կառոյցներով, պալատներով: Մէր
ճարտարաբուստին վերջին կատարելազոր-
ծութեներով, նորաձեւութիւններով: Չենք
խորհիր թէ հոգ խոկ է մէր գժբախտութիւնը
Մախուածներ ենք մենք մէր ձեռակերանե-
րուն: Մէր վախճանին հետքը կարսնցուցած
նաւորդներ: Արովհետեւ մէր բոլոր կարո-
ղութիւնները համագրաւուած են նիւթին,
վայելքին, փառքին տիրակալութենէն և
ասոնցմէ բխող թելագրանքներէն: Տեղ
ունի Աստուծոյ արքայութիւնը այսօրուան
արքէքներու տախտակին վրայ, այնպէն
հնաւէս էր անհետ առահոգառար մռածու-

մին մէջը երկնառաք Վարդապետին: Ճիշտ
է որ աշխարհ կը զիմէ զէսի աւելի հան-
գըստաւէ տութիւն, զիւրակեցութիւն: Բայց
նուաճելու համար զանոնք, եթէ ոչ են-
թարկուելու համար անոնց: Սակայն ե՞րբ
վայելքին կիրքը կրցեր են մարդիկ յագե-
ցընել: Մարդիկ յաճախ անոր ապարանքին
կ'ուղղուին, բայց քիչ անգամ կը յաջողին
ապահովել իրենց յաղթանակը անոր վրայ

Եւ յիտոյ, նոր չէ որ ամէնէն ծանր տագնապները ամէնէն չքեզ ապարանքներու մէջ իրենց շարաւը կ'ամբարեն։ Ի՞նչ կը միայ այսօր, մեծ փառքիրէն, մողովուրդներ իւրենց գէնքերու սարսափիններք գողացնող յոխորտանքներէն հսկայ կայսրութիւններու, համբաւաւոր քաղաքակրթութիւններու։ Ոչ իսկ գամբարան։ Անոնք ապրեցան, իրենց զրաւները գնելով ճզճիմ եսութեանց, անձնահաճ վայելքներու վրայ, ու ժամանակը եկաւ սրբել անոնց անունէն ամէն բան։ Ու կը մատածենք՝ ի՞նչ կը պակէր անոնց՝ զրամէն, ճոխութիւնէն, հանգիստէն, վայելքէն, փառքիրէն, նիւթական ամէն կերպ դիւրութիւններէն։

Ի՞նչ կը պակսի նաև մեզի, այդ բուլորէն։

Ու կասկածը կուզայ մեր չըթներուն՝ հարցնելով թէ ո՛ւր պիտի առաջնորդէ մեզ մեր քաղաքակրթութիւնը։ Զենք կրնար հաւատալ որ մարդիկ ուրացած ըլլան իրենց հոգիններուն խորոնկ երազը։ Դէպի զարգացում, ազնուացում, լուսաւորութիւն գացող մարդկութեան մը մէջ ի՞նչպէս լմբանել խաւարեցումը կարելի պայծառութեան, երջանկութեան։ Եւ արքայութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ ազնուացումը մարդկութեան։ բարձրացումը իր «խոսի կեանքէն», «անտառնային ճարակումէն» զէպի ոլորտը հոգեղէն էակին, որուն պատկերովը ստեղծուած է ինք՝ մարդկութիւնը։ Ու Աստուծոյ արքայութիւնը մարդուն արքայութիւնն է աշխարհի վրայէն իսկ։ Անոր հոգիին համեցումը։ Եւ այդ իսկ պատճառաւ եթէ ոչ միակ, առնուազն ամէնէն կարելի ու ներելի սփոփանքը՝ զոր մարդկութիւնը կրնայ տալ ինքինքին։ Աստուծոյ Արգիին արտամութիւնը և խորոնկ թեկումը կուզար հակունեայ այն փորձառութիւնէն, զոր ուշնեցաւ Ան իր չունչին և իր խօսքին ամէն օր զիմող բազմութիւններէն։ Ու աւելի գառնութիւն կը խառնուէր այդ փորձառութեան, տեսնելով որ ամբողջ Փարիսիցի, օրինական ու կրօնաւորական գասակարգը, խրած կը մնար աւանդական իր մոլորանքին մէջ։ Նախանձախնդիր՝ իր գարաւոր ու զիմապեղ իրաւասութիւններուն, ձեւապաշտ, ամլուկը անդամ քամող», կեղծաւոր, կեղեքող, օրէնքին հոգիէն պարպուած։ Արոնց «խմորէն» զգուշացուցած էր արգէն իր աշա-

կերտները, շարունակողները չդառնալու համար անոնց աւանդութեան։

Ի վերջոյ ուրիշ է զիտնալը, և ուրիշ՝ իր գիտութիւնը ապրիլ կարենալը, զայն կեանքի վերածելը։ Բնկերութիւններու, հաստատութիւններու ճակատագիրը գարել, գտնելն է յաւիտենական, անսուտ շեշտը կեանքի ըմբռնումըն, անով իմաստաւորելու համար թաւալուն մեղեգին անհատներու համբուած օրերուն։ Ուրիշ խօսքով, մարդուն էութիւնը իր ճակատագրին առաջնորդելու այդ արարքով իսկ իրազործել է տեսլիքը արքայութեան։

Այսօր ալ նոյն քան իրաւ է այդ երազը։

Հակառակ մեր բազմահոգ օրերու ըզբաղանքներուն, քիչ է թիւը մարդոց, ուրոնց ձեռքը չերկարի ուրիշի մը արտին, անոր քրտինքովը հասկ կապած ցորենը չխլելու։ Որոնք երանութեան մը երկինքը այնքան մօտիկ զգան իրենց հոգիին, երբ տուն գարձին լիշեն օգնութեան ձեռք երկարիլ իրենցմէ դէպի ինկած մը, կեանքէ վրիպած մը։ Որոնք, տակաւին, գիտնան, հակառակ դրամին անհաշուելի երկրպագուներուն, հաւատարիմեներուն, անոր շացնող փառքէն չհարապուրուող տրտում հերոսներու պէս, իրենց աղքատութեանը մէջ իսկ իրենց հոգիին պարզութիւնը, անուշութիւնը, ազնուականութիւնը գերագոյն ըսփոփանք մը իրեկ պտացնել աշխարհի երեսին։ Այս բոլորին հետ, ու փաստովը մանաւանդ անոնց՝ օրոնք հաւատացողներ են այս աշխարհի վրայ իրենց հիւրեր ըլլալուն, հանգերձելով ալ իրենքվիրենք միւս կեանքին՝ որ յաւիտենութիւն մըն է ասկէ անդին շարունակուող, ի՞նչպէս կրնանք փակել գանելը մեր սրտերուն։ Պէտք ունէինք, քսան գարեր առաջ պատգամուած այդ հրաւէրին պայծառ և ստոյդ խորութիւնը տեսնելու համար, ապրիլ կրակը, խորտակումը մեր օրերու խոււարին։ Ո՞րքան տարբեր պիտի ըլլալը ճակատագիրը մեր տարիներուն, եթէ յաղթանակներու, զէնքի, վայելքի, փառամոլ տեսնչանքներու, ընչասիրութեան խլուրդներ, և մեր շուրջը ամէն օր իրենց աւերակոյտը յաւերժացնող ճըլճիւթիւններ չնսեմացնէին երազը մեր հոգիներուն։ Բացասիկ արթնութեամբ ընտրեալներու միայն յաջողուած է իրենց միսէն, իրենց ջիղերէն առաջ հագած ըլլալ

ՄԱԼԸ ԵՒ ԱՆՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Յաւիտենականութեան եւ ժամանակի յարակարձիքը (paradoxe) գոյութիւն չունի միայն յարաբերաբար աշխարհի ըլլալիքին. ան կը հաստատուի նաև անձին վախճանին պարագային: Արդարեւ, կ'առարկայացնենք յաւիտենական կեանքը, զայն կը նիւթացնենք և կը շփոթենք անդրգերեցմանեան գոյութիւն: Ան կ'երեւայ մեզի իրբեւ վայր (sphere) մը էակին, պարզապէս բոլորովին տարբեր մերինէն: Բայց յաւիտենական կեանքը, եթէ զայն առնենք ներքնապէս, իր սկզբունքովի խակ ունի բոլորովին ուրիշ յատկութիւն մը քան բնական եւ նոյնիսկ գերբնական կեանքը՝ նկատի առնուած իր ամբողջին մէջ: Անիկա ոգեկան կեանք մըն է, ուր յաւիտենականութիւնը կը սկսի տակաւին ժամանակին մէջ: Եթէ մարդուն կեանքը ամբողջութեամբ փոխակերպուած ըլլար ոգեղէն կեանքի, եթէ ոգեղէն սկզբունքը վերջնականօրէն նուածէր հոգեկան եւ մարմնական տարրը, մահը՝ իրրեւ բնական իրողութիւն, երբեք պիտի չյայտնուէր, եւ յաւիտենութեան

ժամանակը, ու մոտած ըլլալ տարբեր տարբեր բարեխառնութիւններուն մէջը անոր ջուրերուն: Եւ սակայն ամէն մարզու տըրուած է հաշտ ապրիլ ինք իր մէջ, ինք իր հոգիին հետ, զայն տանելու համար իր ամէնէն մաքուր վախճանին, լոյսին, համայնական Սիրոյն, երջանկութեան: Որովհետեւ այդ է լիութիւնը, արքայութիւնը հոգիին. նոյնքան երկնային, աստուածային, որքան մեր էութիւնը: Անփոխարինելի այս լիութեան, ներքին հրճուանքին գիւտը կ'ընէ նաև միւս պատգամը Յիսուսին — «Արքայութիւն Աստուածոյ իներքս ի ձեզ է» — մատնանշելով աւազանը որուն ճոխութեան, վայելչութեան ի սպաս պէտք է գործածուի ամէն չնորհ, ամէն կարելիութիւն որ երկնքի արքայութենէն երակ մը կը բանայ բացասանին վրայ մեր հոգիներուն:

ԹՐՈԳՈՄ Ա.ԲԵՂԱՑ

մէջ անցքը առանց միջնորդի տեղի պիտի ունենար: Վասնզի, յաւիտենական կեանքը ապագային կեանքը չէ, այլ ներկայինը, վայրկեանին խօրութեանը մէջ, ուր կ'իրագործուի ճշգրտօրէն ժամանակին խզումը: Այս թէ ինչո՞ւ այն յղացքը, որ կը զնէ յաւիտենականութիւնը ապագային մէջ, իրբեւ անգրգերեցմանեան գոյութիւն, որ ժանուան կը սպասէ, ժամանակին մէջ հաշորդակցելու համար աստուածային կեանքին, կը պարզէ բարոյագիտական սխալ մը: Ապագային մէջ, ի վերջոյ, յաւիտենականութիւնը պիտի չհաստատուի երբեք, որովհետեւ ան իր մէջ գէշ անվախճանութիւն ունի միայն: Եւ գժոխքն է միայն որ կրնանք նկատի ունենալ այս կերպարանքին տակ: Կեանքի առարձակման (projection) այս գագարումը ժամանակին մէջ, կը համապատասխանէ, ըստ Հայտէկըրի եղբարանութեան (terminologieին) ժամանութեան այն գագարումին, որ ժամանակի մէջ կը բերէ էակը: Մահը, գուրսէն գոյութիւն ունի իրը որոշ բնական իրողութիւն մը, որ կը յայտնաբերուի ապագային մէջ, և կը յայտնէ ժամանակաւորութիւը (temporalisationը) էակին, ու կեանքի առարձակումը ապագային մէջ: Ներսէն, այսինքն յաւիտենականութեան տեսակէտէն, յայտնուող վայրկեանի խօրութեան մէջ, մահը գոյութիւն չունի, ան մէկ պահն է միայն յաւիտենական կեանքին, կեանքի խորհուրդին: Մահը գոյութիւն ունի միայն աստեղորդին մէջ, ժամանակաւորութեած (temporalisé) էակին մէջ, որուն կարգին մէջ: Եւ որպէսզի օգեկանութիւնը զարգացնենք, մարդը զնենք գոյութեան ուրիշ կարգի մը մէջ, հաստատելու համար յաւիտենականը կեանքին մէջ, պէտք է մահը ընկճնեք, զայն յաղթահարենք: Բայց մահը ընկճնելը և յաղթելը ըսել ուղել չէ զայն մոռնալ և անզգայ զառնալ իր նկատմամբ, այլ զայն ընդունիլ օգիին մէջը, ուր կը գաղրի ըլլալէ բնական իրողութիւն մը ժամանակին մէջ, զառնալու համար յաւիտենութենէն բխող իմաստի յայտնութեան:

Անձնական, ինչպէս տիեզերական յայտնութիւնները, ազգերու և քաղաքակրթութիւններու, ինչպէս ընկերութեան և պետութեան պատմական ձևերու մահերը, կը յայտնեն կեանքի յաւիտենական ճշմար-

տութեան և իմաստի սչարազետո ոգեկուչում մը: Անոնք կը յայտնեն օրէնքներու ընդդիմ իրենց հետութիւնը կամ իրենց ձեազիզծումը, և կը համապատասխանեն իրենց վրիժառութեան որ կը նիւթուի աղջամուղջին՝ մեղքին մռալ տարբին մէջ: Այս է իմաստը բոլոր մեծ յեղափոխութիւններուն, որոնք յայտնութիւն մըն են պատմութեան ծոցին մէջ, ինչպէս նաև իմաստը բոլոր աղիաւոր և եղերական գէպերուն, որոնք կը պարզուին անհատ էակներու կեանքին մէջ: Ների գալուստին և անոր իշխանութեան վերաբերեալ յայտնութիւնը նշան մըն է այն բանին, որուն կը սպասէ աշխարհ, եթէ չուզէ կամ չըշկարենայ կիրարկել քրիստոնէական ճշմարտութիւնը: Այդպէս է նաև ոգեղէն կեանքի օրէնքը: Եթէ ազատութիւնը չիրագործէ Քրիստոսի թագաւորութիւնը, անհրաժեշտութիւնը կ'իրագործէ ներին թագաւորութիւնը: Մահը կը յարձակի աստուածային ճշմարտութեան եւ իմաստին համաձայն, ինքզինք չիրագործող կեանքին վրայ: Տարօրինակ յարակարծիքով մը անիմաստին յաղթանակը կը յայտնէ իմաստի բարձրացում մը մեղաւոր տարրին մէջ: Ահա թէ ինչո՞ւ մահը, ինչպէս նաև մարդուն մահը քան թէ աշխարհինը, չի նշանակեր մի միայն մեղքի արգիւնք մը և մութ ուժերու գերակայութիւն մը այլ նաև զուզահեռաբար՝ իմաստի յաղթանակ մը, աստուածային ճշմարտութեան ողեկոչում մը, որ կը մերժէ սուտին յաւիտենական ըլլալը:

Ենթազրաբար խօսելով, Ֆէօտորօֆիրաւոնք ունի թելագրելու թէ աղէտը վերջին Գատաստանին և վախճանին խուսափելի պիտի ըլլար, եթէ մարդկութեան ժողովուրդները իրարու միանային եղբայրաբար հասարակաց գործին համար, որ է քրիստոնէական ճշմարտութեան իրագործումը, և բոլոր մեռնողներուն յարութիւնը: Բայց մարդկութիւնը չափագանց հեռու խորացած է սուտին և չարիքին ճամբաներուն մէջ, և իր գատաստանը արդէն սկսած է: Անրանաւոր և նահանջող (τέοντικε) ազատութիւնը արգելք կ'ըլլայ Ֆէօտորօֆի Շրագրին իրագործման, որ ստորագնահատած է, չափազանց լաւատեսութեամբ, չարիքին ուժերը: Սակայն և այնպէս, բարոյականի հրամայականը կը մնայ յաւիտե-

նութեան հաստատումը, և պիտի թարգմանուէր հետևեալ տարագով.— Այսպէս մը վարուէ որ յաւիտենական կեանքը բացուի քեզի համար և գուն հեռարձակես իր գօրութիւնը ամբողջ ստեղծագործութեան վրայ:

Բարոյականին գիտութիւնը պարտաւոր է վախճանաբանական դասնալ: Անձնապաշտարայականին համար, մահուան և անմահութեան հարցը կը դառնայ առաջնական: ան ներկայ է կեանքի իւրաքանչիւր գործի (acteի) և իւրաքանչիւր երեսովին մէջ: Մահուան հանգէպ անզգայութիւնը և անոր մոռացումը, որոնք երեան կուզան ժթրտ և իր գարերու բարոյականներուն մէջ, ցոյց կուտան անձին և անոր յաւիտենական ճակատագրին հանդէպ անզգայութիւնը մը: անըզգայութիւնը կը կուրկ է լրջութենէ և խորութենէ. թէն ան կրնայ գործել գատաստաններով և զընահատումներով, բայց կը մոռնայ վերջնական գատաստանը և գնահատումը, այսինքն վերջին Դատաստանը: Բարոյականը պէտք է զարգանայ ոչ միայն այս անվախճան կեանքի երջանկութեան եւ բարին հեռանկարովը, այլ նաև անխուսափելի մահուան, անոր վրայ տարուելիք յաղթանակի, յարութեան եւ յաւիտենական կեանքի հեռանկարովը: Ստեղծագործ բարոյականը կոչուած է ոչ չմիայն ժամանակաւոր, անցողական, ապականացու արժէքներու ստեղծագործութեան, որոնք կը նպաստաւորեն յաղթանակը յաւիտենականութեան մէջ, և կը պատրաստեն մարդը վախճանին:

Վախճանաբանական բարոյականը ամենեին չի յայտներ գործունէութեան և ստեղծագործութեան մերժում մը: Կրառարկան յայտնութենական միտումներ կը պատկանին անցեալին, անոնք կը յայտնեն կեանքի անկում մը և լքում մը: Արդարե չենք կը սպասէլ անձործ օնութեան (inaction) մէջ, կարօտին, անձկութեան և սարսափին մէջ, վախճանի գալուստին, և աշխարհի ու մարդկային անձին անհետացու-

մին : Վախճանաբանական բարոյականը, հիմնուած յայտնութենական փորձառութեան վրայ, կը պահանջէ ուրեմն մարդէն գործունէութիւն մը և անսովոր ուժգութեամբ ստեղծագործութիւն մը : Քրիստոսի երկրորդ գալուստը կ'ենթագրէ պատրաստութիւնը վախճանին, վախճան մը, որ կախում պիտի ունենայ մարդուն ստեղծագործող գործունէութենէն և պիտի սահմանուած ըլլայ տիեզերական գործութեան (processus) դրական արդիւնքներէն : Չենք կրնար այլ ևս սպասել կրաւորապէս ինչպէս Յիսուսի, նոյնպէս նաև ների թագաւորութեան : Պէտք է գործունէական և ստեղծագործ կերպով մը կռուիլ ներին թագաւորութեան գէմ, պատրաստելու համար Քրիստոսի թագաւորութեան գալուստը, զօր միայն օրուունք պիտի յաջողին յափշտակել : Յայտնութենական մարդարէութիւններու կրաւորական յղացք մը պիտի համապատասխանէր նախասահմանութեան մը, ճակատագրապաշտութեան մը : Արդ, որդեզրէ իրենց նկատմամբ այս կրաւորական նախասահմանութիւնը, զանոնք իրաւականացնել, զանոնք իրաւականացնել (naturaliser) է, ուրանալ է մարդկային ազատութեան և աստուածային նախասահմանութեան խորհրդաւոր հաշտեցումը : Եւ նկատել մեր յատուկ մահը կամ ամէն անհատի մահը այդ կերպարանքին տակ, այսինքն իրրե թէ գործուած ըլլար նախասահմանեալ, ճակատագրական, բնական իրողութեամբ մը, իյնալ է նոյն սխալին մէջ :

Պէտք է ընդունիլ մահը լուսաւոր եւ ազատ կերպով մը, առանց ընդզելու անոր անհմաստութեան գէմ, բայց այս ընդունելութիւնը կը համապատասխանէ ճզգրտօրէն ողիի ստեղծագործ գործունէութեան մը : Շինծու գործունէութիւն մը գոյութիւն ունի, որ մահուան գէմ կ'ելլէ և կը մերժէ զայն ընդունիլ : ան կը ծնի անհանդուրժելի տառապանքներ : Եւ գաւերական գործունէութիւն մը կայ որ կը ներկայացնէ մահուան վրայ յաւիտենութեան յաղթանակ մը : Ի վերջոյ, գործունէական ողին չի վախճանար մահէն, սարսափը և անձկութիւնը, զոր ան կը զգայ անհուսորէն, աւելի մեծ մէծ են քան անոնք կը զգայ անհուսորէն, աւելի մեծ մէծ է զայն զոր մահը կը պատճառէ, այլ այն, զոր կը ստեղծէ զժոխքին և մահուան զաղափարը, բերածն է, որուն կը յանդի մահուան հարցը անխռուսափելիորէն : Մահուան վրայ տարուած յաղթանակը վերջնը չէ . ասիկա տակաւին շատ կը հակի գէպի ժամանակը : Վերջին և վճռական յաղթանակը գժոխքին վրայ տարուած յաղթանակն է, որ ամբողջութեամբ կը հակի գէպի յաւիտենութիւն : Այսպէս մէսոսորօֆի տուաղարկած՝ մենեները կեանքի կոչելու պարտականութենէն աւելի մեծ ու արմատական պարտականութիւն մը կայ, որ կը կայանայ գժոխքը յաղթահարելուն մէջ : Գերագոյն նպատակը որուն պէտք է ձգտի բարոյականը, ստեղծագործ ազատագրումն է բոլոր անոնց, որ կը տառապին և կը կրեն չարչարանքները՝ ժամանակաւոր կամ «յաւիտենական» . ազատազրում մը, առանց որուն իրագործումին, Աստուծոյ թագաւորութիւնը չի կրնար հաստատուիլ :

Բայց մարդու անձկութիւն մը կը զգայ յաւիտենական գատաստանին և վախճանին հանգէպ, զորս կը կատէ իր յատուկ ստեղծող ծիրեկրուն : Եւ մենք կը բախտինք հոս հոգեբանական յարակարծիքին, որ շատերուն համար կը մնայ անձանօթ կամ անիմանալի :

Ներքնապէս և անմիջական կերպով, իր քայլքայելիութիւնը և իր յաւիտենականութիւնը ապրող գործունէական ողին, կրնայ ոչ միայն չվախնալ մահէն, այլ կրնայ նոյն խնկ զայն ըդառլ, և նախանձիլ անոնց որոնց համար մահը ամէն բանի վախճան մը կը գնէ : Ոխալ և մակերեսութական է կարծել թէ անմահութեան վրայ հաւատքը միշտ մխիթարիչ է, և թէ ան էակները կը զնէ նախանձելի և առանձնաշնորհեալ կացութեան մը մէջ : Որովհետև եթէ ան կը բերէ խաղաղեցում մը, որ կը նպաստէ կեանքին, կը բեռնաւորէ նաև զայն անսահման պատասխանատուութեամբ մը : Ուրեմն իրաւամբ կրնանք ըսել թէ անհաւատները կը թիթեցնեն իրենց կիանքը բեռէ մը, զօր կը կրեն հաւատացեալները : Որովհետև այն գաղափարը թէ իրենց անիմաստի կեանքը, իրաւակուած չէ իրենց անիմաստի գատաստանին, արդէն մխիթարութիւն մըն է : Եւ արդարէ, անոր հանդարտութեան և անոր չափազանց մէծ զիւրութեան համար է որ անհաւատութիւնը մեզի կասկածելի կը թուի : Ճշմարիտը ըսելու համար, անհանգուրժելի և ծայրահեղ անձկութիւնը չէ այն, զօր մահը կը պատճառէ, այլ այն, զօր ստեղծէ զժոխքին և մահուան զաղափարը, բերածն է, որուն կը յանդի մահուան հարցը անխռուսափելիորէն : Մահուան վրայ տարուած յաղթանակը վերջնը չէ . ասիկա տակաւին շատ կը հակի գէպի ժամանակը : Վերջին և վճռական յաղթանակը գժոխքին վրայ տարուած յաղթանակն է, որ ամբողջութեամբ կը հակի գէպի յաւիտենութիւն : Այսպէս մէսոսորօֆի տուաղարկած՝ մենեները կեանքի կոչելու պարտականութենէն աւելի մեծ ու արմատական պարտականութիւն մը կայ, որ կը կայանայ գժոխքը յաղթահարելուն մէջ : Գերագոյն նպատակը որուն պէտք է ձգտի բարոյականը, ստեղծագործ ազատագրումն է բոլոր անոնց, որ կը տառապին և կը կրեն չարչարանքները՝ ժամանակաւոր կամ «յաւիտենական» . ազատազրում մը, առանց որուն իրագործումին, Աստուծոյ թագաւորութիւնը չի կրնար հաստատուիլ :

(Ա.Ե.Հ)

Թարգ. Կ. ՄՐԿ. ՄԱՐՏԻՉԵԼԻ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՊԱՏճեռ

ԱՐԵՒՏԱԾԱՅԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Մ Ա Խ Տ Բ

զ) — Մասյնութիւններ, որոնք գրական գործերու մէջ բիւրեղանալի առաջ ապրեր են իրենց խուլ, անթեղեալ, չըսիլու համար աստեղային, միզամած ային զրութիւնները, բաւեր՝ իրենց թաւալումները կերանքին մեծ զարկերուն ներքե, պեղեր՝ զանգուածներուն անյարիր զգայութիւններուն մէթին բաւելիները, ստեղծեր բանկումներ, փուղումներ, ժայթքումներ, ազէտոներ ու հարցուտութիւններ, ու կերոսի մը յարցարեր են, իր մեծ գիծերուն իմաստին մէջ, անկատագիրը մեր ժաղովուրդին: Աղիշէն վկարութիւնն է մտայնութեան մը, այն տարողութեամբ զոր կը պահէ իր մէջ քանաներորդ զարու զիրք մը՝ Տիկին հասյեանի Օւերալիներաւ մէջը, մէկ ու նոյն հոգին փրթած, հակառակ այսքան զարերով անձրակտուած, այլակերպուած ըլլալուն: Ան որ ուշազդիր, երազուն, տրուում բայց իմաստուն պարկեցտութեամբ մը թափաներ է այս ժողովուրդին զիրքը բայց զարէ զար, չի կրնար չայցուիլ ակնքախիրենը իրենք իրենց համար հետևողական զրեթէ անխուսափելի մտածական, զդացական կարգ մը կերպերէ, կերպարանքներէ: Այօօր, այնքան զառն փորձերու զինուով կրնանք դատել է, զարու մեր շարժումը զարսիկ կայուրութեան զէմ, ատոր մէջ ոչ միայն խելք մը, նայսան մը ըլ գտնելուու, այլ այն ահաւոր փառտին իսկ մերոյն որ մեր ձակատագիրն է: յաճախ մեր մատուցներով, յիմարութեամբը ճարտարապետուած: Ե, զարուն թերես լեռնամորչի մատուցն մէջ իր Աստուածը պաշտող վանական մը միայն կը մտածէր այդ պայքարին մէջ երկնայինին նողաստին: Ամբողջ երկիրը զիտէր սակայն թէ ինչ կ'արձէին արքայից արքային բանակները, բայց ուրիշ բան չըրաւ քան ինչ որ իրեն կը թելազրէր իր արեան մութ ձայնը: Ամէն փաստ հերքում մըն էր այդ մտայնութեան, ի յառաջազունէ զատապարտուած աղէտի: Բայց ուրիշ կերպ ըրինք վեցերորդ զարուն, եօթներորդին, . . . քաններորդին: Ահա թէ ինչ կը նշանակէ մտայնութիւնը: Ով որ Արեմը մտայաց Գրականութեան մէջ վարդապետներու, վարժապետներու, վանականներու ինամարկութեամբ անած հանտորութիւն, բառամոլութիւն, սեթենթ, հոսնոսութիւն, պոլտեցիութիւն միայն կը յաւակնի տեսնել (ուրիշ բան չըրաւ Արեկելահայ քննազատութիւնը, աչուըները բացած օրէն մինչև հիմա), իր անհասկացողութիւնը, անբա-

շարարութիւնը կ'ըլլայ ապացուցած իր պապերուն պատզամներէն: Նոր տարազներ, իմաստասիրական կասկածելի թուլաներ չեմ առաջարկեր գատելու համար Արեկանայա Գրականութիւնը: Բայց կը մերժեմ աժան, արագ, հաստ, տափակ ընդհանրացումներուն ալ պորտարոյժ արհամարտնքը: Արեկանայա Գրականութիւնը մը տայնութեանց շատ սրտառուչ հանդէս մըն է ամէն լուրջ պրատողի: Մասյնութիւններ են՝ 1. Զարունի Սերանինի բոլոր առաջարդութիւնները, 2. Սահմանադրական պայքարները, 3. Միջբարեան ազգայնականութիւնը, 4. Խապաւութիւնը, 5. Ցեղականական հանուրափիւնը, 6. Ժողովրդապատճենները մեծ մեծ գրանցեան, 7. Արտեսի հօգոր հակումներու հետանիք մեծ Արտեսազգէ Սերանին, անոր ներանիւ ձգումները, 8. Գաւառիկ գրականութիւնը վառարանոյ իմացական հակատաւոր, 9. Հայ Հոգին ազգագրելու աւելի ձախ որոնումները, — բոլորը այս ու այն կերպով հաստատելի՝ այս ժողովուրդին բազմազարեան զրական ոգորումներուն մէջ, երբեմն պիտով ինքզինը յայտնաբերուզ, երբեմն ձեռով, երբեմն լեզուական մըտահագութիւններով, երբեմն աշխարհին ընդլայնումը:

զ) — Հոգեբանական բարեխառնութիւններ, աւելի մեջամօտ, աւելի իրաւ, զգալի, սեռելի, քան կանխող երեք բարակբաժներուն մէջ վերլուծուած իրողութիւնները: — քանի որ Գործերը ատոնցմէ վիայութիւններ են առաւելապէս, Դէմենը՝ յաճախ անվաւեր (շիացուած, ուրացուած ըլլալուն). Մասյնութիւնները՝ իրենց ձփուն, միդամած ային կեղրունախոյս հակումներուն մեզի թելազրած անորոշութեանց պատճառներով՝ նուազ յատկանչող: Դժուար է պատագրել Մ. Պէշիկթաշեանի երգեւուններու մէկ մեծ մասը, Ազգային երգաւաններու մէջ մոխրացած բառերուն այսօրուան տիրական վրիսանքը: Ճեր Ռումանիկ բարունին սպառուպուռ կորանքը: Բայց որո՞ւ համար կասկածելի՝ չըսելու համար անզիմամարտ ստուգութիւնն չէ նոյն ատեն այն միւս իրականութիւնը: Որ բոլոր այդ գործերուն հոգեյատակը կը կազմէր կանխող զարու կէսերուն: Անոնք որ 1860ին կամ աւելի վիրջերը, հանզիսավայրերու, զպրացներու, արձակ խալզավայրերու մէջ խելազարային տեխնոգով մը՝ պոռացին պոռագուացին, ծափեցին ու եօթը երկնելքները մինչև հասցնել ուղեցին իրենց խոռվքը, հրայրքը, հաւատքն ու ակնկալութիւնները, այսօր այնքան ծիծաղելի, անկարծիլ թուուզ երգերուն թէերովլը — (շիմ սիրելի զաւակունա», «Բա՛՛՛ Փորտան», «Արեկ Հայիս զունե», «Հայենեաց սիրով», «Հայ ապրիմ եղբարե», յիշելու համար ամէնէն փարթամ փառքերը այդ բարիսանութեան) — ազահովարար կտրուկ կամ երկարածիգ յիմարներ չէին, այլպէս պարպելու համար իրենց կոկորդներէն ինչ որ հոգին ներքնատունը կը գոյաւորուի զարերու ծորումներով, այլ վկայները, հերարձակ ու հպարտ որքան խոռվիչ հոգեկան շրջանի մը: Ու մի կարծէք թէ այդ զիծէ խոռվլքները սանկ զանդաղ ծփան քններու կը շ

շոյթովը կուգան ու կ'երթան։ իր հարիւր տարիներու կեանքին մէջ, զրեթէ տասը տարին հեղմը, չըսելու համար ամէն ննդամեակի, Արևմտահայ Դրականութիւնը ապրած է իրարմէ հզօր, իրարմէ գերազանց սարսուռներ, — ըսել կ'ուղեմ իմ ժողովուրդին կեանքը անցած է տագոն սպանքէ տագեապանք, բոլորն ալ աւելի կամ նուազ ուժգնութեամբ իրենց արձագանքը ունեցող՝ զրողներու նոգիին խորը, Այսօր զիւար է ձեզի համար մոտապատկերել անդո՞ր որ 1880ի մարզոց չութիւնն է պարաւանդամ, Ազգը կը զիւտակցի իր բնացնչումը սարքով, զայն սառնութեամբ հետապնդող քաղաքականութեան զոր որդեգրած են թօւրքերը մեր հայրենիքը մեր բազուկներէն ու կրունկէն կորցելու, ու կը ստեղծեն նողային հարցը, իր անխուսափելի հակադարձով՝ մեր գեղերուն վրայ, — պանդիստիւմը դէպի Պոլիս, այսինքն այդ հողերուն առանց պաշտպանի լըուիլը թշնամիին ախորժակներուն, Ու երեան կուգայ Նըանդը, որ պաշտօնական արտայայտիչը տագնապին, իր Պանդուխաներու և հոներէն քրօնիկներով, է նոյն ատեն ամբողջ արևմտահայ միուքին, մտաւորականութեան խորհրդանիչ բերանը, վասնզի 1884ին տպուած Թօւրու Աղքար յուշագրութեան սկիզբը Սրուանձտեանց վարդապետ իր առաքելութեան («Ալիեւրուքին ի Հայրենիս») բաւն իմաստը մեզի կը պարզէ . . . յարգորելով ժողովուրդը որ վստահի Յսմանեան բարեխնամ կառավարութեան ու չգաղթէ : Ի՞նչ հունապ է հոգին Արքիարի սերունդին, երբ Կիջնէ Կրկէս վտարելու Հայոց երկինքէն լուսին ու գեիիւը, տիխակն ու վերջալոյս, հետօնմն ու Մայիսը որպէսզի հոն ուրուանան ցաւերը միլիոններուն, ծգուած՝ թօւրքին, հայ-թուրքին, էֆէնտիին ու քիւրտին ճիրաններուն . . . ինչպէս կը տեսնէք, Արևմտահայ Դրականութեան մէջ ոչ միայն իրաւ զործերը, այլ նոյն իսկ օգային հանգանակները, գրական զպրոցները այդ ապրումներուն շուրջը, վրան, տիրական վկայութիւններ են, հերիք է որ անսնց մօտեցովը զիտակցի իր ըրածին, տեսնէ այդ շարժումները ոչ իրեւ հոսնոսներու ուազմախաղ, այլ արժեկորէ զանոնք իրենց վաւերական կենսանիւթին մէջ, այսինքն՝ միշտ ու միշտ ապրումները իր ժողովուրդին, անոր ալեկոծեալ կեանքին ամէնէն քաղցրը, սիրտ առնող, լացնելու չափ իրաւ բիւրեղացումները, Այն ատեն կրնան այդ դատողին համար ներկայանալ շատ մը տրտմութիւններ երբ անիկա չտունէ իր ուղածը սերունդէ մը իրեն ժառանգ ինկած մթերքին ծոցը, ինչո՞ւ այն քան քիւրիին բիւրեղամբ ամէն քանակակ վաստակին մէջ, ինչո՞ւ այնքան մօտիկը մուայ Սրուանձտեանց վարդապետը այս ժողովուրդի հոգեկան հարատութեան գանձարանին, ու գոհանայ փիրանքներով, երբ այնքան զիւրիին էր իրեն համար լման գանձը զանել, զասաւորել ու փըրկել կորուստէ . . . ինչո՞ւ մեր ժողովուրդին ցաւը մեր գրականութենէն ներս առնելու առաջալութեամբ համբայ ինկած սերունդը — իրապաշտները — այդքան քիչ բան է կրցած ազատել այդ

ժողովուրդին ապրումներէն . . . Ասոնք, կը հաստատեմ, տրտմանիթ հարցումներ են, Ու կայտակաւին միւսը. — ինչո՞ւ Մշոյ Գեղամը, Վանի Զիթունին, Խարքերդի Զարդարեանը, Կարինի գզրոցը ըլլան այդքան անհանձար, իրենց ժողովուրդին հարազատ ապրումները այդ թեթեւ, անքաւարար մշակումով մը սկեռելու գոհանալով երբ ամէն պատեհութիւն ունէին հայ հարազատ գրականութիւն մը ճարտարապետելու, Ահա իրարմէ տրտում, խոռվախոյզ ապանապներ որոնք կը պաշատեն զիս, երբ կը մտնեմ իմ զործէն ներս, Բայց խելք մը կայ, միջին ողջ տուութիւն մը, որ կը միջամտէ կարելի ամոքումը բերելու: Առով ես ինձի կ'արտօնեմ պահ մը ներելի անտարերութիւն մը հանդէս այդ ժառանգութեան գեղարաւեստական արժեքին, բայց չեմ կրնարինքին անպարտ զգալ առաջազն փուլութեան յատակը կազմոլ հոգելէն բարեխառնութիւնը ձգեմ ծաղրի, արհամարտանքի տակ, ինչպէս չի վախնար ընելէ այսօր, Խորհրդային Հայաստանի պաշտօնական քննադատութիւնը, կամ արևմուտքի ոստաններուն մէջ իր միտքը կազմած (գլխաւորաբար Բարիկ) այն երիտասարդութիւնը որ չամչնար յայտնելէ իր ցաւը հայր չկրնալ սիրելու (Շահան Հաննուր): Իր ժողովուրդը չկրնալ սիրող արտեստագէտը: Բայց ասոնք աւելի են քան տրտմութիւնը, հոգեկան սպոննկութիւնը: Դրականութիւնը թերեւ ներուի ազատազբել բարոյականեն, ան ալ որոշ բարոյականէ մը Բայց զայն անջատել արիւնէն. — անա անմարզկայինը: Աս ալ բարեխառնութիւն մը, իր կարգին: Արևմտահայ Դրականութիւնը այսպէս իրարմէ խոռվիչ պատգամներու հանդէս մըն է, բարեխառնութիւններու մըրցարան մը: Խոռնել այդ բարեխառնութեանց յայտու ծածուկ բարձրագիշները, շարժումներու սիրտը, զործերուն յատակը, զէմքերուն աճապարարութեանց ու մտայնութեանց թոհ ու բոհն ետին, գիտեմ որ կ'ընդգարձակէ այս աշխատանքին ծիրը: Բայց աւելի պարկեցած է առատութեան մէջ տկարանալ քան սովի լկանքին:

Ե) — Գալափարագրութիւններ, որոնք, հակառակ իրենցմէ անբաժան աղմուկին, շանքամին, վերիվարումներուն (ուրացում, նոր կուռքերու ամբարձում, նոր տախտակներու մոլեռանդութիւնը, քասուը որ կը հետեւի ամէն հզօր զզրումներու) զարձեալ աւելի արտայայտիչ են քան դիրքերու յաճախանքին մէջ իւրացուած վարժութիւնները ու ասոնց արդիւնք անկնիք, խելօք, տափակ գործերը: Զարթօնքի Սերունդը չունեցաւ գրական բեմ մը: Բայց իր խելանները պաշտպանեց խորհրդարանական ատենաբանութեանց լրջութեամբը: Մինաս Զերադի ճառերը, Պէրսէրեանի ճաճնչաւէտ բանախօսութիւնները՝ սանկ 1875ի զաներուն, եղիայի նշուլութեամբ, որոնումները իրաւ է թէ անխառն կերպով չեն պատկանիր գրականութեան, բայց ունեցած են մեծ տարողութիւն այդ գրականութեան յե-

Ղալքընումին մէջ՝ Առօր քառան տարի (1870-1890) Արևելահանայ Գրականութիւնը չէ տուած ցեղալյին արժեքով (խորքէ ինչպէս ձեւէ) գործեր՝ ազգեցաթեանը տակ եղիսա-Չերտազ-Ղերաբիցանի զա-զափարազըռութեանց, նոր քառալ մը՝ Հարթիբային: Ամբողջ գորոցի մը լրջութիւնը ունին իրապաշտներու բանափիճական, կիսով քննադասական ելոյթները զիրենք մատէն կանխող, զիթիէ նրդող սուստ ու փուտ հաշակին դէմ որ գրականութիւնը ճիզզ իրերու, յիմար խոյան քններու, քաղցրանուագ մեզեզայնութեանց սպասին է ենթարկած: Աւրի՛ չ ելոյթ՝ Տիկին Տիւարի վէպը, որ հակառակ գրական խոչըր նաև մը ըլլալուն, կազմակերպուած մտածողութեան մը թելազրանքը չի զարդիր արթնցնելէ, երբ զատուի պատշաճ հեռաւորութենէ: Նոյն իօկ այսօր այնքան անիմաստ ու անխելք թուող զրաբար-աշխարհաբար վէճը իր կարգին փաստ մըն է ծանր, խուլ, խոլ կիրքերու: Գաւառունկան Գրականութիւն քիչիկ մը գեղջուկ տարապին ետին սիրելի է ինձի տեսնել զարձեալ ձանրակշիռ իրողութիւններ: Մենենականներու ելոյթը հայ հոգին գտնելու ուրիշ զալափարազըռութիւն: Քանի քանի անզամներ նորոգուած է մեր զալափարազըռութիւնը, զարու մը ընթացքին, անշուշտ զրական ստեղծումին իրեր ծնունդ ու ծնուցիչ նոյն ատեն:

— Վեհակինուր, սրոնք այս ժաղովութեղին կեանքին վրայ բացուած լուսառատ, արիւնոս, թռուխոպ կամ մեռեկական համապատեկերներ են, գրովը ինչպէս հասարակ զանգուածը միանգամայն իր առ քին, տեսիլքին, ձնչումին ու կիրքին մէջը ընդգըարչող՝ Միայն Սամանալզութեան տարեգարձի հանգեստերը հոկայական պատկերներ կը թելազրեն ինծի, միշտ իմ ժաղովութէն, կընա՞ք իր ամրողջ եղերական ծանրութեանը մէջ ասցրի ինչ որ 1895ի ջարդերը զիկեցին մեր հոգիին ջիկերուն, մեր մոտքին հպարտութիւններուն, մեր հաւատքին ընկերքներուն, Ու կիլիկան եղեանը, Ու 1915ը, Ու Լոզանի դաշնագիրը, Բալը այս ապրումները, լման ցեղը խենեցնող ուժգնութեամբ, արձագանցած են անսարակոյ գրազներու Հօգեատանը մինչև: Այս թէ ինչու Արեւմտանայ Գրականութիւնը ըլլալով հանդերձ ծնունդը մէկ ու նոյն ժողովուրդի, մէկ ու նոյն ընջանի, այնքան տարբեր կերպարանն ըմբարդէ պարզէ Արևելանայ Գրականութեան մեջի ընտանի տեսիլքէն, և ըլլայ ինք իր մէջ ողբերգութիւնը, կընաք առարկել որ գրական գործը ինքնագույխ, ինքնատիպ մալու գինով է ո՞ր ինքզինքը կ'աղատազրէ իր ժամանակ բառին տարողութեանը շուրջ համաձայն գտնուինք: Ժամանակը ընդհանուր ապրումներուն զումարն է, կաղապարը Ալտկէ զարտուղումը կը նշանակէ ինծի համար գտնուել այլ զումարին, այլ կազապարին այն մասերը, երեսները որոնք ուրիշներէ չեն ուետած: Այդպէսով է որ Աւելամիներու մէջը կ'արմենորուի այն քան թանկ ու իրա չափերով երր կը բանուի մօտիկը Կիլիկիան Արևաւրեբրին:

երկուքն ալ մէկ ու նոյն վիճակներու անդրացարձ։ Առ է պատճառը որ Սիլիխասրի Պարտզաները այնքան սուզ կշռեն իմ նժարին մէջ, ո՞րքան ատիկա չի կընար ընել այնքան փառած, մասնաբանուած Կերպաշխառրիք։ Երկուքն ալ նոյն հոգելիքնակին բխող տպաւորութեանց պատեկերներ, բայց որոնցմէ առաջինին մէջ ամբողջ ըլլը-շան մը բիւրեղատիկ կը պառկի, որոնցմէ երկուրորդին մէջ զմայլելի արուեստագէտ մը ինքն իր գիխուն մանր ասեղնագործութիւններու վրայ հազիւ քանի մը պաւտ գոյն կը լաջողի կորզել ցեղային հոգիին միջինէն։

Quesada.

ինչպէս կը թելազրեն արագ սա տողերը, Նման ձգտումներով ու ծրագրով հետապնդուած աշխատանք մը, պէտք է որ նկատի ունենայ առաւելապէս այս պայմանները համախմբող գործեր ու անձնաւորութիւններ ու մանաւանդ շըմ-ջնային հոգեխառնութիւն։ Հասկնալի՞ց այս փոստովանութենէն յետոյ, որ Ըլլամ կարձ հեղինակներու կենսագրութեան շուրջ բայց կարելի ջանքը ջմնայեմ սկեռելու համար հեղինակին մէջէն, ետքէն, մարդը որ միշտ արժանի է խորունիկ ու շաղրութեան (ո՞ր հայը ապօքեր է մարդու պէս որպէսզի անոր վրայ մեղի հըլլար անկարելի՞ արտամարդկային ճնշումներուն ամրող զատակնիքը ձանջնաւ։ Մի մոռնաք թուրքը, այսինքն մեր գերութիւնը, Մի մոռնաք հայը, այսինքն այդ թուրքին յօրինումը եղող հոգեկան որոշ քածին մը որ կը բացատրէ մեր անհուն, աւաւոր հակասութիւնները, անկումները։ Բայց մի մոռնաք մանաւանդ հայը որ վեր է թուրքէն ինչպէս թուրքէն յօրինուած հայէն, ու աւելի։ Արեւոտեան Գրականութեան մէջ Նրբամոլութիւն է քրանսական աղջեցութիւնը Ընդարձակել իր ճիշտ իմաստէն անդին [ատիկա միայն այսօրուան բարիկի տղոց գրականութեան մէջ է որ նկարագիր է ստացած] ու աժան լոնդնանբացումներ բանահեել։ Արևոտահայ Գրականութիւնը խորունկ ազգեցութեան տակն է բարեին, որ ազգած է մանաւանդ իր ստեղծած չարիքովը մեր հոգիներուն վրայ։ Հասկնալի՞ց որ չվերլուծեմ, զառական մէթոսին համեմատ, հեղինակներու բոլոր գործերը, անոնց ամփոփումը քանի մը էջի վրայ չմատուցանեմ պանդոյններու վայելումին, չփառաւորութիմ թուականներու ծզումին այնքան լուրջ, այնքան փառաւոր մնոտիքին անձնաւուր, չգոլիմ կամ չպարսաւեմ պատրաստ ո-

րէնքներով, գոհացում հարելու համար այս ու այն նախապաշտումներու ասպետներուն։ Առ ծանրանամ այն գործերուն, զեմքերուն, երեսոյթներուն վրայ ուր այս ժողովուրդին մէկ արժանիքը, մէկ թերութիւնը, մէկ առաջինութիւնը ըլլու տեղաւորուած, սկսուած, կենդանի կերպով, ինչպիսք նկատառաման պարապրով։ Անա թէ ինչո՞ւ չարգիմ պատկերացման, անդրադարձումի, թուումի և առաջումի աւանդական կարգերը, բաժանումները, համախմբումներու ա՛լ կազմաքար զարձած կերպարանքները, ու չինեմ ինձի յատակ զատըներ, հոն զետեղելու համար ամէն ինչ որ օրոց չափով հարազատ է իմ ճարգած ՀԱԱՊԱԱՍԻՒՅԻՒն, առնուազն առողջութեան նպատ մը կը նայ հայթայթել, թէկուզ թերի, անքաւարարը։ Թող ըլսեն ինձի թէ պարտքեր ունեն պարկեցութեան, հաւատարմութեան։ Թէ զրականութեան պատմութիւնը չի զագրի պատմութիւն մը ըլլալէ և ըստ այն կը պահանջէ իր մշակման օրէնքներուն հանդէպ յարգանք։ Այդ ամէնը անո՞նց համար, որոնք բանասիրական փառասիրութեան կը միան ենթակայ։ Իմ փառասիրութիւնը գիտն է իմ ժողովուրդին, Հայ Հոդիին։ Ու ասիկա, տակաւին Մեհեմանի (1914) օրերէն։ Հետևաբար կը ներեմ ինձի լայն, կարեոր շեղումներ։

Յետոյ, խոշոր պատրանք մը կը միջամտէ անցեալը խոտացնել յաւակնող ամէն ձեռնարկի չուրջը, ըլլայ՝ գործադրով, ըլլայ մանաւանդ զայն ընդունելու կանչուած միտքերուն համար։ Ալիկա ընթերցողին սպասումն է սանկ կոկիկցած, չափ ու ձեւ մտած կերպարանքի մը ներքե այն ամէնուն որոնք որ և չ շրջանի ամէնէն ընթացիկ խոռովըները, ապրումները իրեք, ունեցան իրենց զիշէները։ Յայտարարել մէկուն թէ թովմաս թէրզեան բանաստեղծը հազիւ թէ կը պատկանի Արեմտահայ Գրականութեան, ստեղծել է անոր մէջ խորունկ յեղաշրջում, քանի որ այդ մէկը սանկ կէս զարէ ի վեր վարժուած էր այդ անունին հետ իր մտքին մէջ յառնումը հաստատելու այլապէս պերճ, փարթամ արժանիքներու։ Հէ՞ որ աղնուական, բարձրաթոխ, հեղասահ ու զերազանցապէս բանաստեղծ արուեստագէտի մը որակականները կրկնուեր էին քանի մը սերունդի մունետիկներու բերով։ Հասկցնել այդ մէկուն թէ այդ ամէնը հազիւ թէ աղերս մը ունին այդ պարկեց, քիչ անգամ, շատ քիչ անգամ իրաւ տաղաչափին ներքին՝ տեսակարար արժէքին հետ, պիտի նշանակէր մանրամասն վերլուծման մը տաժանքը յանձն առնել։ Այդ զինով միայն մննք պիտի հրաժարէինք մը զիշէներէն։ Միւս կողմէն հասկցնել գործեալ այդ ընթերցողին թէ քերթուածներ կան որոնց համարած խոռովքները երբ բացուին բաւարաց չափով, ինք պիտի ունենայ իր առջէ կենդանի հայոց պատմութիւնը, զրիթէ ամբողջ։ — գործողութիւն մըն է որ կը դիմաւորուի խորունկ սկեպտիկութեամբ, չըսելու համար արհամարհանքով։ Հոս կը յիշեմ այդ կարգի գործառութիւն մը։

— 1921ին թէ 22ին, կեզդոնական վարժարանի մէջ (Պոլիս) կը վերլուծէի զասարանի մը առջի «Յարութեան ունիցն է ան» քերթուածը։ Թէ բէեանի խօսունութիւրը, զչարողները, կերպը զտած էին զար ունկնդրել արտօնուելու համացցից հիւրերուն իրենց զիտաւորութիւններէն (թերթի մը խօսքիին ու կուսակցութեան մը վարիչ զեմքերն էին իմ պատուական այցելունը) ու շարունակիցի բանալ։ Առաջին երկու քառեակը ինձմէ առած էր զասապահը Վայէ վրայ երեք պահ յատկացուցինք քերթուածին թափանցումն։ Իմ հիւրերը վերջին անգամ մէկնեցան անասիլի տապաւորութեանց տակ։ Իրենց խօսուովանութիւնն էր։ — Բայց ատիկա թէկիեան չէ։ Ու չին զիտեր թէ հայոց պատմութիւնն էր որ կը մատուցուէր զասարանին։ Հազիւ թէ խօսք անցնէր հեղինակին արժանիքներէն։ ուժէն ու տաղանդէն որոնք ամէնէն լուիլ տարրերն են արգէն գրական պատմութեան մէջ։

Այս օրինակը համոզի՞չ բաւական։

Ամէն ընթերցող երրեք բացութիւն պիտի չզգայ իր մէջ, մտածելու թէ այն քսան երեսուն ոտանառները որոնց մէջ պատմութեան երեք չորս տարիներու կրակներն ու սարսուները կը քնանան երբ կը կարգայ դետրոս Դուրեանի Գիւաբը (Տաղէ Խթառեւրգորիւն), ո՞ր աստիճան ընդարձակ յոյզերու, արցունքներու, երազանքի, բիւրազան զգայութիւններու զինն էին, զրուելէ առաջ Մէկ քերթուած, այդ պատմանիքն, երկու տարուան հազ ու արիւն, տասը տարուան կարօտ ու պապակ, թերես մեր ժողովուրդին ալքերէն յառնող տասը ու աւելի զարերու եղեցական հանգէս մըն է իրարձէ նուրբը, նորունկ, այրող զգացումներու, Գրականութեան պատմիչը, ամէն մէջ արժանառ հեղինակի հետ ստիպուած է այս ապրումները ապրիլ իր կարգին, ու . . . թուզթին յանձնել, աւազ զ. ոչ իսկ մոխիրը այդ կրակներուն։ Ահա թէ ինչու զրականութեան ամէն պատմութիւն միշտ անկատար միաւու է սահմանուած։ Դժուար չէ այս հաստատումին հետեւանք։ — ԶԵՂԶ։

Կարելի չափով հաւատարիմ կենալու համար իմ ծրագրին, իրագործելի արգիւնքներու սիրոյն են ստիպուած եմ անտեսել, այսինքն ուրիշներու նկատառմանը զգել շատ ու շատ բաշներ կեանքը նուանել չի նմանիր շուքի վրայ աշխատելու անձակ երանութեան։ Ու որքան շատ են այդ երանելիները որոնք կը հաւատան թէ մատենագրութեան պատմութիւն կը գրեն վասնզի գիտեն մեր բոլոր հեղինակներուն ծնընդեան, մկրտութեան, ամուսնութեան, մահուան թուականները, անոնց գործերուն տապարութեան վայրերը, անոնց վրայ հոս ու հոն ինկած յիշատակութիւնները։ Քանի մը տարի առաջ բախտը տրուեցաւ մեզի, նման ողբերգութիւն մը հանգուրդելու։ Պատուական՝ մատենագրութեան միշտակէտ մը, նիւթ ունէր մեզի բերելու մեր միջնազարեան աշխարհիկ զրականութեան, ուրիշ խօսքով աշուղներուն գործին վրայ քանի

մը տիրական հաստատութենք: Ձեմ կընար մռա-
նալ տագնապը (դոր կը բաժնէք ամբողջ սրանց)՝
ժամը անցնող թուումէ մը յառաջացած: թուում
մեր գիրքերուն մէջ յիշատակուած անուանի կամ
համեստ բոլոր աշուղներուն: Դարձ զար, իրենց
ժննդեան ու մահուան թուականներով լուսա-
պօակ: Ու անուններու այդ խաժամուժէն ոչ իսկ
մէջ հատիկ ապրող կայծ որ զպէք մեր հոգինե-
րուն: Ասիկա սպաննելն էր մեր աշուղներուն
սիրալի բանաստեղծութիւնը: Ու այս սրբապլղ-
ծութեան հեղինակը համալսարանական մըն էր,
աշգին մէջ ահաւոր հռչակի հասած իրը մատե-
նագրութեան մասնագէտ (դէպքը տեղի կ'ունե-
նար երուածալէմի Սըրոց Յակոբեանց Կիւլպէնկ-
եան Մատենագրաբանին մէջ): . . . Ահա թէ ինչու
կը կենամ ամէնէն վնասական անուններու ու
ամէնէն հզօր ու կարկառուն իրազութեանց առ-
ջև միայն: իր Անգլիակոն Գրահանուքիան
Պատմուքիւն գործին հինգերորդ հատորը, Խթլ-
իթ թէն, նուիրած է . . . հինգ հեղինակներու
միայն: Ու մենք զիտենք թէ տասնըններորդ
դարուն այդ գրականութիւնը առնուազն տա-
ղանդաւոր յիսուն գրագէտ, ու միջակ տաղան-
դով ալ թէրևս հինգ հարիւր զըչի վաստակաւոր
կը համբէր իր տարեգրութեանց մէջ:

Անխոռւսափելի այդ զեղչավակ ստեղծուելիք բան-
պատշհութիւնը սիրայօժար ես նախամեծաբար կը
համարիմ, քան բարիքը ճշգրտութեան, պատ-
մական հարազատութեան, մատենագրական հաս-
տատ, անհերքելի թուռնիներուն, Զեմ ուրանար
այդ բարիքին առ տարողութիւնը որ, կը հաւա-
տամ, մատչելի է սակայն ամէն յամառ, գորչ
աշխատողի, պրապտումէ, թիւէ, վկայութենէ համ
առնողի, ու այն բոլոր միտքերուն որոնք հա-
ճոյք կը զգան թիւերուն ապահովութեան փաս-
տէն ու արժէքէն:

Նախածագ, սկզբնական օրերը՝ Հասկնալի է որ
այդ ժամանակամիջոցը ուղղուազրային^(*) կերպա-
րանքի մը տակ միայն մուռաք ունենայ գործէն
ներս։ Այդ զրականութեան առաջին աշխատա-
ւորները, որոնք հազիր թէ կը մտածեն զրելու
փառասիրութեան, զրական մնութիքին ու այս
անտարբերութեամբ ալ կը հաւատան ու կը զրեն։
Այդ շըշանին կը պատկանի համապատկերը սե-
րունդին որ տուաւ մեղի Ազգային Սահմանա-
դրութիւնը, մեր Մամուլը, կազմակերպեց՝ իր
հասողութեան ծիրին մէջ, մեր զպրոցները, ազ-
դային վարչական մեքենան։ Կարծեց հիմ ըլլաւ
զրած զրական քանի մը սեռներու, վճռաբար թէր
կեցաւ աշխարհաբարին, ու տուաւ՝ իր ընկերա-
յին անթուելի բարիքներու շարքին, մեր հոգիին
քանի մը քաղցրագոյն ձայները, մեր մտքին քանի
մը սրտառուշ կայծերը, և կետին պատրաստեց մեր
պատմութեան հզօրագոյն սարսուռին^(**)։ Մեր
մեծագոյն քերթողը՝ Պետրոս Դուռեան, ամբող-
ջովին կ'ինայ այդ սերունդին գտուիին (zone)։

(*) Համազատած են որ այդ բըջանք, ապդային ընդհանուր մշակոյթին պատմութեան մէջ, սովորմած, սիրացաւ և իրաւ պատմիչն մէջ համար թերեւս ամենին թերողական համար դրամներու կարենի ընթաց տակեանին ունի իր ալբերուն խօսք ժրարագածի, Խնչ մարդոր են այդ երիտասարդները որոնք ընդհանուրպատճեան բաւունքն, բռպիկ, կամ Պուստ թարերեն որը պր, կը փափն արեմուաց, ու լցունելէ զերք տոնը լցոյնվու ու հուրդափալը, կը դառնան իրենց ժողովորդին, անոր ճակատաքրը սրբագրելու ամենափեմ առաջարարութիւններով, Միակ առ ստոյդ հաստատումը, Կընե բրոյր այդ մարդոր հարիսը անզամ աւելի մեծ քան զիրենի յաշբարող առավելութ գրաստանուները, Բայց, ինչպատ զիրի իմ աշխատանքը արդիւնքներու վրայ և միայն ու միայն զրական արդիւնքներու վրայ կը դնէ իր շեշտու

(**) Դիմուի է որ սերունդներով վրայ առ բաժնունը մը Ըլլայ պայմանաւոր Սաթեմաթիկան չշուրջ թեատրու տարիներու Թիով մը, Թագով մասն Թէրզեանի առաջնի քերթուածներու ուստի առաջն են թաշուածն են թաշուածն մէջ (1855), 1849ին Խրիմեան նոյն այդ թաշուածն մէջ կը ստորագրէ Բարեգունին Առաջնու և 1901ին ալ Խանիրէ կարունէ տպագրութիւնը իր քերթուածներուն, Թէրզեան բաներորդ դարուն ալ ոտանակուունը կը գրի, Միար բանին առ թուումերուն՝ ան որ, 2-ընթացէ Սեպտեմբեր, Թաշուածներուն, Խոհեմ իշխուածներուն, Եղիշեւածներուն, Արաւուածներուն Եղիշեւածն յորթօրչաւած գրական կրթանքները (տիպիթին) նոյն առան իրենք զիրներ կը թելատքն երկու առանքներուն ալ ընդմէնին, Երգափոխութիւնը, Անսուսափի անշատու առանքներու երբ Նեղինակը ինքն իրեն մաս հաւատարիմ այդ բոլոր փոփոխութեանց ընթացքին, ինչպէս և պարագան թովման Թէրզեանի, Դարձեալ ուրիշ խոդիր երբ Նեղինակը մը էս պէս, էս շահեւայ, էս Վերաբերու գանի մը սերունդներու ընդհանոր ցատուածքուն հաջորդ ու Հարկածու թեատրու առանքներուն գրեթէ առանձնանալի կերպարածքներուն Այս իրուութեան շիգո մէկ օրինակը կուզայ ՕՇ. Խանը պէս որ իր վաւերական առանձնիկ պիտի Նեղուագին բառերով ողջ լունէ Լուսնէն (Ոչչու ու ու եւ, ունանաւ ունաւ, ու լուսնաւ ու լուսնաւ), 1855, 1890 ամառ Թաւականներուն պիտի Նեղինակը Անդաւած Սերեց վեցայ, Ունեն Այս ածկանառուն, ու պիտի սուրբ քրիս պահանական բանասահծոն թեան նմացներ նկատուուն իր մէկ բանի սուսնաւոր պահուածները (Բարեգունին Հնաւու ժամանեւններ), այս անգամ, Աշուն զրական ալ նուրիսկանաց անունուն, ու 1900էն վերը պիտի շարանակի բազմաթիւ և առաջնու առաջնու առաջնու առաջնու առաջնու առաջնու

կուգայ Արմենաստվածք Աթրոնդիք բարեփառանու թեհեն, այս
ցուցանուններու զիս Տղենի իմ Հ-ՊԵ-ԸՆՆԵՐԸ Ներկայացնելու
բարար առաջնութեամբ մը պրակսին Ներուի Ժեկի իշար-
քանիքը Հեղինակի Շեա յարդարեն ակնբառա հակազդութիւն-
ները: 1883ին, Հօնրաց ոլոմանթիկ բանասաերդ մընէ 1910թ.
ապահովագութ մը, արուեստագէտները Հանգանակներուն
առաջնութիւն:

իր ըջափոխութեան ու հասակին մէջ այս
պէս նկատի առնուած, մանաւանդ իմ ժողովուրդի հոգեղաշտէն իմ վերբերելիք պարզ, խո-
ռունկ, իրաւ առաջազրութեանց սիրոյն, ես կը
կերածեմ Արեմոտահայ գրական վաստակը չորս
ըլիսաւոր ըջանակներու, - հարիւրամեայ հա-
մապատկերը այն իրողութեան որ անուն ունի
ԱրենիՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՅՆԻԹԻՒՆ: Մտքէս անցաւ
իմ աշխատասիրութիւնը նուիրել անոր հարիւր-
ամեակին: Բայց հերետիկոսները լաւ կ'ընեն հե-
ռու կենալով հասարակաց հարկինքներէն: Մե-
աւոր, հերձուածող իր մէկ զաւկին, մէկ մըշա-
կին մկայութիւնն է ուրեմն այս գործը:

իմ Համապատերը, ինչպէս ըստ Կ'ԵՆԴՐԻԿ
ետքեալ չորս մեծ բաժանումնեը.

ա) ԶԱՐԵՈՆՔԻ ՍԵՐՈՒՆԴ ԵՒ ՌՈՍՍԱՅ ԵՒ ՌՈՍՍԱՅՆՑԻՆԵՐ:

թ) ԽՐԱՊԱՏԵՏՆԵՐԻ Արոնք առաջին անգամ կ'երեխ 1880ի չըշաններուն, վարանսու, վախեկու, աննպատակ, բայց Մասիսը ձեռք անցը նելով և Աւելակի հիմնելով, տակաւ կը զգելուն իրենց լիութիւնը, համարափ ու համակամ աշխատանքի սրտառուչ պատկերի մը մէջ, համախըմբելով իրենց ուժերը մէկ ու նոյն սպասին, — գրականութիւնը ծողովարդին դարձնելով գեղեցիկ մասղութիւններով. կը տապալին իր մեծ կախորդներուն մահովք իր իմաստէն ալ զարդարմեր Խամանիքմը ու անոր խարթ զաւակը նկատուող եսապաշտիկ, եսակեղորդն անորակելի այն գրականութիւնը որուն քրմաքեար կը հանգիստանայ Եղիա. կը կործանեն զրաբարը իրենց զըրբունակ ախորժակներուն պատռանգան ծառայեցնող լորոցին յաւակնութիւնները, միանգամը ընդմիշտ ազատազրելով աշխարհաբարը. կը հիմնեն մեր վէզը, մեր քննադատութիւնը, իր փառքին կ'առաջնորդեն մեր պատմուածքը, կը ժողովրդականացնեն մեր օրագրութիւնը, մանաւանդ անոր խորքին տարողութիւնը ու մէին (լիդուին) կազապարումը. ամէն ճակատի լրայ, կ'ընդարձակեն գրականութեան զգայարանքը. ձեռք կը փորձեն երկարել Արեւելահայ Գրականութեան, և կը ձգեն յաջորդներուն նոյնատարը ու նոյնամիշտ սերունդի մը գեղեցիկ պատկերը լլունք են դարձեալ որ մեր մէջ կուտան առաջին անգամ կազմակերպուած, իր ըրածին գիտակցող գրական փաղանգը, դպրոցը^(*), իրենցմէ վերջ ա՛լ չերկ ցող.

զ) ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ՍԵՐՈՒՆԴ. որուն ծագումը կը նաև իջեցնել մինչև առաջին չարգերը ու

(*) Իմ աշխատանքին մէջ պարտաւոր կը զգամ ինքնին, առջ բանայու Քեռի Եւ-Դաշտէնէր կերպարոյ ուրիշ ալ իմարակի մը, ուր զիմաստ գեմքերն են Արևմտահայ Գրականութեան մահէնն միջնադիմ, անտարակելի, անկետեցիկ (գրական գրացի մը մէջ որ աններ իր հանգանակները) անունները. — Մ. Մամուրեան, Ե. Տէմբրիսպաշեան, շնորհածը Միաս Եկեղեց, անհաւարելին Պարսկա, և տակունն քանի Ֆ. ու քրիչներ; Արդարեւ յշուած անուններն երկուքը (Եղիա և Եղիու) մէջի կազմակերպուած անորդներէ, պատմանիքմէն, կը պատարեն իրենց երիտ, անշանմատութեան, փառակրութեան, նորածութեան, նորածութեան առաջնորդներու որոր շքեզութեամբը, իսուներով ամէն շարժումն, ու մէկին մէջ կանկ անձնելու նոյնաքան շքեզ անկարութեամբ մը, իւ ու ու իւ իսունացաներու անուուրդներու թեանը ընդմէնն, անրացարելի սրբան անօրինակ, կ'երացածանն Արևմտահայ Արքունիքին ուրոք տարածութեաններն ալ ներս, մէջ անկատար, մէջ խոսվիչ, մէջ անհանդիմի Ուր զին մէջ կանկ անձնելու նոյնաքան շքեզ անկարութեամբ մը, իւ ու ու իւ իսունացաներու անուուրդներու թեանը նոր մէջ երկուք այդ խոսքին դրական մէջ արգելանները (Արմաւրեանի բայն ու Եւ-Դաշտէնէր), Եղիուի հանցը, Պարսկանի բայն (Եղիուի անկանների առմանեթիզմոյ մը կը մաս գիրաւոր, միւս կողմէն իր քրոնիկները (Արմաւրեանի երկու Եւ-Դաշտէնները, Հայունա և Անդունաւ, Արտէւլունա Մահամատ երկունամայ հաւաքածն, Երեխնցի և Հրաշեայի բայնինները) ին գամած երապաշտերու քրոնիկի գեղեցիկ, զուսպ, գեղագուհասական կատարելութենք (Արքիարեան, Բաշտեան, Հրանդ), Գրանք անցուան նաև ու Յակով Պարսկան կը պատկանի բարու ժամանակներու Այսպէս որ զիմաստ այս անտարակներուն այլ պատմանիքմէն անուանածք, արգիւնքի, կ'արդարանի իր բանանութը, այդ անձները անզարելու համար իրենց յատակ մը կ'առնեն, այս գիմաստ պատմանիքմէն այսպէս ու գոնենլով՝ ահաւոր անսրբութեամբ Այն շատ քիչերը որոնք կապ մը պահեցին այդ

թիչ մըն ալ վար տակաւին (Յովհաննէս Յարութիւնեան, Խուրէն Զարդարեան, Խուրէն Զարդարեան, կ'երեին իննառունական թագիւնիքմէն), բայց որուն զարգացումը, լիալիք փթթուամքը կը զուգազիպին 1895—1915ի քառաւամեակին. Այսպէս տիտղոսնեցի այդ մարդկերը օրունք հասարակաց ունին գրուամբի (écriture) պաշտամանքը, արտայայտութիւնը խնամելու հզոր կամք մը, ուրիշ խօսքով՝ ոնին հրայրքը, — պարագայ՝ օրուն հանգէպ անտարբեր էին իրապաշտամքը, զօր սիալ, յիմար սեթենեթի վերածած էին եսապաշտամքը (Եղիայի զորոցը). ու աստուածացուցած Խամանթիկները, Աւելորդ չէ հոս շնորդել որ այդ սերունդն ալ համատարը զարդար մը կ'երգարանքը չի պարզէ մը կ'երգարանքը հետուէն զիտակի մը սամանական անուան թիւնը, արձակ քերթաւածներու բարակոյտին հմայքին: Տիկին եսայիան անտարբեր է, իր լաւ երակին մէջ, արտայայտութեան հարցուած արցիւն հարցերուն հարցերուն հանգէպ, գէշ երակին մէջ պատկանակները Սիսիլիին սեթենեթին, արձակ քերթաւածներու բարակոյտին հմայքին: Տիրան Չրաքեան կ'ուրանայ խորքը ու կ'առապատանի մէնին կ'արելի խնամքին, Միծարենց ու թէ քէհեան, Պարթենեան ու Զարգարեան փօխն ի փախ կը նուաճուին մէնէն ու խորքէն: Բայց ինչպէս զիտուէ տուի, հստարակաց՝ բոլորին համար ալ զրեթէ, գրական խնամքին մտանողութիւնը, Յետոյ, բացի Պարթենեանի խորքի սումանթիզէն, ու Զարգարեանի միայն առմանթիզէն, միւսուները պարկեցած աշխատանկութեան յատարաբերու որ Արքեմատանայ Գրականութեանը թիւնը — այսինքն մեր ժողովուրդի կէսին հոգեկանի կնիքովը ամրօրէն կնքաւած ստեղծագործութիւնը մը — իր աւարտը զամա է արգէն անոր մշակներուն զանգուածովի փողոսումովը ու զայն կ'արելի ընող հոգեկին իրականութեան՝ ժողովուրդի իջնումալիքը: Պատերազմէն վերջ հասկանակներու անուանութիւնը հազի թէ անունով միայն կը մույ հաւատարիմ՝ յլացքին, արուած մշակներուն զանգուածովի փողոսումովը ու զայն կ'արելի ընող հոգեկին իրականութեան՝ ժողովուրդի իջնումալիքը: Պատերազմէն վերջ հասկանակներու անուանութիւնը հազի թէ անունով միայն կը մույ հաւատարիմ՝ յլացքին, արուած մշակներուն զանգուածովի փողոսումովը ու զայն կ'առնէն իրենց իրենց կուեցան այն հոլերուն ուրկէ կ'առնէն իրենց անուանովը եւրոպական, Ամերիկան, Ամերիկան սուտաններու մէջ, իրենց զորթիքը միայն զիշելով պահնել, իրենց ապահովական պահանձները, իրենց վարդիքը կապ մը պահեցին այդ

ցեղին ընդհանուր գյուղութեանց մժերքին հետ, իրենց կարգին զիս կը ստիպին որ բացուի ուրիշ բաժանում մըն ալ:

յ) ՆՐԱԳՈՅՆ ԿԱՄ ՍՓԻՌՔԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. 1919էն ասդին, նոր հակառագիր մը ընդգրկող, Սխալ ՀՐԱՄԱՐ զայն անուանել փառություն գրականութիւն, քանի որ, հետեւով մեր մասցորդացի տարադումին աշխարհի չորս ժամկրուն, պարագին տակն է անիկա յարմարելու աւելի քան զմեղակ, զարհութիւն զայնաներու, լոկ ինքնինքը կանգուն պահել կարենալու համար: Կարճ, շատ կարճ ըքջանի մը մէջ, մօտաւորապէս երեք տարի (1919-1922) անիկա մշակուելով Պոլիս, կը փորձէ վերանորոգել ցանկութիւններու ու չեզերը նահատակներուն, աւելի քան յուսալից: Կորովի, մոյեռանդ, բայց զարծեալ հալածուելով քաղաքական անողութ հարկերէ, կ'ենթարկուի մեր ժողովութիւնի բախտին: յիրուցանումին ու մենք կը տեսնենք Արևմտահայ բարբառով մշակուած գրականութիւն մը, այդ թուականէն ապին, թարիկ, նգիպտոս, Առորիա, Պաղեստին ու զըլիաւորաբար նոր Աշխարհը, կեզրոններ ասոնք ուր այդ զրականութիւնը զեռ կը յամառի ապրիլ մին մինակը, զրեթէ Ցողլքուած իր բօլոր սուրբերէն, ընդգէմ աշխարհ մը արցելներու, ներօէն ու գուրսէն, քանի մը նուուրեալներու, խենացերու բուռն, սրտաշարժ հերոսութեամբը: Խայտարդէտ կարւածնը՝ ուր եօթանասամինի աղերեկ ու կործանուած մարդեր, իրենց երիտասարդութեան զրօշները, բգիկ բգիկ, ուսամբարձ կը քալեն՝ անմօրուս, ըրածնին չանչցող աղոց առջեն, կուլ տալով իրենց արցունքները՝ իրենց ձիձալելին փրկելու վեմ զարզութեամբ մը...:

Ահա, մեծ իր զիծերուն ու կարկանին մէջ այն համապատկերը որուն իրագործումը պիտի զառնան հետագայ հատունները, վերը պարզուած ծրագրին համաձայն: Միանգամբնզմիշտ կը յայտարարեմ թէ այս գործը ոչ յայսմաւորք մըն է հեղինակներուն վարքն ու բարքը կենսագործ, ոչ ալ բառարան մը՝ յատուկ անուններու, գիրքերու տիտղոսները, հրատարակման թուականները համառօտակի ցուցակագրող: Անիկա առումներու հանդէս մըն է, հեղինակէ հեղինակ անձնացող բայց խորքին մէջ մէկ ու նոյն զայտնութեան մը՝ իմ ժողովութիւն մէկ թեկին զայտնութեան: Մի վախնաք որ միօրինակ վերլուծաւններու չարան մը կը խոստանամ ձեզի: Մեր զրականութիւնը կազմով անձնաւորութիւնները գտականութիւնը կազմով անձնաւորութեամբ մը, ու այդ անձնաւորութեանց գործը անօթն է ուր կաղապարի ինկած է անոնց հոգին: Այնպէս որ, ժամանակէն պաշտպանուած (մէկ զարը քիչ, փոքր տեսղութիւն է երեսն հոգինները պաղեցնել կարենալու համար իրարմէ), հայ ՀՕՄԱՊԱՏԿԵՐԸ չի վախնար ինքինքը հերեւու, աղաւաղուելու վտանգէն ալ:

ալ մանրամասնութիւններու՝ մեթստը, մշակման զրութիւնը, արդիւնքները, տեսակարար կշռի զարնող միջացները պարզաբանող, բոլորն ալ հանգիպելի՝ գործին մարմինն ի լար: ի յառաջազունէ, կ'ենթազրեմ որ այս հատորները ձեռք առնող մը կը ճանչնայ Արևմտահայ գրական վաստակը իր ամբողջութեամբ, ասոր վրայ կազմած ալ է իր զատաւոտանը անձնական կամ միջնորդովի վկայութիւններով, ունի Արևելահայ Գրականութեան ձգտումներուն մասին որոշ ընտանութիւն, ու մեր օրերու օտար գրականութեամբ անց վրայ ալ քանի մը հաստատ, լայն նշմարանքներ: Այս տողերը կարող են թելաղբել գրողները, որոնք իրենց բաժինները կը հաւածեն նման աշխատանքներու մէջ (իմ զիրքին ընդհանուր տարաղութիւնը կը հասնի մինչև 1915), ու իբր այդ զգուշաւոր կ'ընէ Արիւոքի քանի մը հարիւրը անցնող գրական մշակները) բայց առաւելազեն ուղղուած են այն հասարակութեան որ հազիւթէ կ'այցուի զբելու փառասիրութենէն, ունենալով զօրաւոր համակրութիւն մը իմ ժողովուրդին իմացական նրգին, արժէ քններուն, իր մրակոյիրին: Արիւոքի մէջ մնաք զիտենք թէ որքան մէծ է թիւը այն մարզիկներուն օրոնք ի վիճակի են հղած համեստ մատենազարան մը կազմելու, օտար ընտրելագոյն հատորներու կողքին հայ լեզուով ալ բախտաւոր զիրքեր հիւրենկալող, չերոսական է՝ այս ընտրանիէն գուրս, կեցուածքը պարզ մարդոց զարծեալ, որոնք կարելի ըրին օրինակի մը համար, Ամերիկայի մէջ, Հայրենիք հանգէսին հրաշքը, ջանջախիչ մեծ ամասնութեամբը մը բանուորներէ զոյաւոր ընթերցողներու բանակ մը հանզերձելով: Ուրիշ ինդիր՝ այդ զրականութեան ներքին, տեսակարար տարութիւնը: Փաստը չի զարդիր փաստ ըլլալէ: Արիւոքի պայմաններու ծնունդ, ներկայ աշխատանքը իր տեղը կ'ուզէ այդ մատենազարաններէն ու այդ սիրտերէն ներս:

6. ՕՃԱԿԱՆ

(Ա.Ե.Չ.Հ. ՀԱՅՐԵԴԻՆ)



ԲԱՆԱՄՏԵՂՄԱԿԱՆ

ՀԱՐԱՍՔ

Դուն երգն էիր ընտանի, նին իմ մանուկ օրերուն,
Աղօթք մը լուռ, հոգեբուխ, իմ ափերուն մէջ պարման.
Յեսոյ եղար կոյս մը դուն, որուն հեռուէն կ'ըղձայի,
Եղար Աստուածն երազիս, պարզեւատու մը հարուս...:

Ամենուրեք կարելին էիր սրդուն տեսլապատ.
Մէկ-մէկ պարզել գիտէիր դուն բարդոյցներն հոգիի.
Դուն գիտերներն՝ Յիսուսին էիր ճակատն ակօսուած,
Եւ առտուները՝ ժըպտուն, յոյսի երես մը բարի...:

Յեսոյ ամբողջ միազգոյն դարձար գետին մը ճերմակ,
Ուրկէ աննոգ բալելէն եղայ տոկուն, բայց եւ կոյր...
Նուրջըս ամբողջ՝ աւերա՛կ, նոն ուր պալատ մ'էր երէկ.

Ու չեմ կրնար նին աղօթքն ես ափերուս մէջ գրկել.
Աւերակէն այս լուրած, ոչ իսկ բռչուն մը կ'անցնի.
Նոն զանգակներն երբ զարնեն, ոչ ո՛վ կ'երթայ աղօթքի...:

1943 Դեկտեմբեր

Ա.ՆԵԼ

ՈՒՐԵՄՆ ՏԷ՛Ր, ԱԼ ԻՆՉՈ՞Ւ...

Ուրեմըն ՏԷ՛Ր, ալ ինչո՞ւ, կեանքըս ապրիլ յամառիմ,
Պարպըւած եմ երբ Քեզմէ, եւ չեմ ըզզար որ Հոգիդ
Անճառապէս զար իջնէր մինչեւ արմատն իմ հոգւոյն,
Ու չըլլայինք իրարու, օսարի պէս, օսար տուն...:

Եւ ինչո՞ւ, ՏԷ՛Ր, անձկուրեամբ ես կը լեցուիմ այս գիւեր,
Երբ ընտանի հոգիներ, կուզան նիմա իմ առջեւ
Մեր երազի օրերէն, անձաւներէն պապէնի,
Որոնց սիրու բնակարան էր Քու Հոգւոյդ սրբենի...:

Բայց, Աստուա՛ծ իմ, սա հոգին, որ ամէն օր կը բացուի,
Երբ Դուն չըկաս, ալ ինչո՞ւ կեանքը ապրիլ յամառի:

Դեկտ. 1943, Անդրիլիս

Ա.ՇՏԻՇԱՏ

ԿԸ ԲԱՆԱՅ ԹԵՒՆ ԻՐ...

Որդեա՞լ, որդեակ, քէ զառ բարով, ձիեռով,
«մէրի՞կ» կանչես, ասե՞ մեռա՞ կարօսով...

Թախիծն ինչո՞ւ հոգիէս, կը բանայ թեւն իր կապար...

.
**Աչքը նամբուն, յաւէտին հողն ես հազեր, մայր, ըսին,
Ու ըսպասեր, ըսպասե՛ր, զաւկիդ հեռու հասալին,
Մատաղ ուժին մէջ որուն, աչքը՝ խաղա՛ղ, ա՛լ մըքնար...:**

**Ենչ տրմութիւն կը կախուի, կը մաղուի վար այս գիշեր...
Կը հանգի ձայնը ուուրչ. նայուածքներուն ընդմէջէն
Կ'ըսեն մեռնիլն ես ապրեր կեանքի գիրքիդ հուսկ էջեն...
Մեղմ, աչքերէս, այս գիշեր, ուու տրմութիւնդ է կախուեր...**

**Դեռ չըվազած լոյսն աչիդ, իջա՞ւ պատկերն արեգողէմ,
Զաւկիդ հէժիար ու հեռու՞ անպատմելի կարօսէն.
Մեր մայրերուն գիրն այսպէ՞ս դարեր զըրեր են արդէն...
Չըվազած լոյսն աչէդ, նոն, իջա՞ւ պատկերն արեգողէմ...:**

**Թախիծն ինչո՞ւ, այս գիշեր, խորունկ ու բաց կը սահի
Գերեզմանէն իմ հոգւոյն սըլաք մինչպէս երազի,
Դէպի շիրիմը այրի, իմ արցունքին ըսպասող...:**

**Թախիծն ինչո՞ւ, այս գիշեր, խորունկ ու բաց՝ կը սահի...
Հողին նամբով, մայր, կուզայ արցունքն այս ուս, եւ զերք ցող
կը գտնէ սիրտը սառա՞ծ՝ զաւկին անմար կարօսով...:**

ՇԷՆ - ՄՈ.Հ

18 Դեկտեմբեր 1943



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ

Ք Ր Ի Ս Ո Ս Ւ

ՆԱԽԱԳՈՅՆԻԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԷջ

Նախագոյուրեան վարդապետութիւնը Յովհաննու մէջ.— Պէտք է ըսել որ Յովհաննէսեան ըմբռնումը այդ վարդապետութեան, էապէս կը նոյնանայ Պօղոսեան ըմբռնման հետ։ Եթէ այս վերջինս Քրիստոս կը համարի իրբեւ նրկինքն եկած և հետեաբար հոգեղէն իրականութիւն մը, իրբեւ երկնաւոր մեծատուն մը և կերպարանքը Աստուծոյ Հօր, իրբեւ անդրանիկը արարածներուն, և սկզբը ամէն բանի, աւետարանին ալ էապէս նոյն մտածումն է որ կը բանաձեռէ իր բովանդակ աւետարանին մէջ։ «Էս սկզբանէ էր Բանն»։ «Եւ Բանն էր առ Աստուծած»։ «Ես եմ հացն որ յերկնից իջեալ»։ «Ելի ի Հօրէ և երթամ առ Հայր»։ «Ես և Հայր իմ մի եմք»։ «Ես ոչ ևս եմ յաշխարհի» ևայլն արտայայտութիւնները կուգան ճշգել Յովհաննու մէջ այն մտածումը թէ Յիսուս Քրիստոս, Բանը կամ Աստուծոյ Որդին ի գոյութեան էր ժամանակէն առաջ, յաւիտեաններու մէջ, իրբեւ յաւերժակից և կենակից Հօր Աստուծոյ՝ անձնաւորեալ էութեամբ մը։

Եթէ Նախագոյութեան մտածումը, իրբեւ վարդապետութիւն, Յովհաննու մէջ նոր երանգ մը չի բերեր մեզի, բայց պէտք է ըսել թէ ատով հանդերձ անփկա կը յայտնաբերէ ուրոյն կազմ և ուրոյն նկարագիր։ Եւ այս նորութիւնը կը յայտնուի մանաւանդ իր արտայայտութեան կերպին մէջ։

Արգարեւ եթէ բաղզատենք Յովհաննէսեան նախագոյութեան գաղափարը Հին Ռւխտի նոյն մտածումին հետ, պիտի տեսնենք որ այս վերջնոյ մէջ մեսիայի մը Նախագոյութեան ըմբռնումը անորոշ է և անյստակ, և շատ անգամ այդ առթիւ եղած արտայայտութիւնները չեն ենթագրեր նախագոյութեան մտածում մը։ իսկ եթէ ենթագրեն ալ՝ այդ նախագոյութիւնը սահմանափակուած կ'ըլլայ այս աշխարհով և

անով պարտադրուած ժամանակով։ Նախանթաց գլուխին մէջ Հին Ռւխտէն մէջրեռուած համարները ապացոյցներն են վերոլիշեալ հաւատութերուն։ Բայց երբ անցնինք Յովհաննէսին, հոն կը գտնենք, ըստակ, ճգրիտ, իրական և ուղղակի արտայայտութիւններ Քրիստոսի նախագոյութեան մասին։ Նախագոյութեան՝ որ անսահմանափակօրէն կը տարածուի յաւիտեաններու վրայ։ Աւետարանէն ու է մէկ զրւիում մը ընթերցումը բաւ է լուսաբանուելու և համոզուելու համար այդ մասին։

Անցնելով Համատեսական աւետարաններուն, տեսանք թէ հոն անոնք աւելի մտագրաւուած էին մեր Տիրոջ անվախճան գոյութեան վրայ չեշտել, և մի քանի անսըշան ակնարկութիւններով գոհանաւ Անոր անսկզբնականութեան մասին։ Մինչդեռ Յովհաննու աւետարանը իր ամբողջ բովանդակութեամբը, էջ առ էջ կը զեղուանժամանակ եւ անսկզբնան, անսկզբը եւ անվախճան, ուրիշ խօսքով՝ յաւիտեաններու մէջ կենդանի եղող Քրիստոսի մըտածումով։

Իրբեւ վերջին բաղզատութիւն, երբ անզրագառնանք Պօղոս առաքեալի թուղթերուն, անտարակոյս թէ առաքեալը անոնց մէջ ամենախոր և ուղղափառ կերպով կը բանաձեռէ Քրիստոսի նախագոյութեան վրայ, բայց ինչ որ, եթէ ներելի է ըսել մեզ, զերազանցութիւնը կը կազմէ Յովհաննէսեան արտայայտութեան, Պօղոսեան բանաձեռին բաղզատմամբ, այդ ալ այն է որ մինչ Պօղոս իր թուղթերուն մէջ ինքն է որ կը մտածէ և կը խօսի նախագոյութեանը մասին Քրիստոսի, Յովհաննու աւետարանին մէջ այդ նախագոյութիւնը յայտարարուած կը գտնենք նոյն ինքն Քրիստոսի կողմէ, ինքն իրեն իսկ համար ուրիշ խօսքով՝ Պօղոս առաքեալի մէջ ունինք Քրիստոսի նախագոյութեան մասին — Քրիստոսի՝ այնպէս ինչպէս յայտնուած էր Անի իրեն Դամասկոսի ճամբռուն տեսիլքին մէջ — իր՝ Պօղոսի խորհուրդն ու հաւատքը, մինչգեռ Յովհաննէս է միայն որ մեզ կը բերէ Քրիստոսի իսկ ուղղակի յայտնութիւնը իր նախագոյութեան մասին։ Ու այդ յայտնութիւնը զերազանց արժեք մը կը ներկայացնէ, տրուած ըլլալով Յովհաննու ամենախորին մտերմութիւնը Քրիստոսի անձին իսկ հետ։

Ազգեցուրինը այդ վարդապետութեան . — նախագոյութեան այս մտածումը՝ պէտք է ըսել, ամէնէն աւելի ի պատուի և ի կիրարկութեան եղաւ երրորդութենական հերետիկոսութեանց, մասնաւրաբար Արիստական պայքարներու առթիւ, որ կեղոնական և տիրական երեսը կազմից յիշեալ հերետիկոսութեանց :

Երրորդութենական հերետիկոսութեանց հիմնական մտածումը կը կայանայ այն հաւաստումին մէջ թէ Բանը, Որդին կամ Յիսուսու Քրիստոսու որ ծնաւ և բնակեցաւ աշխարհի մէջ, ճշմարտապէս և էապէս Սատուած չէ . ուրիշ խօսքով՝ համագոյակից չէ Հօր Աստուծոյ հետ Այսպէսով Քրիստոսի աստուածութեան հետ կը վտանգուէր նաև յաւիտեաններու մէջ անոր նախագոյութեան իրականութիւնը :

Որդեգրականութիւնը՝ մին այդ հերետիկոսութիւններէն, լնդունելով Քրիստոսի մէջ մեղի նման սոսկական մարդ մը միայն, որ սակայն, Սատուծոյ առջև չնորդ գտնելով՝ կ'ըլլայ ընտրութեան անօթ մը աստուածային ծրագիրներու իրագործման, կ'որդեգրուի Հօր Աստուծոյ կողմէ, նոզին իսկ մտածումով կը մերժէ Յիսուսի նախագոյութիւնը :

Ուրիշ մը այդ հերետիկոսութիւններէն՝ Ստորակարգականները, ուսուցանելով հանգերձ Որդւոյն աստուածութիւնը, կը ստորակարգեն զայն իրեն Աստուած՝ Հօր Աստուծոյ։ Որդին Աստուած է, ճշմարտապէս Սատուած, և սակայն ստորակարգ Հօր, Երկու այս հաւասատութենքը արգարկ իրենց բացարձակ առումին մէջ, հակասական են։ Եթէ Որդին էապէս Աստուած է, ոչ մէկ բանի ստորակարգ է, իսկ եթէ իրապէս ստորակարգ է Հօր՝ ուրեմն Աստուած չէ։ Դարձեալ այսպէսով, նախագոյութեան մը տածումը կը մնայ շփոթ և անիրական։

Արիստականութիւնը՝ ամէնէն զիխաւուրը և կեղրոնականը այդ հերետիկոսութիւններէն, կուգայ միանգամ լնդմիլչտ բացարձակ և յատակ զատորոշութիւնը մատնանշել, լնդմէջ Որդւոյն Աստուածութեան, հետեարար անոր համագոյակցութեան և անոր ստորակարգութեան, հետեարար աւրաբածութեան, և վարդապետել վերջին մտածումը միայն։ Բայ արիստականութեան, Որդին յաւիտեանակից չէ Հօր. կար

ժամանակ երբ գոյութիւն չունէր Որդին։ Ան իրապէս Որդի չէ, այլ արարած մը, ստեղծուած սակայն յոչընչէ։ Քրիստոսու ունի մարդկային մարմին և մարդկային հոգի. բայց մարդկային իմացականութեան փոխարէն իր մէջ բնակած ունի Աստուածային կոկոսը։ Ուրեմն Որդին ունի սկիզբ մը, պատկանելով արարածներու կարգին, և այդու իսկ իսպառ անհաղորդ՝ Հօր էութեան։

Արդ, քրիստոնէական եկեղեցին այսպէսով լուրջ և էական հարցի մը դէմ կը գտնէր ինքզինքը։ Յիշեալ հերետիկոսութիւնները, մերժելով Որդւոյն նախագոյութիւնը, մերժած կ'ըլլային Քրիստոսի Աստուածութիւնը, և ատոր իրըն հետեանք կը խախտէին Երրորդութեան Վարդապետութիւնը։ Այս պատճառաւ է որ այս առթիւ յարուցուած պայքարները իրաւամբ որակուեցան Երրորդութենական, քանի որ եկեղեցին, ամբողջ Դ և Ե դարերուն կուռելով նախագոյութեան վարդապետութեան թըշնամիններուն դէմ, էապէս պաշտպանած կ'ըլլար Երրորդութեան Վարդապետութիւնը։ Հետեարար եկեղեցին բուռն կերպով կառչեցաւ նախագոյութեան վարդապետութեան, նախանձախնդրօրէն պաշտպանեց և ջատագովեց զայն։ — Հոս պէտք է ըսկել անաթէ նախագոյութեան այդ մտածումը էապէս Յովհաննէսին նախագոյութեան ըմբռանում է, որ արդարն եղաւ միակ ներշընչարանը Երրորդութենական պայքարներու մէջ հերոսացող ուղղափառ հայրերուն։ Յովհաննէսին նախագոյութեան ազգեցութիւնը տիրական եղաւ նիկիոյ ժողովին մէջ խմբագրուած բանաձեկն։ Աստուած Աստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճըշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած։ Յովհաննէսին այդ շունչով վառուած նիկիոյ ժողովին հերօսը ընդդէմ Արիստի կը պաշտպանէր Քրիստոսի նախագոյութիւնը յաւերժական յաւիտեաններու մէջ կենանի Հօրը հետ համապատուարար։ Յովհաննէսին նախագոյութեան նոյն ըմբռանում էր գարձեալ որ ծաւալեցաւ մասնաւորաբար Աղեքսանդրեան ուղղափառ հայրերուն մէջ, որոնք Քրիստոսի նախագոյութեան ի խնդիր, շեշտեցին Քրիստոսի Աստուածութեան վրայ ընդդէմ որդեգրականներուն, և պնդեցին Քրիստոսի համա-

պատուութեան վրայ, ընդդէմ Ստորակարգականներուն։ Վերջապէս Քրիստոսի համագոյականութեան մտածումը, որ երջանիկ և յաղթական պտուղը եղաւ Երրորդութենական երկար պայքարներուն, էապէս արդիւնքը եղաւ նախագոյութեան այն ըմբռնումին, որ այնքան ուղղափառօրէն քանաձեռւած է Յովհաննու Աւետարանին մէջ։

Այս առթիւ արժան է որ յիշատակենք նաև Հայաստանեայց Առաքելական և Ուղղափառ Եկեղեցւոյ ունեցած կեցուածքը էական այս վարդապետութեան մասին։ Հայաստանեայց Եկեղեցին իբրև ջերմ և հաւատարիմ աշակերտ և հետևող մասնաւորաբար Աղեքսանդրեան քրիստոնէական ուղղափառ դպրոցին, զստահապէս Կրնանք ըսել որ նախագոյութեան մասին իր ունեցած սկզբունքը էապէս Աղեքսանդրեան ուղղութեան կնիքը կը կրէ։ այսինքն անիկա կը նույնունի և կը վարդապետէ թէ Քրիստոս, Աստուծոյ Որդին, Բանն Աստուծը, յաւիտենակից և յաւերժակից է Հօր հետ, համապատուաբար և համագոյաբար։ Յատեկանչական են Հայաստանեայց Եկեղեցւոյ և Դաւանութիւն Ուղղափառ Հաւատոյն էն վերցուած մէջքերումերը ի վկայութիւն վերոյիշեալ հաւաստումին։ «Հաւատամք գիտան Աստուծած, անեղ, ծնեալ և սկսեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս։ ոչ յետոյ և ոչ կրտսեր, այլ որքան Հայրն՝ Հայր, ընդ նմին և Որդին՝ Որդին։ կամ ուրիշ տեղ մը նոյնէն «Որպէս ոչ է սկիզբն Աստուծութեան նորա»։ Նոյնքան յատկանչական են նաև մեր շարականներով իրագործուած ուղղափառ բանաձեռւմը այս մասին։ Ահա քանի մը վկայութիւններ։ «Անժամանակ ծոցոյ ծնունդ Հօր էական»։ «Յառաջ քան զարուսեակ անմայր ծնունդ Հօր ի յերկինս»։ (Կն. Յովակիմայ և Աննայի, «Ողորմ.»)։ «Անժամանակն ի Հօրէ և անմարմին ծոցածին ծնունդ» (Երկն. էջ 24)։ «Որ ի կառս քերովէից բազմեալ լոյս քան զարե յառաջ» (Երկն. էջ 28)։ «Անսկիզբն էակից Բանդ Հօր։ որ էիր յառաջ քան զյաւիտեանս» (Երկն. էջ 40)։ «Զքեզ աղաչեմք անսկզբնակից Հօր Որդի» (Երկն. էջ 56)։ «Օրհնեալ ես Քրիստոս նախայաւիտեան Բանդ» (Երկն. էջ 65)։ «Այսօր ծնար որ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս որդի» (Երկն. էջ 65) և այլն։ Ճըշ-

գելէ վերջ այսպէս մեր Եկեղեցւոյ վարդապետական կեցուածքը Քրիստոսի նախագոյութեան վարդապետութեան նկատմամբ, իրաւամբ կրնանք ըսել թէ Յովհաննէսկան շունչը, Աղեքսանդրեան խողովակով, մեր Եկեղեցւոյ մէջ ալ այս առթիւ կայ, և որ այսպէսով ամենաիրական ներշնչարանը եղաւ մեր աստուծածաբան մտքերուն։

Արժեկը Յովհաննու նպասգոյուրեան վարդապետութեան։ — Կարենալ ճշգելու համար այդ արժէքը անոր, հարկ է անդրագարձում մը ընել այս վարդապետութեան ունեցած նախալնթացին։ Մենք այդ նախալնթացին մէջ տեսանք թէ ի նախագոյութեան եղողը մերթ թագաւոր մըն է, Դաւթի ցեղէն սերած, մերթ Մեսիա մը, որ պիտի փրկէ Խօրայէլը իր գերութեան լուծէն, մերթ յատկանշուեցաւ անիկա իրրև հզօր իշխան, հայր հանգերձելոյ աշխարհի։ Համատեսական աւետարաններու մէջ այս անգամ աւելի վերին ըմբռնումով մը, այդ նախագոյութիւն Յիսուս Քրիստոսնէ, որ գործեց և վաստակեցաւ իբրև մարդ այս աշխարհի վրայ։ Վերջապէս Պօղոս առաքեալի մօտ անիկա Քրիստոս Յիսուսն է, որ եղաւ գերազանց բարեխօսը և միջնորդը Աստուծոյ և մարդկան։ Բայց երբ մօտենանք Յովհաննու, բոլորովին տարբեր է պատկերը այնտեղ։ Անիկա այս անգամ կ'ուզէ յատկանշել ոչ թէ Թագաւորի մը, Մեսիայի մը և կամ լոկ Յիսուս Քրիստոսի մը նախագոյութիւնը, այլ այդ բոլորով հանգերձ, աւետարանը ամէնէն աւելի իր չեշտը կը գնէ այնպիսի նախագոյութեան մը վրայ որ Բանին է գերազանցապէս։ Մեսիայէ մը և կամ Յիսուս Քրիստոսէ մը աւելի Բանաւորութիւնն է, Աստուծածային անհուն Միտքն է ի նախագոյութեան եղողը, մարգացեալ փրկիչով աշխարհի մէջ յայտնուած։ «Ի սկզբանէ էր Բանն» մտածումը ամենաստոյդ վկայութիւնն է վերոյիշեալ հաւատատումին։ Բայց ոչ միայն այդ, այլ նաև, երբ ուշագրութեամբ կարդանք աւետարանէն Քրիստոսի արտասանած քարոզներուն մէջ իր նախագոյութեան մասին ըրած յայտարարութիւնները, որոշապէս պիտի տեսնենք թէ, Ան ամէնէն աւելի իր բանաւորական նկարագիրը կը մատնանշէ և կը կապէ իր նախագոյութեան։ Այսպէս Քրիստոս կը սիրէ ինքինք կոչել ձշմար-

առողջիւն, ճանապարհ, լոյս, գործակից զօր ստեղծագործութեան, և իրազործող Անոր ծրագիրներուն, որնք արդարեւ իրենց խորը ունին յիշեալ հաւաստումը գերազանցապէս։ Արդ, նախագոյն այդ իրականութիւնը նկատել Բանաւորութիւնը, Միտքը, Նուռուը, որ միայն կրնայ ընդդրկել անհուն յաւիտեաններ, Թագաւորէ մը, կամ Մեսիայէ մը աւելի, կը կազմէ ահա ուրոյն այն նկարագիրը և հետեարար այն արժէքը, որ Յովհաննէսեան նախագոյութեան վարդապետութիւնն է։ Իայց քայլ մը աւելի առաջ երթալով, պէտք է ըսկէ թէ, մատնանշուած այդ արժէքը նոր չեշտ մը կ'ընդունի, մանաւանդ անոր համար որ, նախագոյն այդ Բանաւորութիւնը, այսպէս ըսենք, առանձինն և որբացած իրականութիւն մը չէ, այլ անիկա իրքն ըմբռնում, զինք կանխող նոյնասեռ մասածումները անդրանցնելէ վերջ, ետ կը վերադառնայ այս անգամ այդ բոլորը իր մէջ պարուրելու, յօրինելով երջանիկ համազրութիւնն մը բանու տիտղոսաւորումին ներքեւ։ Սյուինքն նախագոյն այդ Բանաւորութիւնը իր մէջ կ'ենթագրէ Հին Ուխտի Մեսիան, Թագաւորը, Հզօր Իշխանը. Նոր Ուխտի՝ Յիսուս Քրիստոսը, և առաքեալին՝ Աստուծոյ Որդին։ Այսպէսով Յովհաննէսեան ըմբռնումը կը կապուի այդ բոլորին, կը տարածուի ու կը ծաղկի այդ բոլորով և այդ բոլորին մէջ, յօրինելով գեղեցիկ և վսեմ այն ըմբռնումը Բանին նախագոյութեան որ Յովհաննէսինն է ստուգապէս։

Ահա այն գեղեցկութիւնը, և ինչո՞ւ չէ, աստուծայնութիւնը, որ կը կազմէ արժէքը Զորորդ աւետարանի Քրիստոսի նախագոյութեան վարդապետութեան։

ԳՐԻԳՈՐ ԱԲԴ. ԱՍԿԱՆԵԱՆ



ՊԱՂԵՍՏԻՆԱԳՐԱԿԱՆ

ԱԱԼԱՀԷՏՏԻՆԻ ԱՄՐՈՑԸ

ՍԻՆԱՅԻ ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷԶ

Բ. — Ամբողին մասնաւոր նկարագիրը.
ա) — Մուտքը. — Խնչպէս որ տեսանք, ամբողին մուտքը կը բաղկանայ պարիսպի պատուարին ուղղահայեց երկու անդաստակներէ, առաջինը 6×7 իսկ երկրորդը՝ $4,5 \times 4,5$ քռ. մեղք տարածութեամբ։ Երկրորդ անդաստակն սեմը առաջինի սեմէն 1,50 մեղք բարձրէ է։ Երկու անդաստակներն ալ կամարակապ էին, ինչպէս որ ցոյց կու տայ փոքր գաւիթը։ Սանդուղը որմագրուած է և կը հաղորդակցի նմանապէս կամարակապ կիսաբոլոր նրբանցքի մը հետո։ Այս կամարը կը շարունակուի ասոր մասը կազմող սանդուղին վերեէն ու դուռն ալ մէջը առնելով նոյն իսկ, ինչ որ ենթագրել կու տայ թէ ամբողին գլխաւոր մուտքը իսցող փլատակներու կոյտը բեկորներն են պարիսպին մէջ բացուող ու սանդուղը իր ամբողջ երկարութեամբը պաշտպանող ներքին ուրիշ անդաստակի մը կամ գաւիթի մը։ Սանդուղին և ասոր համար ձգուած ամբողջ բաժնին գետնէն վեր տարբերութիւնը մօտաւորապէս 3,5 մեղք է։

Գլխաւոր դուռը բացառութիւն ըլլալով, բոլոր բացուածները, գուռ, պատուհան, օգամուտ ևայլն, կամարանկիւն ըլջանակ ունին ու բոլորն ալ կը փակուէին փայտէ առանցքի վրայ գարծող և գէպի ներս բացուող մեծդի գուռներով։ Մինչեւ հիմա վեր վար կը տեսնուին գեռ ծակուած քարեր՝ որոնց միջն փայտէ առանցքը կը դառնար։ Պատերուն մէջ փորուած խոռոչները ցոյց կու տան տեղերը այն գերաններուն՝ որոնք իրը նիգ կը ծառայէին գոցուած գուռներուն։

Գլխաւոր դուռը երկու մեղք բարձրութեան վրայ 1,80 մեղք կը հաշուըլէր. ան կը փակուէր իր ամբողջ երկարութեամբը պատին մինչև խորքը միսրանուող հաստ նիգով մը։ Դրան թակաղալը զոյդ ուռով գարգարուն լայն ցցուակ մը կը ներկայա-

ցընէ: Երարու վերադիր երկու մասի բաժնուած կղպանքը զարգարուած է վեցթեւաստղով մը: Դրան կղպանքին վերև ութը սնդմ. հաստութեամբ իր բարաւոր ծառայող քարի մը վրայ կը կարգացուի արձանագրութիւն մը՝ զոր պիտի տհանենք իր տեղը, ուրիշներու կարգին: Արձանագրիին ուղղութեամբ պատը լեցուն չէ և միջանկեալ այս պարապութիւնը կը չարունակուի երկու կողերը խոչըր քարերով հիւսուած կիսարուոր բաժնի մը մէջ:

Ուսուցիկ խծկակով մը եղերուած այս յիշատակարանը ամբողջովին մամուռով ու քարաքասով ծածկուած ըլլալուն, անոր ընթերցումը շատ կը գտուարացնէ: Յիշատակարանին երկու ծայրերուն վրայ բուլորչի երկու վահաններ քանդակուած են, ուռուցիկ, խաչանիչ հինգ ստիճններով զարգարուած: Վահանները կը հանդչին խաչաձև կոթով և վերէն վար չեղ զիրքով երկու դաշոյններու վրայ:

թ) — Երջապատը. — Ամրացը չըջապատող պարխոպը ամբողջովին հիւսուած է ժայռին բնական պսակին վրայ: Այս չըջապատը հարթ է ու թեթեօրէն երկարած գէպի հիւսիս-արևելք, ուր կը վերջանայ շատ սուր անկիւնով մը: Մինչդեռ հարաւարեւմտեան մասը շատ աւելի լայն է և կը գրաւէ ընդարձակ ներքնագաւիթը՝ որուն մէջտեղերն է որ կառուցուած են հանրային շէնքերը: Ամրող չըջապատը շինուած է իւրաքանչիւրը 60×40 սնդմ. մեծութեամբ և միաշար կոփածոյ քարերով: Բարձրութիւնը մօտաւորապէս $2,80$ մեղր է, որքան որ կարելի ըլլար դատել գլխաւոր զրան մօտանազարտ մնացած պատի բեկորէ մը: Երջապատին տարածութիւնն է՝ 145 մեղր երկար և 87 մեղր իր ամէնէն մեծ լայնութեան վրայ, ընդհանրապէս երկարած ըլլալով զգաւարար գէպի հիւսիս-արևելք: Ինչպէս որ յիշեր էինք քանիցս անգամ, ամրոցը ամբողջութեամբ հաստատուն ժայռին վրայ կառուցուած ըլլալով, անոր չըջապատն ալ առած է ժայռին չըջապիթին ձեւը, որով չափազանց անկանոն: Եւ ճիշտ այս պատճառով է որ չըջապատին թանձրութիւնն ալ նոյնը չէ միշտ, հիւսիսային բաժնին մէջ ըլլալով չափազանց նեղ, իր 1,50 մեղր, իսկ ալլուր պատին թանձրութիւնը կը հասնի 2 մեղր 80ի: Պատի ամէնէն

թանձր մասերուն մէջ ձգուած են նեղ ճամբանիկ, նրբանցքի տեղ ծառայով, որ գէպի վեր եր ելքին վրայ, կը հանգի աշտարականերու գարգաթին, պատի նեղ ծնօսով մը պաշտպանուած: Հոս կը բարձրանալուն, ներսէն, նեղ և ուղիղ սանդուղներով՝ ուրանցէ մին կը մնայ ցարդ յինորմներէն մէկուն յատակը: Չի զիացուիր թէ ըրջապատը իր ամբողջ երկայնքին վրայ ատամնաձեւ էր թէ ոչ. փլատակները ծածկած են ամբողջ չըրջապատը և հազիւ թէ միայն երեք հրածերպիր կը տեսնուին անոր վրայ, իւրաքանչիւրը 3,50 մեղր իրարմէ հեռաւորութեամբ:

Գլխաւոր մուտքին երկու կողմը կը կանգնին երկու աշտարակներ, մին կարկառուն, իսկ միւսը ներսէն ամբացուած: Երրորդ աշտարակ մը, հազիւ կանգուն, կ'ամբացնէ չըրջապատին ծայրագոյն սուր անկիւնը. իսկ չորրորդ մը, շատ աւելի կարկառուն, կը կանգնի հարաւային անկեան վրայ: Երջապատին արեւելիսն կողմի երկու ցցուածքները կը յատկանչին իր յինորմ ծառայող քառակուսի աշտարակներուն տեղը: Երջապատին ցցուն միւս անկիւնները ամբացուած չեն ու իր ամբողջ երկարութեանը վրայ միայն երեք մոյթեր կը տեսնուին: Աշտարակներուն մէջտեղերը տեսնուող եօթը այլ ցցուածքներ կը ծառայեն իր պահապանի աշտարակ և հո՛ս է որ կը բնակէին պահապանի աշտարակ և հոկեն իսկ պաշտօնով չըջապատին և տար ցայդապահներու ուղիներու անցքին: Այս աշտարակներէն մէկը երկու յարկանի է, իսկ միւսին գուռուը կը կրէ երկու եղնիներով զարգարուն ճականաց մը: Դիտելի է որ բոլորչի աշտարակները իւրենց ստորոտը կը ներկայացնին զէպի գուրս հակած և ելքի իր կեղծ գուռ ծառայող գոց և որմուած փոքրիկ նրբանցք մը:

զ) — Բնակարանները. — Ամրոցին բնակարաններուն մեծագոյն մասը հազիւ թէ պառկած մարզու մը լայնքին ու երկարութեան բաւող խցիկներ են, որոնց առանց չաղախի հիւսուած չոր պատերը միայն $40-50$ սնդմ. թանձր են և կէս մարզու հասակ միայն բարձր ըլլալով, կը ծառայեն հովի գէմ պաշտպանուելու համար, խցիկներու մեծագոյն մասին վրան բաց է, թէ և հարաւային անկեան վրայ չարուած կան կա-

մարտկոսպ կամ հարթ տանիքով ծածկուած խցիկներ։ Առանք անդ անդ այնքան խառն նաշգութ են որ երեք յարկ իրարու վրայ գրուածներ աւ կամ Շատ մը խուցերու մուտքը գրեթէ ամբողջովին խափանուած է փլատակներով։

Արեւելեան պարիսպի երկայնքին խծկուող անշաղախ չոր քարերու զիրտերը պահ մը կարծել տուին որ անձնք ամբոցին ախոռներն են, կամ գոմերը ու նոյնքան զիտելի էր որ նման հետքեր երեք անջատ տեղերու վրայ կը տեսնուէին։

Դ) — Մթերանցները։ — Բովանդակ ամբոցին մէջ մէկը միւսէն մեծ և իրարմէ հեռու երկու ընդարձակ մթերանցներ կը տեսնուին։ Արեւելեան կողմի մթերանցը գուրսէն պաշտպանուած է խնամուած բնակարանով մը, կամ արակապ գուռով մը և իրարու հաջորդակից երկու մեծ սենեակներով։ Այս բնակարանին կից և պարէնի որպէս ամբար ծառայող վիմափոր այս խոռոշը 5,70 մեղք լայնութիւն և չուրջ 12 մեղք բարձրութիւն ունի և բաւական անկանոն կերպով ժայռին մէջ փորուած է մինչև 6 մեղք խորութեամբ, պատերը բուլորովին փեսեկառուած վիճակով։ Կիսազանածե իր կամարը ամրացնուած է խարիսխները ժայռին մէջ ձգուած ազեղով մը։ Բնակարանին ներսէն ձգուող ունեցուելով մը կ'իջնէին մթերանոց։

Երկրորդ մթերանոցը, առաջինէն չա'տ աւելի կարեոր, փորուած էր նոյնպէս ժայռին մէջ և կը ներկայացնէր խնամուած չինութիւն մը, ունենալով $10,70 \times 20$ քո. մեղք տարածութիւն մը, 7,50 մեղք խորութեամբ և խնամով կոփուած քարէ պատերով։ Պատերուն ճեղքուածները նոյնքան խնամով կրաղիւսուած են, ինչպէս ամրոցին ջրամբարները։ Խոռոչը կամարուած է զանազան մեծութեամբ ուղղանկիւն վեց սիւներով բռնուած չորս զոյգ գմբէթով։ Պատերուն մէջ փորուած խորչերը կը ծառայէին ճրագակալի, վասն զի քանի մը գմբէթներու վրայ բացուող լաւամուտները բաւական չէին մթերանոցի ներքին լուսաւորութեան։ Կեզրոնը, հողին մէջ փորուած էր բոլորչի շտեմարան մը, որ հաւանաբար ջրամբար մըն էր։ Մուտքի դրան մօտ, մըզկիթին մերձաւոր անկեան մէջ, փակ միջոց մը կը բաժնէր գէպի ներքնայարկ մուտքը։

Ե) — Մեծ ու փոքր մզկիթները։ — Գետանէն մէկ մեղք բարձր կառուցուած մեծ մզկիթը ունի $5,60 \times 10,70$ քո. մեղք տարածութիւն, ուր կը մանէին ճակատէն և քովածի երկու աստիճաններով։ Շէնքը բարձրացներու ունէր, 0,80 մ. լայնքով, իսկ կողմեակի երկրորդ գուռը չատ աւելի փոքր էր։ Ճակատին վրայ զըրուած էին չատ ցած երկու պատուհաններ, ու ներսը, խորքին վրայ, կը տեսնուէր մզկիթին մինրապը, որուն խորչը զարգարուած էր առանձին յիշատակարանով։ Մինրապին զարդարանքը չատ պարզ է և կը կայանայ գէպի կեզրուական վարդեակը երկարուող մատնէքներէ։ Այս բոլորը եղերուած է զարգական դարեւանդով մը, անկիւններուն մէջ ցցուած երկու վարդեակներով։

Փոքր մզկիթին տարածութիւնն է 5,80 $\times 8$ քո. մեղք, ուս ալ հարթ գետնի մը վրայ կառուցուած է, գետնէն 1,50 մեղք բարձր։ Դուռը արեւետեան կողմէն է քանի մը աստիճաններով և յայտնի չէ թէ գոցուած էր կամ ոչ, վասն զի պատերը ամբողջովին փլած են։ Այս երկրորդ մզկիթին միայն զրպին կը մեայ կանգուն։

Ղ) — Զամբարները։ — Ինչպէս տեսանք, երկու մզկիթներուն յատակը ջրամբարներ (citerne) չինուած են, իւրաքանչիւրը իր վրայի չենքին տարածութեամբ։ Այս երեսոյթը չատ ընդհանրացած է Սուրբոյ և Պաղեստինի մէջ, ինչպէս նաև այլուր։ Հալէպի մեծ մզկիթին յատակը ընդարձակ ջրամբար է, մեծագոյնը քաղաքի բոլոր ջրամբարներուն։ Նոյն նաև քաղաքի հին եկեղեցիներուն համար։

Մեծ ջրամբարը չաւրջ 8 մեղք խորութիւն ունի և մաւրքն ալ դուրսէն է, զրպիին տակը ու զրան սեմին վրայ զըրուող փոս քարը այնպէս մը զրուած է որ տանիքէն հոսող ջուրը դիւրութեամբ ջրամբարը լեցուի։ Այս մուտքը փոքր պատով մը պաշտպանուած է որպէս զի մարդոց ձեռքէն ու ոտքերէն հեռու մեայ և մաքուր։ Ժայռին աջ անկեան մէջ փորուած նեղ սանդուղով մը ջրամբար կ'իջնեն։ Ջրամ-

բարը ներսէն ունի գլանածե կամար մը:

Երկրորդ ջրամբարը նմանապէս փոքր մզկիթին տակն էր, չուրջ 5 մեղր խորութեամբ և կամարն ալ, առաջինին պէս, ամբացուած էր քարաշիւս երկու ազեղներով: Դուռը գուրսէն էր, զբաղելին տակը: Երկու ջրամբարներուն ալ մուտքին վրայ կ'երեան մասնաւոր յիշատակարաններ(*):

Գ. — Ամրոցին յիշատակարանները. Սաւալահէտափին կառուցանել տուած Քալակ Կինտիի ամրոցը բաւական թիւով յիշատակարաններ կը հաշուէ, որոնք իր չըջանի պատմական անցքերու վերակազմութեան տեսակէտով կարենոր նպաստ մը կը կազմին: Ամրոցին գոյութիւնը առաջին անգամ Հնագիտական աշխարհին ժանօթացուց՝ Մարոքի Երկրաբանական Սպասարկութեան պետ J. Barthoux, որ 1912ին Սինայական թերակղզին այցելած էր մասնաւոր առաքելութեամբ մը, վերագրածին հետը Եւրոպա տանելով քանի մը յիշատակարաններու թուղթի վրայ առնուած պատկերները (es-tanpage): Պր. Պարթու քանի մը ամիս վերջ կրկին կ'ուղեւորէր Սինայի թերակղզին, այս անգամ հետաք բերելով բերդին յատակագիծը, լուսանկարներ և գրոշմուած նոր պատկերներ: Պր. Պարթուի հետախուզութիւններով երեան հանուած վեց յիշատատակարաններ խնամով քննուեցան Պր.

Gaston Wietի կողմէ, օժանդակութեամբ Պր. Max Van Berchemի, և երկու գիտունները անոնցմէ միայն չորսը կրցին կարդալ, մայեալ երկութիւն լրիւ ընթերցման համար պէտք տեսած ըլլալով տեղւոյն վրայ տեսնելու անոնց բնագիրները: Պր. Պարթու գտած էր հետեւեալ յիշատակարանները. ա. Մուտքի գրան վերեւ. բ. Փոքր մզկիթին հազորքակից ջրամբարի մուտքին վըրայ. գ. Մեծ մզկիթի ջրամբարի մուտքին վըրայ. դ. Մեծ մզկիթի զբաղելին վըրայ. ե. Մեծ մզկիթի միհրապին վըրայ և զ. Մզկիթներու հրապարակի զբաղելին վըրայ:

ա. — Ամրոցին մուտքի գուռը զարդարուած է հետեւեալ յիշատակարանով, մրակուոր քարի մը վըրայ, ստորին մասը աւերուած և խծկակով մը եղերուած, այսպէս:

«Թող Սասուած երկար իշխանութիւնը մեր

շիրոց՝ կլ-Մալիֆ կլ-Նազիր Սալահ կլ-Տիմինա վա'լ-Տին, իսլամութեան և միւսիմաններու Սուլրանին, Էյուսի որդի Ապուլ-Մուզաֆֆար Ենուանութին, հաւատացեալներու Էմիրի բարեկամին: Նա շինց այս երկու աշարակները և նույրական դրուք եւ այս(?) մզկիթը, Ասունծոյ համար (բոդ փառաւոր մեայ), Բարակիմ, որդի Ապու Պարի, որդի . . . (ժիշղո՞ս մը) . . . կլ-Ասիլի, կլ-Նազիրի, 583 տարու երկրորդ ճիւմատային (= 1187 օգոստոս):»

բ. — Փոքր ջրամբարի մուտքի յիշատակարանն ալ միակուր քար մըն է, 55 × 48 քո. սնգմ. մեծութեամբ, տեղ տեղ գէշ կերպով մլասուած, վերէն ու աջ կողմէն սկսած ըլլալով բոլորօվին մաշիլ, ամբողջ տասը տող, առաջինէն նուազ խնամուած նաշքի էյյուպեան հնաւուրց գիրերով, այսպէս:

«Թող Սասուած երկար իշխանութիւնը մեր շիրոց, կլ-Մալիֆ կլ-Նազիր Սալահ կլ-Տիմինա վա'լ-Տին, իսլամութեան և միւսիմաններու Սուլրանին, բարեկամը հաւատացեալներու Էմիրին: Էյուսի որդի Ենուանութին կուշական մզկիթը կառոյց Մուհամեմսի որդի Ալին, . . . (ժիշղո՞ս մը) . . . կլ-Նազիրի, կլ-Ասիլի, և զերին(?) կլ-Մալիֆ կլ-Աֆսալի, Նուր կլ-Տինի, Ենուանութին որդի, Էյուսի որդի Ալի, Սա (աւարեցաւ) 581 տարու սաֆար(?) ամսուն (= 1185 մայիս): Նա Սասունծի կը խնդրէ բարի յաջողութիւն և յահիսենական երջանկութիւն, և ուռու դժողովի կրակին: Գովաս միակ Սասունծոյն»:

գ. — Մեծ մզկիթի ստորերկրեայ ջրամբարին յիշատակարանը քանդակուած է նոյն ոճի գիրով և 41 × 57 քո. սնգմ. մեծութեամբ վերէն գէպի ձախ կոտրած սալաքարի մը վըրայ, ամբողջը տասնըմէկ տող, առանց կէտագրութեան և նշանագրի, այսպէս:

«Թող Սասուած երկար իշխանութիւնը մեր շիրոց՝ կլ-Մալիֆ կլ-Նազիրի Սալահ կլ-Տիմինա վա'լ-Տին, իսլամութեան և միւսիմաններու Սուլրանին, հաւատացեալներու Էմիրի բարեկամին: Սա յահարաւն ու նույրական մզկիթը կառոյց Մուհամեմսի որդի Ալի, . . . (ժիշղո՞ս մը) . . . կլ-Նազիրի, կլ-Ասիլի, կլ-Մուզաֆֆարի, կլ-Թագավիլի: Ճիւմութիւնը աւարեցաւ 583 տարու շիկլալ ամսոյ մեջ (= 1187 դեկտեմբեր):»

(*) J. Barthoux: Description d'une Hortesesse de Saladin: Syria, Paris, Գ. Հատուր, 1922, էջ 44-57.

Ո՞ւ Հուսանկարին վրայէն և ոչ ալ գրոշ-
մուած նկարէն կարելի եղաւ 11րդ տողը
կարդաւ:

դ. և ե. — Մեծ կղկիթին զբայլիին և
մինրապին վրայի արձանապիրները կարելի
չե եղած կարգալ բոլորովին եղծուած ըլլա-
րուն. հո՛ս ալ երեցող դիրերը գեղեցիկնախ-
շի էլլուպեան են, ծաղկուն քու փիով խառն

զ. — Վեցերորդ յիշատակարանը՝ որ մըզ-
կիթներու հրապարակի պատուի զբայլիին վրայ
է ու գուրսէն պարիսպին մէջ աղուցուած,
ունի $2,12 \times 0,52$ մետր քառ. մէծութիւն.
առաջին երեք տողերը նախշի էլլուպեան
են, միջակ գիրերով, արագէս:

Անհա՛ ինչ որ հրամայեց ընել էլ-Մալիի
էլ-Եազիր Սալահ էլ-Տիմեա վա՛լ-Տիմ, ընդ
ժամուրեամբ (?) իր եղրու էլ-Մալիի էլ-Աշիլ
Սիյֆ էլ-Տիմ: Էմիր Սարիմ էլ-Տիմ Պարցա
էլ-Աշիլի հսկեց շիմուրեամ որ աւարեցաւ
578 տարւոյ զիլիսահին (= 1183 մարտ):

Արդարեւ նոյն տարին Սուլթան Սալահ-
էտտիրն բացակայ ըլլալով նզիպասոսէն, բա-
նական էր որ շինութեանց հսկողութիւնը
կատարած ըլլար Սուլթանին եղբայրը՝ էլ-
Մալիի էլ-Ատիլ:

Այս յիշատակարաններէն ի յայտ կու
գայ որ Սուլթան Սալահէտտին կառուցանել
տուած է այս ամրոցը, որուն արարական
անունին չենք հանդիպիր ո՛չ մէջ յիշատա-
կարանի մէջ: Բատ Յօր յիշատակարանին,
բոլորովին զինուորական նկարագիր ունե-
ցող ամրոցի շրջափակին պարիսպը աւար-
տած է գէպի 1183 տարւոյ սկիզբը: Որոշ
է որ Սալահէտտինի եղբայրը՝ էլ-Մալիի ք
էլ-Ատիլ Սէլֆ էլ-Տիմ մասնակցեցաւ այս
ձեռնարկին. առկէ զատ վերջնոյս սպանե-
րէն մին էր, էմիր Սարիմ էլ-Տիմ Պարցաչ,
որ իրականին մէջ կը վարէր շինութեանց
աշխատութիւնները: Նոյն այս Սարիմ էլ-
Տիմ Պարցաչ էլ-Ատիլին էր որ յետոյ կա-
ռավարիչ կարգուեցաւ Պամասկոսի միջ-
նարերգին, ուր մեռաւ 1211 յուլիսին և
հոն ալ թաղուեցաւ:

Երեք տարի յետոյ, որ է 1185ին, մըզ-
կիթ մը և ջրամբար մը շինուեցան ոմն Սիլ
իսկն Մուհամմէտի խնամքով, որ պաշտօ-
նատարն էր Սալահէտտին էլ-Եազիլի և
եղբօրը՝ էլ-Մալիի էլ-Ատիլի: Ցիշեալը
նախապէս զերին (զօլամ) էր Սուլթան Սա-
լահէտտինի որդի էլ-Մալիի էլ-Աֆտալ

նուր էլ-Տիմ Ալիի, որ իր հօրը մահէն յե-
տոյ ժառանգից Պամասկոսն ու Սուրիան:
Այս միննոյն անձն է որ երկու տարի յե-
տոյ Քալագ Կինտիի ամրոցին մէջ կառու-
ցանել կու տար ուրիշ ջրամբար մը և աւելի
բնագրակ երկուրդ մզկիթ մը, և եթէ
Յոյշ յիշատակարանին մէջ երբեք չի յիշա-
տակուիր էլ-Մալիի էլ-Աֆտալի գերն ու
հանգամանքը, առնչական երկու անուններ
սակայն, էլ-Մուզաֆֆարի և էլ-Թաքավի,
յոյշ կու տան որ Սիլի իսկն Մուհամմէտ պաշ-
տօնատար կարգուեած էր Սալահէտտինի եղ-
բօրորդի և Համբայի վեհապետ էլ-Մալիի ք
էլ-Մուզաֆֆար Թաքի էլ-Տիմ Օմարի:

Նոյն տարիին ամրոցին գլխաւոր մուտքի
գուռը շրջապատող երկու աշտարակներն
ու թերեւս նոր ազօթաբան մըն ալ լրացած
էին էլ-Մալիի էլ-Ատիլի և Սալահէտտին
(էլ-Ատիլի էլ-Եազիլի): պաշտօնատարի որ-
դի՝ ոմն իպրահիմ իսկն Ապի Պաքրի խնամ-
քով նախապէս կառուցուած մզկիթին լրա-
նալին առաջ: Նոյն գարու յատուկ ժամա-
նակագրութեանց մէջ կարելի չեղաւ հան-
դիպիլ ո՛չ Մուհամմէտի որդի Սիլի և ոչ
ալ Ապու Պաքրի որդի իպրահիմի անուն-
ներուն, որոնք հաւանաբար ստորագաս
պաշտօնեանելի էին (*):

Դ. — Ժամանակակից անցքեր. Բատ ա-
րաբ և արտաքին աղքիւրներու, Հիճրէթի
566 թուրին (= 1170) մինչգեռ էլ-Ատիլի
վեզիրն էր, Սալահէտտին իմացաւ որ կա-
րաւան մը՝ որուն պիտի միանար նաև իր
ընտանիքը, պիտի մեկնէր Պամասկոսին:
Սուլթանը իսկոյն իրենները տեսնելու փա-
փաքով, նզիպտոսէն մեկնեցաւ նոյն տար-
ւոյ նոյեմբերի վերջերուն: Արդ, Սալահի
մօտ կը գտնուէր քրիստոնեաներու կողմէ
կառուցուած ծովային ամրոց մը: Սալահ-
էտտին շուտով նաւատորմիղ մը շինել
տուաւ՝ որուն քակոււած մասերը ուզտերու
կանակին վրայ բռոցուած վիճակով մինչև
ծովեզերը փոխազդել տուաւ: Հոն, գոր-
ծաւորներ վերսին կազմեցին նաւերը,
որոնք զօրաց փոքր խումբերով զինուե-
ցան: Սալահէտտին գրաւեց Սալահի բերդը
դեկտ.ի կիսուն և կրկն վերադարձաւ Պա-
մասկիր՝ ուր հասաւ 4 փետր. 1171ին:

(*) Gaston Wiet: Les Inscriptions de la Qal'ah
Guindi: Syria, 4. Հատուր, 1922, էջ 58-65:

20 սեպտ. 1171ին Սուլթան Մալիք Նազիր դուռը եկաւ Գահիբէն ու իր զօրքերով բանակեցաւ Պիր էլ-Պէյտալի (սպիտակ ջրհոր) մէջ, այն մտադրութեամբ որ Սուրիսի պիտի անցնի: Առոր ճշգիւ տեղը որոշել բաւական գժուար է թէև, բայց դէպի Մէքք քէ տանող ուխտաւորական ճամբուն վրայ ներկայիս կը գտնուի կայան մը՝ որ կը կոչուի Տար Պէյտա, Պիրքէդ էլ-Հունձամի և Աճուռուի միջեւ: Սուլթանը հասաւ Շօվաք, բայց Ֆրանկները յարձակեցան, որով ստիպուեցաւ գարձեալ Ալլահ վերագանալ: 1173ին Սուլթան Սալահէտտին իր զօրքերով ճամբայ ելաւ, Քէրքի քի և Շօվաքի գէմ արշաւանք մը կատարելու համար ու ամէն անգամ որ կ'իմանար կարաւանի մը Դամասկոսէն մեկնումը, արշաւանքի կ'երթար կարաւանը պաշտպանելու համար Ֆրանկներու գէմ: 1184ին Ֆրանկները արշաւանք մը կատարեցին Տարումի կողմէն, որուն վրայ խլամ զօրաց բանակ մը անոնց գէմ քալեց Սատրի և Ալլահի ուղղութեամբ: Եւ որպէս զի այս երկու բերգերը լաւ պաշտպանուին, հոն զրկուեցաւ պարէնի և ուղամմթերքի կառատորմ մը, ընկերակցութեամբ պահակախումբի մը՝ որ կառատորմը հասցուց մինչև Ալլահ և Սատր: Եւ արդէն Սալահէտտինէն առաջ Ալլահէն Քըլզըմ տանող ճամբուն վրայ Սատր հանգիստի կայան մըն էր:

Այս միջացին էր ահա որ Ծընո տը Շագիյյոն խորհեցաւ արշաւել խոլամաց երկու նուրիական քաղաքներուն գէմ, երբ արդէն իրը նախաձեռնարկ 1182ին զրաւած էր Ալլահը: Մէքքէի և Մէտինէի գէմ այս գործողութիւնը, զոր իրապէս ուզեց փորձել Ռէնո, պատրանք մը միայն կրնար ըլլալ և Եղիպտացիք ամէն կերպով պիտի մզուէին ամրացնելու պաշտպանութեան իրենց գիծերը և զօրացնելու իրենց յառաջացեալ բերգերու պահակագունդերը:

Ծընո տը Շագիյյոն որ իր փոքրիկ նաւատորմը պատրաստած էր, հսկողութեան տակ երկու նաւ ալ Քըլզըմի առջև զրկեց: Արդարե ճիշտ այս օրերուն Սատրի բերգին աշխատութիւնները լրացած էին և կարելի է ենթադրել որ այդ աշխատութիւնները Սալահէտտինի կողմէ հրամայուած էին Սատրի մէջ գտնուած օրերուն, 1182 մուշ հարրէմին: Բայ երդ յիշատակարանի, ի բացակայութեան Սալահէտտինի, որ կը պատրաստուէր Ամեր համիլ, Մալիք Սատր հաւաբար ինք նորոգել տուաւ շրջափակին պարիսպը, որուն վրայ զրուած էր նոյն

յիշատակարանը: 1178ի պաշարումին, ամբոցը թերևս փոփոխութիւն կրած էր, բայց ամէն պարագայի մէջ 1182ին կատարուած նորոգութիւնները արգիւնք էին Ալլահի կուրուսախին, որուն վրայ էր որ ամբոցը պաշտպանէլու նոր միջոցներ ձեռք առնուեցան:

Ֆրանկներու կողմէ Ալլահի գրաւումը շատ կարծ տեսեց և այդ կողմէն ամէն վտանգ կը թուէր անհետացած ըլլալ: Բայց և այնպէս Սալահէտտինի հրհգինակութիւնը վերջնականապէս ամբացուցած ըլլալով Սուրիոյ բովանդակի խորական կայսրութեան վրայ, կը խորհէր միայն իր այնքան մեծ չափով կերտած իր ծրագիրներուն վրայ, որոնք կրնային իրագործուիլ երուսաղէմի քրիստոնեայ թագաւորութեան անկումովը ու այս նպատակի յաջողութեան համար ապացուցներ կան որ Սալահէտտին բան չմոռցաւ և նոյնքան բնական է որ 1184ին կարեսոր քանակութեամբ պարէն և ուղմամթերք զրկած ըլլար Սատրի ամբոցը:

1185ին մզկիթ մը ու ջրամբար մը շինուեցան կամ նորոգուեցան և երկու տարի յետոյ ալ աւելի համեստ միծութեամբ ուրիշ մզկիթ մը և երկրորդ ջրամբար մը, երբ միննոյն ժամանակ բերգին գուռն ալ կը շինուէր, հաւանաբար նորոգելով կամ ճնը փոխելով, ու երկու աշտարակներ ալ բարձրացնելով անոր քովերը: Շատ հաւանական է նոյնպէս որ 1181ի աշխատութիւնները հրամայուած ըլլային Մալիք Սատրի կողմէ որ նոյն տարւոյ սկիզբը պարտաւորեցաւ անցնի Սատրէն:

Խաչակրաց գժբախտ աղէտներէն յետոյ կ'ենթագրուի որ Սատրի բերգը բոլորովին լքուած ըլլայ, վասնզի եագուգ պատմազիր կը յիշէ որ իր օրերուն բերգը ամբողջովին աւերակոյտի մը վերածուած էր: Եւ սակայն իրմէ վերջ գեռ երկար ատեն կարիլ էր հոն զօրք և ուխտաւոր բանակել տալ, որովհետեւ Մալիք Քամիլի տակաւին հոն կը բնակէր:

Սատրի կամ ներկայիս Քալ'ադ կինտի ամբոցը վարչականորէն ենթարկուած էր Շարքիյա նահանգի կառավարչութեան, իյուպեան իշխանութեան ժամանակ հանուած հրամանազիր մը ամբոցը նոյն պաշտօնատարին ուշագրութեան կը յանձնէ: Կ'արժէ աւելցունել որ այս վայրը իր անունը փոխած է նոյն գաւառին մէջ բնակող Պանու Սատրներու ցեղախումբէն (*):


Թարգմանից
ԱՐՑՈՒԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(*) Gaston Wiet: Les Inscriptions arabes de la Gal'ah Guindi: Syria, 4. Հատոր, 1922, էջ 145-152:

ՅՈՐԵԼԵԱՆԻ ՄԸ ԱՌԻԹՈՎ

Ամերիկայի Երևանիստանական Ժողովը, գեղեցիկ մածումը ունեցեր է տօնախմբելու Վեհաւորի Տ. Դարեզին Մթազան Արքապահ. Յովակիեանի — ընտեալ կարադիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ — Նննդեան՝ Ադամանցիայ, Քահանայական եւ գրական գործունեութեան՝

բնուրութեան, այլ որովհետեւ Յորելեան Մթազանը այս ազգին եւ Եկեղեցիին առենքն սիրելի եւ արժեկաւոր զաւակներէն մին է, եւ կը մնայ այդպէս հազարներու յիշողութեանը մէջ: Եր կեանքին բոլոր Երևանները եւ ասպարեզին հանգրուանները եղած են բեղուն եւ լեցուն. իբր ձեմարանի առակերտ անիկա ուշագիր, լուրջ եւ զնոնդ է. իր եւ կեղեցական ասպարեզին առաջին սանդղամատին վրայ իսկ՝ ուշագրաւ կը դառնայ



ՅՈՐԵԼԵԱՐ ՄՐՐԱԶԱՆԸ

Ուկեայ, եւ Յափսկողոսացման՝ Արծարեայ Երեսով Յորելեանները:

Հայկառակ օրերու տրմուրեան եւ աւերին, անենուրեմ հենուանեալ ողջունուեցաւ այս պարագան, զատն զի ամ ոչ միայն կը զոյս պարագան, զատն զի ամ ոչ միայն կը զուգագիպէր իր յիքոռ. Մեծի Տանն Կիլիկիոյ

գրական եւ մանաւանդ բանասիրական աշխատուրիւններով. Մասնայ Շուերը եւ Փշրամինները մեր ժողովրդային բանանիւռութենն, այդ շրջանի զործեր են: Իբրեւ ուժիմ եւ ասպարայ խոսացող առակերտ, կը զրկուի Գերմանիա՝ բարձրագոյն ուսում սանալու:

Նախ Լոյզցիզի եւ ապա Պերլինի համալսարաններուն մէջ կ'ուսանի ասուածաբանութեան եւ փիլիսոփայութեան պատմութեան նիւղերը. իբրև աւարտանա կը ներկոյցնե «Մի Կամքի Վարդապետութեան Խաղումը» Հայ եւ Յոյն աշխիւների ննադատութեամբ»ը եւ կը սահմայ Փիլիսոփայութեան Տոքրուի ասինան:

Վերագրանալով Եջմիածին 1897ին ուրելոյ կը ձեռնադրուի եւ կը կարգուի ձեմարտի ասուածաբանական ուսումներու դասախոս, աւանդելով նաեւ հայոց մատենագրութիւն: 1905ին կը նօսնակուի վերատեսուչ Դեռագեան ձեմարտին՝ միաժամանակ աւանդելով ասուածաբանական եւ հնագիտական նիւղերը: 1906-1907 կը գործ Արարատ համբեկի Խմբագրութիւնը, ըլլալով նաեւ մնայուն աշխատակիցը Մայր Արոռի այդ պատմութերին: Խեթեանի վախճանումներ, Ս. Հոփիսիմեի վանահայրութեան որջանին, զբաղած է արժեկաւոր զիւնուու պատրաստութեամբ:

Մատնակցած է Դառնիի Տրդատայ Թախտի պեղումներուն եւ այդ որջանի հնագիտական վայրերու ուսումնասիրութեան իբրև անդամ Փոաֆ. Մառի կազմակերպած արշաւանդին: Շնորհի իր հնագիտական կարգ մը ուշագրաւ գիւտերուն եւ գիտական աշխատանիւններուն, Փոաֆ. Մառի առաջարկութեամբ ընտրուած է որպէս իսկական Անդամ Կայսերական Հնագիտական Ընկերութեան:

1911ին նամբորդած է Երուսաղէմ եւ Պոլիս, եւ ընդորինակած է Ս. Յակոբեանց վանքի եւ Պոլսոյ Ազգային Մատենադարանի ձեռագիրներն կարեւոր մանրանկարները, մանաւանդ հայ բազաւորական եւ իշխանական ընտանիքներու դիմանկարները: Կատարած է նոյնպէս հնագիտական ռաս մը նամբորդութիւններ իր ուսանողական եւ ուսուցչական սարիներն սկսելով, որոնց իբրև արդիւնք ունինք Խաղակեանի կամ Պողոշանի Հայոց Պատմութեան մէջ երեք հաստութեւք բաղկացած աշխատութիւններ: Առաջին Համաշխարհային Մեծ Պատերազմի սկսելէ առաջ, 1914ին, իր ամենակարեւոր հեղինակութիւնը՝ Հայ Մանրանկարչական Քարտուր՝ կը տանի Պերլին սպագրելու համար, սակայն պատերազմը սկսելուն՝ կը սիփուուի հեռանալ անկէ: Գերմանիային իր վերադարձ կը կատարէ Պոլիս - Սամսոն - Ամասիա - Թոգաս -

Մերասիա նամբով ուսումնասիրելով Հայոց Ելեղեցիներու մէջ պահուած ձեռագիրներն ու ննուրինները:

Իբրև վարձի իր ձառայութեանց, Պարեցին Վարդապետ 1917ի Մայիսին, Զուէն, Գեորգ Զեօէնինեան եւ Տիրոյ Յովհաննեսին վարդապետներու նես Եղիսկոսոս կը ձեռնադրուի Գեորգ Ե. Կարողիկոսին: Յաջորդ տարին իսկ, ընդգետ Տանկոց պատերազմի միջոցին, իր նուեռութան ձերեւր ի ապա զիւելով, հայ բանակը է ժողովուրդը կը խախտուի ի պատասխանութիւն հայենեանց:

Հայուսանի Համալսարանի բացման ժամանակ, 1920ին, ուսուցչապետ կը կարգուի հայ արուեստի եւ հնագիտութեան արողներուն: Նոյն տարւոյ Հոկտեմբերին զարծօն մասնակցութիւն բերած է ընդգետ Տանկաց Եկեղեց պատերազմին, եւ ուսուի անկումի օրերուն՝ յառակ բանադար եղած է, ազմելով Բաղադրի ժողովուրդը վերահսու շորդէ:

Հայուսանի Խորհրդային կարգին մաս կազմելեն յետոյ, Պարեցին Մթքազանի Էջմիածին կը վերագրանայ եւ կը նօսնակուի Հայուսանի Գիտութեանց Խնամիութի զիւնական անդամ, հրատարակիլով նոյն Կանագի միւս անդամներուն նես՝ Բանիք ժողովածուի առաջին մեծ հատորը: Գեորգ Ե. Կարողիկոսի օրով եղած է Գերազոյն Խորհրդի անդամ եւ Միաբանական ժողովի նախազան:


1934ին նօսնակուած է Լիազօր Նուիրակ եւ ներկայացուցիչ Հայրապետի, Սփիւռքի մէջ եւ այցելած է Արումանիա, Պուլկարիա, Վիեննա, Բարիզ, Երևանդէմ, Եղիպտոս, Սիւրիա, Իրազ, Յունաստան, Լուսոն եւ Ամերիկայի Միացեալ Խամանցները: Միշ Կարողելով եւ դասախոսութիւններ սալով արձարծած է Սփիւռքի հայութեան սերն ու յարգանքի Հայրենիքի եւ Մայր Արոռի նկատմամբ: Էջմիածնայ Մայր Տանարի նորոգութեան համար հանգանակած է աւելի հան 35.000 տուր: 1936 ապրիլ 8ին Ամերիկա կը ժամանէ իբրև Հայրապետական Լիազօր Նուիրակ. 1938 սեպ. 4ին Ազգային Երեսի գոլսամատկան ժողովը զինք կ'ընտէ իբրև Առաջնորդ Ամերիկահայութեան: Հոս իր կազմակերպչական, կրթական եւ կրօնական աշխատութիւնները գրկարաւ զեր մը կ'ունենան պառակտուած այս զաղութիւն մէջ,

իր ռուշը խթելով Ամերիկանց զործիչներու մեծ թիւ մը, գրաւելով բոլորին համականուն ու հիպոդրամ, և ներշնչելով ու ուղարկելով զանանք ազգային ծառապետականութեանց :

Անս այս կուրզի անազինս արժանիքներով մեկուն Յօրելիանն է ու կը կատարուի: Եկեղեցականի մը, որ աւելի հանցանեածիներ ծառապետ է իր ժաղացարքին՝ զիւռվ, խօսելով եւ զործով, որ աստիճանի արժանավայել զիւռվայրեամբ, որ «ասկան ընտեսարձնեռու առանձնաւութեանն է միայն»:

Այս սօնախմբութեան մէջ, իր մէքի, սրտի, գշշի եւ խօսի օնորներեն աւելի Հայ Եկեղեցիի մասնութեն է որ կը փառաւուուի իր արժանաւուր պատօնութիւն յօրելիանվ. Սահմանիներու, Մեսորակներու եւ Ներաններու հոգին կերտող բարուն որիք, որ աստիճանու մուր գդբախտութեանց մէջ պահան է միւս իր ներքին կենաւանկութիւնը, այսօ նույն յարգանի եւ նույրումի առարկա կ'ըլլոյ Գարեգին Արքազանի պատուական անձինք մէջ: Այդ է պատճառ անսարաւոյս որ Յոբեկնական այս սօնախմբութիւնը կը զուգագիպի իր Կարողիկոսական ընտրեան՝ յԱրու Մեծի Տանի Կիլիկիոյ:

Միոն, Վեհապետուն ու Արքազան Յոբեկնականի կը մտորք ամեն բանի առաջ բաջառող արեւատուրին, ազգանուեր ծառայութեան իր նուր ասպարեցին համար, իրմէ սպասելի բաւարյան արդիւններու փափառով: Այս մաքրանքն է ու ունին իրենց ըրբեներուն անսարակոյս, ոչ միայն Կիլիկիոյ՝ այլ բովանդակ Հայ ժողովուրդի հաւատացեալ զաւակները:



ՀԱԿԱՏՔԻ ԵՒ ՄԱՍՄԱՍՆ ՑՈՒՔԵՐ

❖ Գործ այնպէս, որպէս քե լուի Ասուծոյ կոչ, եւ հրայրաւած ըլլայր համագրծակցելու Անոր զործին՝ ազատ և ստեղծագործ արարոյ մը: Գոյն բու մէջ ազատ անսարան և խախան զիւռացութիւնը. կազմակերպ անձով, կոռու շարին զէմ՝ բու մէջը և բու ուրշը, նազարակ ունենարով ոչ քե բարաւուրին մը ստեղծել անձինք զայն գելափի մղելով, այլ իրավու նուանեալ զայն, օգնելով որ լուսաւութիւն եւ պայծառակեւութիւն «Զարեր»:

❖ Անսարաւին քեք ընելու եւ բակր ինչ որ կընայ, մարդեր միացնել իրաւու հետ... ծառայեցե՛մ մարդուն, որուն չէ կրառ սիրել անձը: նոյն իսկ աշխան, որուն չէ կրառ սիրել:

ԼԵԶՈՒՄՊԻՏԱԿԱՆ

ԻՐԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ^(*)

3. Խգական անուններից բոլոր նրանք, որոնք կազմուած են դուխս, անոյց և ունի վերջաւորութեամբ, իրանական են: Հայ մատենազրութիւնը արգէն շատ ժլատ է իրական անունների վերաբերմամբ, եւ եղածներն էլ ոչ թէ իրապէս անուն են, այլ նշանակում են «այսինչի աղջիկը կամ գուստը». Տրդատի քոյրը կոչւում էր Խորովզիկ ուխտած, որովհետև Մեծն Խորովզի աղջիկն էր. Ամբատ Բագրատունու երկու աշխիկները կոչւում էին Ամբատանոյչ եւ Ամբատուհի: Հին հայոց մէջ ամօթ էր համարում ուղղակի կնոջ կամ աղջկայ անունը տալ. միշտ ինչպէս այսօր Ղարաբաղում կամ Զանգեզուրում, ուր կանայք կամ օրիարգները կոչւում են «այսինչի աղջիկ»: Երեսյթը շատ տարրեր չէ եւրոպական քաղաքակիրթ երկիրների այն սովորութիւնից, որով ամէն մի օրիարդ իր հօր ազգանունով և ամէն մի կին իր ամուսնու ազգանունով է կոչւում, առանց իր իսկական անուան լիշտակութեան: Հին հայոց այս սովորութիւնն էլ ընդհանուր արեւելեան, բայց յատկապէս պարսկական է:

4. Տեղական յատուկ անունները անձնականների համեմատութեամբ մեծ թիւ չեն կազմում. որովհետև անձերի անունները հեշտութեամբ փոխուում են, հները մոռացւում և նորերն են գալիս. բայց տեղական անունները շատ երկար կեանք ունին: Ինչպէս արգէն տեսանք, Հայաստանի տեղական անունները Խալդիական անունների շարունակութիւնն են ներկայացնում և միայն նոր ժամանակ աւելացած քաղաքների և գեւգերի անուններն են՝ որ տարրեր են: Արանցից նրանք՝ որ կրում են շատ, կերտ, աւան, ազատ վերջաւորութիւնները, պարսկական կազմութիւններն:

(*) Հայունակարիսմ մեծանուն նեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» զործին թ. Գրիգոր:

որովհետև այս բառերը պարսկերէն են :
Մի խօսքով հայոց մէջ գործածուած իրանական բազմաթիւ յատուկ անունները, թէ՝ անձնական և թէ տեղական, անհերքելի նշան և ապացոյց են պարսկական շատ խոչոր ազգեցութեան մեր վրայ :

Պարսկերէն լեզուի ազգեցութիւնը մեծ է անշուշտ նաև մեր լեզուի ներքին կազմութեան, այն է ոճերի, ասացուածների, բառերի տարբեր տուումների, շարադասութեան և համաձայնութեան վրայ : Դժբախտաբար այս տեսակէտից քննութիւններ կատարուած չեն գես : Աւստի բաւականանում ենք հաւաքելով աշխատել այն՝ ինչ որ կարողացել ենք նկատել մեր աշխատութեանց ժամանակ :

Փող հարկանել = պրո. բորի զայտան
Ծեծ ուտել = պրո. նոյնպէս ուտել բայով երգում ուտել = պրո. սաւկանդ խորդան վիճակ արկանել = պրո. կուրա ենդախիքեն 0ր մի յաւուրց = պրո. ուուզի եզ ուուզիան երթալով (հետզետէ) = պրո. բեթքե բեթք գարձուցանել = պրո. ուուզ զերգիկեն կամագիւտ = պրո. բայխալ
Կապել զուուր (գոցել) = պրո. դեռքա բաստան Հարկանել ողք = պրո. Ֆերիադ զերգեն
Հարկանել ծունք = պրո. զանու զերգեն
Ալիս քաշել = պրո. անի ֆերիդան
Զուր քաշել = պրո. ար ֆերիդան
Նեղութիւն քաշել = զանմեդ ֆերիդան
Խոնձ ինչ = պրո. մերա չի
Ո՞ր մէկ = պրո. գուլքմ յեկ
Երկարել (ձեռքը) = պրո. դիրազ զերգան
Թեթևուան (արագ) = պրո. սերուկ բան Խնչո՞ւ փխ . է՞ր, զի՞ = պրո. ժիրա
Ծովակ (իրք լիճ) = պրո. դերյաչե են են :

Վերոյիշեալ բոլոր փոխառութիւնները, յատուկ թէ հասարակ անուն, ոճ թէ ասացուածք, բոլորն էլ ամենամեծ մասամբ հաստատուած և ապացուցուած են մեռած կամ կենդանի որևէ իրանեան լեզուի ձեւերով : Բայց վերևում արգէն ասացինք, որ իրանական գրականութիւնը շատ չնշին չափերով հասել է մեզ : Կան բառեր, որոնց երբեմի գոյութիւնը իրանական լեզուներում, հայերէնն է միայն մատնանիշ անում, արգէն իրը օրինակ լիշել ենք արուեան բառի, այսպէս կամ ինչի մէջ անուշտիւց արգէն ապացուցուած է մեջութիւնը կամ անուշտիւց արգէն ապացուցուած է մեջութիւնը :

1. Կան մի խումբ բառեր, որոնց մի

ներկայացնում են որևէ զուտ պարսկական պաշտօն, աստիճան են, և հետեարար անշուշտ պարսկերէն են : բայց հայերէնից զուրս ոչ մի լեզուի մէջ չեն գտնուում, այսպէս զինդակապետներ, պարսկական զօրապետական աստիճանն, ապահայիլ պարսկական գնդի անունն, մատեան «պարսկաց անմահների գունզը», պետմո՞ «զրագաշտական հինգ վարդապետական ձեւերից զուրս մի ազանդ, որ բայտ պարսից անսուրը և հերձուածական էր համարւում, խորաւարան՝ պարսկական սպարապետական աստիճանն, խոնասան պարտից արքայական պալատը» են :

2. Կան մի խումբ բառեր, որոնց մի կէսը արգէն պարսկերէն լինելով՝ յայտնի է որ ամբողջութեամբ պէտք է պարսկերէն լինին, բայց ոչ մի իրանական լեզուի մէջ գոյութիւն չունին . այսպէս ատրուեան, արուսեակ, արտախոյք, աշխարհանդ, հարակած, շահխոռապետն, հաւեւեան :

3. Կան մի խումբ բառեր, որոնք գտնուում են միայն հայերէնի և զենդերէնի մէջ, որ թէև իրանական լեզու է, բայց պարսկերէն չէ և հայերէնի հետ ուղղակի կապ չունի : Ինչ . կախարդ, հարազան ևն : Սրանք աւանդուած չեն ոչ հին պարսկերէնում, ոչ պահանակերէնում, և ոչ էլ նոր պարսկերէնում : Բայց որովհետև զենդերէնում կան, ուստի իրանական են . եւ որովհետև հայերէնում էլ կան, ուստի անշուշտ պարսկերէնում էլ գտնուած պէտք է լինին :

4. Կան վերջապէս բառեր, որոնց գոյութիւնը պարսկերէնում ապացուցուում է աւելի հեռաւոր միջոցներով : Օր. վիճ = «քնար», նոյն է սանս . վիճա = «քնար» բառի . և լուսական վիճ = «քնար» բառը : — Հյ. ապանդակ = «վրանի չոււան» նոյն է սանս . ուպարանդիա = «կապ, չոււան» բառի հետ . բայց երկուոր ոչ մի ձեռով չեն կարող կապուիլ իրար, եթէ ոչ ենթագրելով պէտք . ապահանդակ = «չոււան» բառը : Աստիճան համեմատուում է հնիս . ստիճին = «երթալ, աստիճանից կամ սանդուխից վերեւ բարձրանալ» արմատի

հետ եթէ բառը բնիկ հայերէն լինէր, պիտի ունենար առ առաւելն ասիդան, ասիձան, ասիջան ձեերը, բայց ոչ բնաւ ն. ուստի պէտք է ենթազրել որ միր բառը պարսկականից փոխառութիւն է և հետեւարար պահաւերէնում այդ ձեռվ մի բառ գոյութիւն ունեցած պէտք է որ լինի:

Այս բոլորը ցոյց է տալիս, որ բացի վերայիշեալ 751 բառերից, կան հայերէնի մէջ զեռ շատ բառեր, որոնք զուտ իրանական փոխառութիւն են, թէս փաստօրէն կարելի չէ ապացուցանել այդ, քանի որ նրանց համապատասխանը չի գտնուում որեէ իրանական լիզուի մէջ: Լեզուաբանի ականջը վարժ է զգալու այդպիսինքը լոկ հնչական ձեից, այսպէս պարսկական են հնչուում ակասան, ամբասան, աշխահաւանդիկ, աշխոյժ, աւսանակ, աւսարակ, ապարօտ, ապիզակ, հնանալպազ և շատ այսպիսի բառեր: Առհասարակ այն հայերէն բառերը, որոնք սկսում են հրա, պատ, սկզբնաւորութեամբ, կամ վ տառով և կամ վերջանում են ակ վերջաւորութեամբ, պարսկական փոխառութիւն են: Հրա սկզբնաւորութեամբ մենք ունինք 24 բառ, որոնք են. հրածարիլ, հրամես, հրանենք, հրամայիլ, հրաման, հրամանաւար, հրամենք, հրամէ, հրապար, հրապարակ, հրապոյր, հրասպի, հրատարակիլ, հրաւեր, հրբուակ, հրեսակ, հրտակ, հրիտակ, հրնուանք, հրուակ, հրովարտակ, հրոտից, հրուանդան, հրուակ. որոնցից 12ը յայտնի է որ պարսկերէն է, որոնց մէջ հրա համապատասխանում է պրո. Ֆրանախամանիկին. տարակոյս չկայ որ միւսներն էլ նոյնպէս փոխառեալ են պարսկերէնից, մանաւանդ որ մի քանիսի համար (հրածարիլ, հրամես, հրամէ, հրամարակիլ) ուրիշ նշաններ էլ կան:

Պատ սկզբնաւորութեամբ ունինք 59 բառ, որոնք են. պատանիլ, պատանար, պատաղիլ, պատանդ, պատանի, պատառ, պատասխանի, պատարել, պատարազ, պատգահիկ, պատզամ, պատզարակ, պատզարել, պատզոս, պատզոսաբան, պատել, պատերազմ, պատզբել, պատժախ, պատժանակ, պատիժ, պատին, պատինադաղ, պատինանան, պատիր, պատիւ, պատկան, պատկանդարան, պատկանիլ, պատկառիլ, պատկեր, պատկեն, պատմառ, պատմեն, պատմունակ, պատմունան, պատմէ, պատման, պատմագամ, պատմեն,

պատմիր, պատուանդան, պատուաս, պատուավուր, պատուար, պատուէր, պատուիրակ, պատուիրան, պատուիսան, պատումել, պատսպարել, պատրաս, պատրինչ, պատրոյդ, պատրոյդա, պատրոյն, պատրուն, պատրունի, պատրունում են, որոնց մէջ պատ համապատասխանում է զնդ. պատի, պէճ. պատ. վայլ հախամանանուում որեէ իրանական լիզուի մէջ: Լեզուաբանի ականջը վարժ է զգալու այդպիսինքը լոկ հնչական ձեից, այսպէս պարսկական են հնչուում ակասան, ամբասան, աշխահաւանդիկ, աշխոյժ, աւսանակ, աւսարակ, ապարօտ, ապիզակ, հնանալպազ և շատ այսպիսի բառերի մէջ պատուում է զ, հնիս. սկ դառնում է վ և հազուագէպ պարագաներ միայն կարելի է գտնել, ուր հնդեւրոպական մի ձե տայ հայերէն վ: Այսպէսով հայերէն բոլոր բառերը՝ որ սկսում են վ ձայնով, չեն կարող հայերէն լինել և ի յառաջագունէ ենթագրուում է որ փոխառեալ պիտի լինին: Իրանական լիզուները ունին վի նախամասնիկը, որ այնպէս յաճախական զործածութիւն ունի նրանց մէջ և որ սկզբելով՝ հայերէնի մէջ դառնուում է վ: Եւ ահա այստեղ է մեր վ-ով սկսող բառերի աղբերը:

Գալով ակ վերջաւորութեան, իրբու օրէնք կարելի է գնել, որ ամէն հայերէն բառ՝ որ վերջաւորում է ակ և այն ակը նուազական մանիկ չէ, ուրիշ խօսքով այդ ակը ջնջելով չի ստացւում նոյն բառի մեծը, անշուշտ պարսկերէն է: Այսպէս՝ պարսկերէն են նամակ, հրեսակ, հրովարտակ, ամանակ, ժամանակ, նիզակ, սպիտակ, հրուակ, զանձակ, դասակ, դմակ, երակ, հակ, ամբակ, փարերակ, փերեզակ ևն ևն: — ակ վերջաւորութիւնը պահաւերէնի մէջ որոշ բառակազմիչ տարր է (պարսկերէնի մէջ դառնուում է ա), ուստի ուր որ հայերէնի մէջ նուազական չէ, հաւանաբար պահաւերէն է:

Այն միտքը թէ պարսկերէն մի բառ կարող է հայերէնում պահուած լինել եւ

ընդհակառակը բոլոր իրանեան լեզուների և բարբառների մէջ չնջուած լինել՝ բնաւ չպիտի զարմանալի թուի. որովհետև հենց այդ իրապէս տեսնում ենք յատուկ անունների մէջ, քանի որ այսօր էլ հայերը շարունակում են կրել Առաստի, Շաւարշ, Արշակ, Բագարան և այլ նման իրանական անուններ, որոնք մանմեգուկան պարսիկները խպառ չգիտեն: Դեռ սրանից մի քանի տարի առաջ այդպիսի զարմանալիների շարքում էին բարոս, պատիւ, պատիր, պատար, մուրալ, կարի, պարար, պարար ևն բառեր, որոնք սակայն նորագիւտ սոգդիական գրութեանց մէջ զտնուեցան եւ հաստատուեցաւ որ իրանական փոխառութիւն են:

ԺԱ. դարի հետ սկսեց թուրքական հորդանների յառաջխաղացութիւնը արևելքից արեմուտք եւ այդ ժամանակից սկսած կտրուեց հայ ու պարսիկ ժողովուրդների հարեանութիւնը. կտրուեց նաև պարսիկ լեզուի ազգեցութիւնը հայերէնի վրայ. այդ ժամանակից սկսում է մի նոր շրջան հայերէնի համար՝ թուրք-թաթարական ազգեցութիւնների լըջանը, որի վրայ պիտի խօսինք առանձին գլխով:

Բայց պարսիկները, ինչպէս հայերի, նոյնպէս և թուրքերի վրայ առանց ազգեցութեան չմնացին. ընդհակառակը այդ ազգեցութիւնը՝ իրեւ շատ աւելի անքաղաքակիրթ ժողովրդի վրայ, շատ աւելի մեծ եղաւ. և պարսկական լեզուի ազգեցութիւնը՝ այս անգամ թուրքերէնի միջոցով նոր ձեւի տակ շարունակեց նաև հայերէնի վրայ և շարունակում է մինչև այսօր: Սակայն այս ազգեցութիւնը արդէն թուրքական կերպարանքի տակ ժաման լինելով՝ այդ մասին մեր ուսումնասիրութիւնը պէտք է կցնենք նրա հետ:

Վերջացնելու համար այս զլուխսը, կարեոր ենք համարում անել երկու նկատութիւն ևս:

1. Մենք մինչեւ այստեղ թուեցինք այն բոլոր պարսկական փոխառութիւնները, որոնք աւանդուած են մեզ էին հայ զրականութեան մէջ: Բայց ինչպէս վերեւով ասացինք, անկարելի է որ մի որեւէ զրականութիւն գրի անցկացրած լինի այն բոլոր բառական ու ոճային հարստութիւնները, որ մի որեւէ խօսուն լեզու ունի: Այսպէս էլ հայերէնը, որի բառազանձը ամբողջապէս մեզ աւանդուած չէ և որի մէջ կային անշուշտ դեռ ուրիշ զանազան պարսկերէն բառեր, որոնք առիթ չի ունեցել հայ վրա-

կանութիւնը աւանդելու, յատկապէս իր միակողմանի բնաւորութեան պատճառաւ:

2. Թէս պարսկերէնի ողակի ազգեցութիւնը հայերէնի վրայ դադարում է մեկ զարից սկսած, բայց նա շարունակում է մինչև այսօր էլ պարսկահայ գաղութիւնների վրայ: Այստեղ մենք չենք ուզում անել պարսկահայ գաղութիւնների պատճութիւնն ու վիճակագրութիւնը, բայց պէտք է շեշտենք, որ պարսկահայ գաղութիւնները, ասելով մենք ուզում ենք հասկանալ այն հայ գաղութիւնները, որոնք գանուում են Ալբարպատականից գուրս և ուղղակի պարսիկ (ոչ թուրք) ժողովարդի հետ չփառական մէջ են: Այսպէս են հնդկելիի, Ռաշտի, Ղազիւնի, Համազանի, Թիհրանի, Առլիթանապատի, Ապահանի, Նոր-Զուղայի և Շիրազի հայերը: Այս բոլորի մէջ ամենամեծ թիւը կազմում են Սուլթանապատից մինչև Նոր-Զուղա ցըրւած հայերը, որոնք 30,000ից աւելի են: Այս բոլոր գաղութիւններն էլ նոր ժամանակի ծնունդ են և սկսում են ծահարասի ժամանակներից: Այս թագաւորն էր, որ 1603 թուին Արարատեան նահանգի ժողովրդին քչեց Պարսկաստանի այդ հեռաւոր վայրերը: 300 տարուայ ընթացքում հայերը մեծապէս ազգուեցին պարսիկներից ամէն տեսակետով՝ բացի կրօնքից: Լեզուն էլ կրեց մեծ ազգեցութիւն, շատ բառեր, ոճեր ու ասացուածներ, շարադասութեան ձեւ, շեշտու առողանութեան լեզանակը պարսկերէնից անցան տեղական հայերէն բարբառներին: Բայց այս հարցերի քննութիւնը այլևս չի պատկանում հայերէն լեզուի պատճութեան, այլ մասնաւոր բարբառների ուսումնասիրութեան, ուստի և մենք էլ հրաժարուում ենք քննութեան առնել այսակեղ:

Իսկ այն գաղութիւնները, որոնք հին ժամանակներում հաստատուել էին Պարսկաստանում, անշուշտ ժամանակի ընթացքում բոլորովին ոչնչացել եւ անհետացել են, ձուլուելով տեղական ժողովրդի մէջ: Այսօր Պարսկաստանում ոչ մի տեղ չկայ այնպիսի հայ գաղութ, որ հայերէն լեզուն կորցրած ու պարսկախօս զարձած լինի: Այսպիսի հայեր գտնուում են միայն Պարսկաստանից գուրս, հիւսիսային Կովկասում՝ Ղզլարի Բէքէթէյ կամ Ղարաջալի գիւղում, Շամախի մօտ՝ Մաղրասա գիւղում, և Ղուբայի մօտ՝ Քիլլար և Խաչմաս գիւղերում: Այս բոլորն էլ պէտք է զալթած լինին Պարսկաստանից հին ժամանակ, իսկ հիմա արդէն հայտիսոս են զանուում:

ՊՐՈՑ. Հ. ԱՃԱՌԵՍՆ

“ԵՐՈՒԽԱՂԵՄԻ ՏԱԳՆԱՊԸ”

Զակերտաւոր այս կարգախօսը Հայ Մամուլի էջերէն, ինչպէս մեզի ծանօթ աղային շրջանակներէ, կը կազմէ ոչ միայն առօրեայ խօսակցութեանց եւ մտահոգութեանց նիւթ մը, այլ եւ կը ներկայացուի իբր համազային տագնապ :

Երուսաղէմի Հայոց Ղանքին նման Հաստատութիւն մը, ուր խառնուածքներու եւ դատելու եղանակներու տարբերութիւնը տակաւ շատցող թիւին եւ մտայնութեանց նետ համեմատական կը մնայ, յաճախ թատր կրնայ դառնալ նախանձայոյգ եղելութեանց՝ եթէ միմեանց նկատմամբ եղբայրական մէր ու վստահութիւն, եւ անվերապահ հնազանդութիւնը վանական վերին իշխանութեան, չկազմեն ամէնօրեայ նուիրական օրակարգը այս Հաստատութեան : Մասնաւորելով մեր խօսքը վանքի ծանօթ խնդիրներու շուրջ, աւելորդ չներ նկատեր յիշեցնել թէ այն քանի մը իրողութիւնները որոնք կրնան մեկնակէտը նկատուի ներկայ «տագնապին», մեր տնտեսական տարեգլխու (Մայիս 1) ամէնամեայ պարտաւորիչ իրադարձութիւններ են : Միաբ. Ընդհ. Ժողովի անդամները, միշտ նախանձախնդրութեամբ կը մասնակցին այդ ժողովներուն, երեւան բերելով զօրաւոր հոգածութիւն, վանական քազմենս գործունէութեանց տարեկան հաշուեկշունի մէջ : Բայց այդ նախանձախնդրութիւնն ու եռանդ ցուցադրողները, ցարդ միշտ պահած էին հեղինակութեան եւ կանոնի նկատմամբ իրենց կարելի ակնածանքն ու պատկառանքը, չսահելու եւ մանաւանդ չսահեցնելու խնդիրները իրենց օրինական ներքին ու արտաքին պայմաններէն եւ սահմաններէն դուրս : Այս տարուան եղածը զանցառութիւն մը պէտք է նկատել Ս. Աթոռոյ հեղինակութեան եւ կարգ ու սարքին զէմ, կարգ մը վանականներու կողմէ, որոնք ժամանակաւոր եւ առերեւոյթ մեծամասնութեան մը ապաւինած՝ յաւակնեցան վերիվայր շրջելու փորձ մը ընել այս դարաւոր Հաստատութեան կարգ ու սարքը :

Եթէ մեզի թոյլ կուտանք այս էջերէն խօսիլ վանական ներքին այս խնդիրներու շուրջ, որոնք ինչ նկարագիր ալ որ հազնին եւ եղոյթներու ալ յանգին կը մնան վանական, վասնզի անոնք իրենց սովորական եւ օրինական հունչն եւ հանգամանքէն դուրս հանուեցան, մինչեւ Քարծրագոյն դատարանը երթալու համար, եւ այլազէմ ու այլակերպ ներկայացումներով թիւրեցին եւ գայթակեցուցին Ազգին այս նուիրական Տանը նկատմամբ մօտիկ ու հեռաւոր, բարի եւ սրտցաւ հոգիները :

Սրտասահմանի Հայ Մամուլի ներկայացուցիչներէն ոմանք դժբախտաբար արծագանգ եղան խնդիրները իրենց ուղածին պէտք ներկայացնել ուղղողներուն : Ու երբ կարգ ու սարքը եւ ներքին խաղաղութիւնը պահպանելու համար նորին Ամենապատուութիւն Սրբազն Պատրիարք Հայրը եւ Ս. Աթոռոյ Տնօրէն ժողովը ստիպուեցան ի գործ զնել Սրբազն հեղինակութիւնն ու իշխանութիւնը, պատժելու համար նախակին Պարոյր Վրդ. Մի իրենց հեղինակութիւնն ու իշխանութիւնը, պատժելու համար նախակին Պարոյր Վրդ. Մի նաև նաև կարգազրկութեամբ եւ կախակայելով Տնօրէն ժողովոյ երկու անդամներ Շաւարշ եւ Հմայեակ Վարդապետները, վանական ներքին կարգապահութեան վերաբերեալ այս խնդիրը, արտաքին կարգ մը միջամտութիւններէն քաջալերուած, որոնք զուր պղտութելու փորձ մը ըրին, դարձաւ մտահոգիչ, Ազգին խնդմանքը խոռվելու աստիճան :

Մամուլի արտայայտութիւններու նկատմամբ մեր ըսեմիքը կը վերապահնենք իր կարգին ու կը փութանք ներկայացնել ինչդիրը այնպէս՝ ինչպէս որ է ան իրականին մէջ, շեշտելով անգամ մը եւս, թէ այս կարգի խնդիրները վանական ներքին հարցեր են առաւելատելով անգամ մը եւս, թէ այս կարգի խնդիրները վանական իշխանութեան կարգադրութեան : Կուտանք դէպահէս եւ կը վերաբերին միայն Վանական իշխանութեան կարգադրութեան :

ՆԻՍ Ա. 21 Մայիս 1943-ին սկսան մեր Մայիսեան Միաբանական Ընդհանուր Աթոռութեան ները : Առաջին նիստին Օրակարգը կը կազմէին,

1. — Տնօրէն ժողովոյ Վարչական եւ Ելեւմտական Համարատուութիւնը 1 Մայիս 1942 — 30 Ապրիլ 1943 Տարեշրջանի :

2. — Ելեւմտացոյց 1 Մայիս 1943 — 30 Սպրիլ 1944:

3. — Ընտրութիւն՝ Տնօրէն ժողովոյ իրենց երկամինայ պաշտօնավարութեան զրցանը աւարտող երեք անդամոց տեղ նոր անդամներու:

յԱտենի Միաբ. Ընդհ. ժողովոյ կարգացուեցաւ Տնօրէն ժողովոյ տարեկան Համարատուութիւնը գլուխ առ զլուխ՝ Վարչական եւ Ելեւմտական երեսներով, եւ այս մասին վիճաբանութիւնը բաց յայտարարուեցաւ ըստ սովորականին: Քննադատները որոնք նախօրօք պատրաստած էին արգէն իրենց ըսելիքն ու ընելիքը, անպատշաճ լեզուով եւ օրակարգին հետ առընչութիւն չունեցող հին եւ անձնական խնդիրներու ակնարկութիւններով, նախատական արտայայտութիւններ ունեցան Տնօրէն ժողովոյ անդամներու, կարգ մը պաշտօնեաներու եւ նոյնիսկ Սրբազն Պատրիարք Հօր դէմ, եւ այս բոլորը առանց իրաւունքի: Ու երբ կարգ մը ատենախօսներ, ի մասնաւորի Տնօրէն ժողովոյ անդամներ, ուղեցին խօսք առնել պատախաննելու համար եղած քննադատութիւններուն եւ լուսաբաններու ժողովը, դիտողութեան եւ յարձակումներու առարկայ եղած խնդիրներու շուրջ, գլխաւոր քննադատները ետ առին իրենց ըսածները Տնօրէն ժողովոյ Համարատուութեան մասին եւ առաջարկեցին որ դադրին վիճաբանութիւնները եւ Ընդհ. ժողովոյ քուէին ենթարկուի Համարատուութիւնը: Ընդդիմադիրները այս քուէարկութեան մէջ յաջողեցան մեծամասնութիւն ըլլալ, վասնզի Տնօրէն ժողովոյ անդամները իրենց Համարատուութեան մէջ չունէին քուէի իրաւունք: Այսիրազ հակառակ ի գործ դրուած բռնադատումն եւ ապօրինութեան, վասնզի առաջին՝ Տնօրէն ժողովոյ անդամներուն առիթ չտրուեցաւ քերելու իրենց լուսաբանութիւնները, եւ երկրորդ՝ գլխաւոր քննադատները յատենի ժողովոյ ետ առնելով հանդերձ իրենց ըսածները՝ դարձեալ չվաւերացուցին Համարատուութիւնը: Եւ այս առաջին արարը եղաւ կազմակերպուած անկարգութեան:

ՆԵԽՏ Բ. 24 Մայիս 1943, Միաբ. Ընդհ. ժողովոյ Բ. Նիստին Օրակարգն էր ամբողջական ընտրութիւնը Տնօրէն ժողովոյ վեց անդամներուն, Սրբազն Պատրիարք Հօր եւ Լուսարարապետի ներկայած կրկնանուն ցանկէն:

Կատարուեցաւ այս մասին գաղտնի քուէարկութիւն եւ ծայներու մեծամասնութեամբ Տնօրէն ժողովոյ անդամ ընտրուեցան փոխան վեցի, երեք հոգի միայն, Շաւարշ, Յուսիկ եւ Հմայեակ Վարդապետները: Երկրորդ քուէարկութեան, ընդդիմադիրները որոնք յաջողեր էին երկու անձեր որսալ իրենց կողմ, կարգ մը շացուցիչ խոստումներով, ներմակ քուէներով արգելք եղան Տնօրէն ժողովոյ միւս երեք անդամներու ընտրութեան, եւ պահանջեցին որ նոր ցանկ քերուի, անոր վրայէն շարունակելու համար Տնօրէն ժողովոյ պակասեալ երեք անդամներու ընտրութիւնը: Հոս այս ընտրութեան կերպի մասին վէճ յարուցուեցաւ եւ կարգ մը ատենախօսներ իրաւամբ դիտել տուին, հիմնուած մեր կանոնի 29րդ Յօդուածի տրամադրութեան վրայ, թէ ժողովը իրաւունք չունի մերժելու Սրբազն Պատրիարք Հօր եւ Լուսարարապետի ներկայած ցանկը, քանի որ Տնօրէն ժողովոյ ամբողջական ընտրութեան պարագային՝ ընտրելեաց ցանկին պատրաստութեան իրաւունքը եւ մատուցումը կը պատկանի միայն Սրբազն Պատրիարք Հօր եւ Լուսարարապետին:

Սակայն հակառակ կանոնական եւ աւանդական այս հասկնալի եւ որոշ հասկացողութեան, ընդդիմադիրները որոնք յաջողեր էին այդ նիստին մեծամասնութիւն կազմել, որոշեցին որ Տնօրէն ժողովոյ երեք նոր անդամները Սրբազն Պատրիարքին եւ Լուսարարապետին հետ միասին Ընդհ. ժողովին կողմէ ժողովին մատուցուած ցանկին վրայէն:

Սրբազն Պատրիարք Հայրը Միաբ. Ընդհ. ժողովոյ այս որոշումը ստանաէ վերջ, մասնաւոր գիրով մը յանձնարարեց որ ժողովը ինքզինք հակականոնական ընթացքի մը մէջ չդնէ, հրահանգելով նոյն ատեն որ Տնօրէն ժողովոյ ընտրութիւնը ամբողջացուի եր եւ Լուսարարապետի կողմէ ժողովին մատուցուած ցանկին վրայէն:

Սակայն հակառակ Սրբազն Պատրիարք Հօր գրաւոր յորդորին եւ հրահանգին, ինչպէս նաեւ Կանոնի բացորոշ տրամադրութեան, ընդդիմադիրները կրկին անդամ որո-

շում անցուցին ստիպելու Սրբազն Պատրիարք Հայրը որ նոր ցանկ բերէ , պատրաստուած Տնօրէն ժողովոյ նորընտիր երեք անդամներու նետ միասին :

Ասիկա եղաւ Կանոնագիրը ըստ կամ այլայլելու երկրորդ արարքը , որ բացորոշ կերպով կ'անտեսէր Պատրիարքական Հեղինակութիւնը և Լուսարարապետի իրաւունքը :

ՆԻՍ Դ. 27 Մայիս 1943, Նորին Ամենապատուութիւն Սրբազն Պատրիարք Հայրը չափազանց յուզուած ժողովներու այս անախորժ վիճակէն , վտանգաւոր տագնապի մը (crise) ենթարկուեցաւ . զիշերանց կանչուեցաւ Սրբազնին անծնական Բժիշկը Տօրթ. Վ. Գալաքան որ յետ քննութեան հաստատեց թէ Սրբազնին տագնապը արդիւնք է յուզումներու և զրաւոր արձանագրութիւն թողուց որ Սրբազն Հիւանդին չնաղորդուի զինք յուզող ու եւէ խնդիր , մինչեւ որ մեզմանայ քէնը և կարելի ըլլայ Նորին Ամենապատուութեան զբաղիլ վանական խնդիրներով : Յաջորդ նիստին Ատենապետը ժողովին կը հաղորդէ Սրբազն Պատրիարք Հօր վիճակը և Բժիշկին հրահանգը , որուն պատճառաւ կարելի չէր եղած Սրբազն Պատրիարքին մատուցանել Ընդհ. Ժողովոյ որոշումը ի մասին Տնօրէն ժողովոյ նշանակեալ անդամներու ընտրութեան : Ընդդիմադիրները աղմկեցին , քննադատեցին , հայոց եցին եւ այդ երարանցումին մէջ կարելի չըլլալով շարունակել ժողովը , կը փակուէր այդ նիստը եւս :

ՆԻՍ Դ. եւ Ե. 15-18 Յունիս 1943, Նախորդ Նիստէն երկու շաբաթներ վերջ , Բժիշկին արտօնութեամբ Սրբազն Պատրիարքին մատուցուեցաւ Ընդհ. Ժողովոյ յշեալ որոշմագիրը : Սրբազն Պատրիարք Հայրը երկրորդ զիրով մը Ընդհ. Ժողովին յղեց իր եւ Լուսարարապետի միայն իրաւունք եղող ցանկը , զրելով թէ «Ընդհ. Ժողովը իր նախընթաց նիստին մէջ առանց ուեւէ կանոնական հիմքի , միայն եւեք հոգի ընտեց այդ ցանկէն . ուրաքանչ Ս. Աքուր ունենայ իր օրինաւոր Վարչուրինը եւ զործերը կարգադրուին ու սնենութիւն եւ անազար պահուի Ս. Աքուր վարքն ու վայելած բարի համբաւը , կը ներկայացնենք նոյն ցանկը հրահանգելով սիրովաբար որ ամբողջացուի Տնօրէն Ժողովոյ պակասեալ անդամներու ընտրութիւնը այս ցանկին վայելն :

Ընդհ. Ժողովի մէջ ընդդիմադիրները սակայն փոխանակ Սրբազն Պատրիարք Հօր որկած ցանկով եւ ընտրութեամբ զբաղելու , սկսան ամբաստանել ժողովին Ատենապետը , որ Ընդհ. Ժողովի այդ որոշումը ճիշտ ժամանակին չէր յանձնած Սրբազն Պատրիարք Հօր : Զուր անցան Ատենապետին եւ ուրիշ ժողովականներու խօսքերը թէ այդ յապաղումը Բժիշկին հրահանգով էր եղած , վասնզի Սրբազն Պատրիարքը իր անցուցած քէնին պատճառաւ երկու շաբաթներ վերջ միայն ի վիճակի կ'ըլլար զբաղելու այս խնդիրներով : — Սակայն ընդդիմադիրները չուզեցին համոզուիլ եւ վատահութեան քուէ առաջարկեցին Ատենապետին դէմ . Ժողովը մեծամասնութեամբ վստահութիւն յայտնեց Ատենապետին . իսկ ընդդիմադիրները ժողովը խանգարելով , աղմկայոյգ մեկնեցան : Այսպէս փակուեցան երկու այս նիստերն ալ :

ՆԻՍ Զ. 19 Օգոստ. 1943, Ընդհ. Ժողովոյ այս նիստը տեղի ունեցաւ Նախընթաց Նիստէն աւելի քան երկու ամիս յետոյ , Միաբանութեան զիտակից անդամներու դիմումին եւ խոստումին վրայ Սրբազն Պատրիարք Հօր , լրացնելու համար ընտրութիւնը Տնօրէն ժողովոյ երեք պակասեալ անդամներուն :

Այս Նիստին , ընդդիմադիրներէն ինը հոգի , Ժողովին չեկան , իրնց ստորագրութեամբ զիր մը զրկելով Սրբազն Պատրիարքին , առարկելով նախ՝ թէ իրենց ուշ ըըրկուած էր Ընդհ. Ժողովոյ կոչնագիրը , երկրորդ բողոքելով թէ Ս. Պատրիարքը ինչո՞ւ չէր զործադրեր նախորդ ժողովին որոշումը , եւ թէ Տնօրէն ժողովի նորընտիր երեք անդամներն ալ պէտք է մասնակցէին ցանկի պատրաստութեան : Ընդհ. Ժողովը յետ երկար խորհրդակցութեան նիշու եւ իրաւացի չգտաւ այս բողոքը , եւ վերադառնալով իր Օրակարգին Տնօրէն ժողովոյ անդամ ընտրեց Հոգեշնորհ Տ. Գէորգ , Տ. Պարգեւ եւ Տ. Հայրիկ Վարդապետները , Սրբազն Պատրիարք Հօր եւ Լուսարարապետի նախապէս ներկայած ցանկին վրայէն , ամբողջացնելով այս կերպ ամիսներէ ի վեր ծզգուող եւ անաւարտ մացած Տնօրէն ժողովոյ կազմը :

ՆԻՍ Է. 20 Օգոստ. 1943, Նախորդ Նիստին , Տնօրէն ժողովոյ նորընտիր ան-

դամներէն Տ. Յուսիկ Վրդ. Ա. Խափիսան մատուցած էր իր հրաժարականը, զոր ժողովը ընդունած էր : Այս նխտին մէջ Ընդհ. Ժողովը Յուսիկ Վրդ.ին տեղ ընտրեց Հոգ. Տ. Ներսէս Վրդ.ը, յևոյ օրոշեց որ երեք անձերէ բաղկացած Յանձնախումբ մը ընտրուի, քննելու համար Զ. Նիստի օրոշումներուն դէմ բողոքող ինը Վարդապետներու զիրը :

ՆԻՍՏ Բ. 23 Օգոստ. 1943. Յանձնախումբը յևս մանրագննին քննութեան, բերաւ իր հետեւեալ եղբակացութիւնը Ընդհ. Ժողովոյ, բողոքողներու մատնանշած հինգ կէտերուն ի պատասխան :

— Նորին Ամենապատուութիւնը համաձայն Միաբ. Կանոնի Յօրդ Յօդուածին աւելի քան 24 ժամ առաջ յանձնած է ժողովի Օրակարզը որպէսզի զրով ծանուցուի իւրաքանչիւր ժողովականի : Բայց Ընդհ. Ժողովոյ Դիւանը չափով մը թերացած է կոչնազիրը փութով ցրուելու մէջ, որուն համար Պատկ. Ընդհ. Ժողովը իր դիտողութիւնը ներկայացուց Դիւանին, ու պահանջեց որ ուրիշ անգամ աւելի փութկոտ եւ նշդպակի գտնուի ան: (Միաբ. Ընդհ. Ժողով 1943-44 ՆԻՍՏ Զ.) :

— Նորին Ամենապատուութիւնը արդէն իսկ ընտրուած ժողովականները ժողովի չէ հրաւիրած մօտաւորապէս երեք ամիսներ, եւ չէր կրնար հրաւիրել, քանի որ Տնօրին ժողովի կազմը չէր ամբողջացած ըստ տրամադրութեան Միաբ. Կանոնի 29րդ Յօդուածի :

— Նորին Ամենապատուութիւնը Միաբ. Ընդհ. Ժողովոյ «անդամոց ոմանց բացակայութենէն չէ օգտուած խուսափելու համար Իր դէմ կազմուելիք մեծամասնութենէ մը» եւ Ժողովի հրաւիրած է բոլոր Հոգեցնորհ Հայրերը, եւ ոչ թէ միայն զանոնի «որոնք պիտի ժառայէն իր անձնական նպատակներուն»:

— Նորին Ամենապատուութիւնը «Միաբ. Կանոնի 29րդ ինչպէս նաեւ Կանոնադրութեան 48րդ Յօդուածները բռնաբարելով» վեցանուն ցանկը չէ կազմած: Այդ վեցանուն ցանկը կը ներկայացնէ Միաբ. Ընդհ. Ժողովոյ Մայիս 24ի Նիստին ընտրական քուէարկութենէն յևոյ համեմատականի մնացած վեց թեկնածուներու անունները: Նորին Ամենապատուութիւն այդ Նիստին ընտրուած երեք ժողովականներով նոր վեց անուն ցանկ մը կազմելու օրոշումը չգործադրելու ազատ էր, նկատելով որ այդ որոշումը ոտնձգութիւն մըն էր իր Պատրիարքական իրաւասութեան դէմ եւ հակառակ՝ Միաբ. Կանոնի 29րդ Յօդուածին:

— Նորին Ամենապատուութիւն «ի շարս Միաբանից Ընդհ. Ժողովի չէ հրաւիրած Ս. Աթոռոյ Սւագ-Մարկաւագները եւս», նկատելով որ Կանոնի ակնարկուած Յօրդ Յօդուածի լման գործադրութիւնը իր գահակալութենէն տարիներ առաջ զարքած էր արդէն. վասնզի զանազան արդարացուցիչ պատճառներով, իր Երջանկայիշատակ նախորդներէն Դուրիհան Պատրիարքը տնօրինած էր որ Մարկաւագները պահեն իրենց ընտրողի իրաւունքը միայն եւ ոչ ընտրելիի. իսկ Գուշակեան Պատրիարքը սահմանափակած էր Մարկաւագաց Ընդհ. Ժողովի մասնակցութիւնը՝ միայն Պատրիարքի, Պատրիարքական Տեղապահի եւ Լուսարարապետի ընտրութեանց պարագաներուն (Տե՛ս 1934-1935 ՆԻՍՏ Բ.):

Յանձնաժողովը իրաւամբ կ'եզրակացնէր թէ Նորին Ամենապատուութեան հրաւիրած Ընդհ. Ժողովը օրինական էր, թեկնածուներու ցանկը նմանապէս օրինաւոր էր, Ընդհ. Ժողովը օրինաւորապէս կազմուած էր, ինչպէս ցոյց տուին վերոգրեալ բացատրութիւնները: Հետեւաբար Օգոստոս 19-ին կատարուած ընտրութիւնը օրինաւոր էր ըստ ամենայնի:

Յանձնաժողովը հետեւաբար կը հաստատէր թէ,

— Օգոստոս 19-ի ընտրութիւնը չէր կրնար չեղեալ նկատուիլ:

— Մարկաւագաց մասնակցութեան վերաբերմամբ տիրող սովորութեան պահպանումը աւելի օգտակար է Ս. Աթոռոյ համար:

— Թեկնածուներու ցանկին պատրաստութիւնը եղած է Միաբանական Կանոնաց համաձայն:

Վերոգրեալ բացատրութիւնները բաւական էին ցոյց տալու որ Նորին Ամենա-

պատութիւնը պատրաստակամ զանուած է բանիւ եւ գործով, Ա. Աթոռոյ Կանոնները գործադրելու «զորս պահելու ուխտ ըրած է առաջի Ա. Սեղանոյ»:

Ընդհ. ժողովը իր Ը. Նիստին մէջ, 23 Օգոստո 1943, իւրացուց Յանձնախումբի բնութեան ույս արդիներ եւ ըլեց զանոնի նոյնուրեամբ բողոքողներուն, ի պատասխան իւնից բողոքագրին:

Այսկերպով կը վերջանար աւելի բան երեք ամիսներ տեսող ապօրինի եւ ամուլ պայքարը ընդդիմադիմներու, եւ Միաբ. Ընդհ. ժողովը իր այս Ը. Նիստին մէջ ամբողջովին կը դատապարտէր զիրենը իրենց անհարկի եւ ապօրէն պահանջներուն մէջ եւ անարդար վերագրումներուն համար:

Բ

ՆԻԱՏ Թ. Ժ. ԺԱ. ԺԲ. ԺԳ. եւ ԺԴ.

«Վանիք տագնարակի այս առաջին վարագոյրէն վերջ, երբ կիրքերը մեղմացած եւ խնդիրները աւելի յատակուած կը թուէին. Միաբ. Ընդհ. ժողովը վերակազմած ըլլալով իր Տնօրէն Վարչութիւնը, գործի մկան: Եւրացուց յաջորդ տարուան ելեւմտացոյցը, որ հինգ ամիսներէ ի վեր վերտիշեալ խնդիրներուն պատճառաւ տակաւին վաւերացման չէր ենթարկուած, եւ ծախսելը նախորդ տարուան ելեւմտացոյցին համեմատ կը տրնտեսուէին, ի Նիստ գումարուեցաւ 11 Հոկտ. 1943-ին, եւ իր Թ. Ժ. ԺԱ. ԺԲ. ԺԳ. ԺԴ. Նիստերուն մէջ ըննեց 1943-1944 տարուց ելեւմտացոյցը իր արդեանց եւ ծախուց բաժիններով, եւ ըրաւ անհրաժեշտ ու սուրուական կարգ մը սրբագրութիւններ: Ասոնց կարգին ընդդիմադիմները օգտուելով կարգ մը բացակայութիւններէն պարտադրեցին ժողովին հետեւեալ անպատճի որոշումներ:

Կը միշտակենը զանոնք միայն՝ որոնք խնդրոյ առարկայ եղան բողոքողներէն, գործադրուած ըլլալուն համար Սրբազն Պատրիարք Հօր եւ Տնօրէն Վարչութեան կողմէ:

1. Սրբազն Պատրիարք Հօր համար միայն մէկ հիւանդապահ պահուի, ամսական 15 ոսկիով:

2. Սրբազն Պատրիարք Հօր կերակուրը պատրաստուի վանքի խոնանցին մէջ:

3. Ժողովը չնշեց Սրբազն Պատրիարք Հօր խոնարարի ամսականը:

4. Ժողովս մերժեց կալուածոց քարտուղարի տարիկանը Լ. Պ. 120:

5. Որոշուած էր նաև որ, երուազէմի կալուածոց գործը յանձնուի Տնօրէն ժողովոյ կողմէն ընտրուած երեք վարդապետներու: Ընդհ. ժողովոյ այս որոշումը որ ընտառատութեան զլխաւոր առանցքը կը կազմէր բողոքողներու խմբակին, գործադրուած է Սրբազն Պատրիարք Հօր կողմէն, կանոնական նշգումով մը, երկու անձեր որոշելով իր կալուածական Յանձնախումբի անդամներ գործակցելու համար Տեսչին հնու:

Նորին Սմենապատութիւն Սրբազն Պատրիարք Հայրը ապագայ անպատճիութեանց դուռ չբանալու համար, նիշտ չը նկատած Ընդհ. ժողովոյ այս որոշումներէն ումանք գործադրութեան զնելու, որովհետեւ այս անզամուան Ընդհ. ժողովը, յանիրաւի ինքզինքին իրաւունք էր տուած, քուչարկելու որոշումներ, որոնք Վարչական Մարմին, այսինքն Տնօրէն ժողովոյ իրաւասութեան մէջ կ'իշխային. Եւ Նորին Սմենապատութիւնը կանոնի եւ որոշումներու նկատմամբ իր ունեցած բացարձակ իրաւասութեանց եւ զանոնք նշգորէն գործադրելու ուխտին համեմատ էր որ կը շարժէր: Մնաց որ, Կալուածոց Տեսչութեան վերաբերեալ առաջարկին հանդէպ Սրբազն Պատրիարք Հօր ցոյց տուած կանոնական վերապահումէն զատ, միւնիերուն կարգադրութեան համար Սրբազն Պատրիարք Հայրը յարմար նկատեց որ Տնօրէն ժողովը զինքը դարձանող Բժշկին հետ խորհրդակցարար կարգադրէ այդ մասին ինչ որ անհրաժեշտ էր:

Սակայն յագուրդ չգտած կիրքերը պոռթկալու ելք կը փնտուէին:

Ընդհ. ժողովներու այս որոշումներէն տասը օր վերջ, ընդդիմադիմներէն 13 հոգիներ հաւաքուած, Սրբազն Պատրիարքին կը ներկայանան, առանց կանխաւ իմացնելու, կը պահանջեն Նորին Սմենապատութիւնէն որ գործադրէ Ընդհ. ժողովոյ վերո-

լիշեալ որոշումները : Մրբազան Պատրիարքը իրենց կը պատասխանէ թէ Ինք «կը գործադրէ այն որոշումները միայն՝ որոնք համաձայն են մեր Կանոնին եւ դէմ չեն վանդին շահերուն՝ որոնց անվիթար պահպանութեան համար ըրած է Ինք իր ուխտը» : Ընդդիմադիրներէն մէկը առաջ անցնելով, կը պատասխանէ Մրբազանին թէ՝ «իրենք տար զլուխ երիտասարդներ են, պատասխանառու չեն իրենց ըրածին» : Սակա 15 վայրկիան ժամանակ կուտան պահանջելով Մրբազանէն Յուշատումս մը որ անյապաղ գործադրուէին Ընդին. Ժողովոյ այդ որոշումները : «Ես ստիպման տակ ոչինչ կը զբամ» կը պատասխանէ Մրբ. Հայրը :

Բողոքողներու այս ընթացքը յտառմ յետոյ նուազում, եւ ապա սրտի ունչ կը պատճառէ Մրբազան Պատրիարք Հօր : Գիշերուան ժամը 9.30-ին կը կանչուի Տօքթ. Վ. Գալպեանը, որուն խնամքներուն շնորհիւ հազիւ կարելի կ'ըլլայ ազատել Մրբազանը : Սա առթիւ Տօքթորք Տնօրէն ժողովին կը մատուցանէ զիր մը, հաստատելով թէ ունչին պատճառը ցոյցն էր եղած, եւ եթէ նման սպառնալիքներ կրկնուին վտանգելու համար Մրբազան Հիւանդին կեանքը, ասոր միակ պատասխանառուն Տնօրէն ժողովը պիտի նկատուէր : Եւ թէ հակառակ պարագային ինքը պիտի ստիպուէր անհրաժեշտ միջոցներ մտածել, յարգելի Հիւանդը պաշտպանելու համար : Տնօրէն ժողովը իր յաջորդ Նիստին մէջ լուրջ նկատողութեան առաւ Տօքթորին այս տեղեկազիրը, եւ որոշում կայացուց որ Մրբազանին ներկայանալ ուղղները կանխապէս պարտաւոր էին առնելու Մրբազան Պատրիարք Հօր հաւանութիւնը :

Քանի մը օրեր վերջ, հակառակ այս որոշումին, Նոյեմբեր 9-ին խոռվարանները Պատրիարքարան կը հաւաքուին արգիլելու համար Տնօրէն ժողովոյ գումարումը : Ժողովականներէն ումանք կը զգան ըլլալիքը եւ կը մեկնին : Յուցարարները յետոյ Լուսարարապետին կը հանդիպին եւ կը ստիպեն զինքը որ իրենց հետ միասին ժողովասրահը գայ : Հոյն զինք շրջապատած՝ կարգ մը սպառնալիքներէ եւ անարգական արտայայտութենչ վերջ, Տնօրէն Խորհրդոյ ժողովասրահը կը գոցեն եւ բանալին իրենց հետ առած կը մեկնին :

Յաջորդ օրը Նոյեմբեր 10-ին, Պատրիարքարանի դիւանատուններուն առջեւ կը հաւաքուին խոռվարարները, կ'արծակին պաշտօնիաները եւ կը գոցեն պաշտօնատունները : Յետոյ Պատրիարքարանի արտաքին դրան առջեւ խմբուած՝ անընդհատ կը հնչեցնեն զանգակը : Հիւանդապահները չեն բանար Պատրիարքարանի դուռը, ու Լուսարարապետին կ'իմացնեն եղելութիւնը : Լուսարարապետը մտածելով որ այդ ներխուժումէն եւ ըլլալիք սպառնալիքներէն Մրբազանը կրնայ վտանգուիլ, կը ստիպուի ոստիկանութեան դիմել :

Նոյեմբեր 11-ին խոռվարարները երկորդ փորձ մը կ'ընեն Տնօրէն ժողովոյ Նիստերը դադրեցնելու : Յաջորդ օրը Մրբազանին կ'իմացնեն եղելութիւնը, որ Տնօրէն ժողովոյ անդամներուն հետ խորհրդակցարար կ'որոշեն որ քանի մը օրուան համար ոստիկան մը հսկէ, որպէսզի զալիք անպատճենութեանց առջեւը առնուի :

Նոյեմբեր 22-ին խոռվութիւնները կը շարունակուին, Մրբազան Պատրիարք Հայրը կը ստիպուի կարգազրկութեամբ պատժել խոռվարար խմբակին պետ՝ եւ այս բոլոր անհանոյ արարքներուն զլխաւոր նեղինակը՝ Պարոյր Վ. Ռ. Մինասիանը, նկատի ունենալով իր տար տարիներու անցեալը, եւ մանաւանդ վերջին տարուան ընթացքին իր ի յայտ բերած ոգին որ կը սպառնար ոչ միայն խանգարելու վանական մեքենան, այլ նաև զիմազեղծելու այս Հաստատութեան կրօնական նկարազիրը :

Իր կողմնակիցները կը բողոքեն Մրբազան Պատրիարքին, յետոյ հեռազրաւ եւ նամակներով կը զիմեն կօմիածին, կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Եղիպատոսի Թեմերուն, ինչպէս նաև երուսաղէմի Կառավարչին, բողոքելով Մրբազան Պատրիարք Հօր արծակած վճռին դէմ. Երկու օր յետոյ Կառավարչիք անծամբ կ'այցելէ Մրբազան Պատրիարք Հօր, իր ցաւը կը յայտնէ եղած անկարգութիւններուն համար եւ Պատրիարքին կը խոստանայ իր եւ Կառավարութեան աջակցութիւնը : Յետոյ արտօնութիւն կը խնդրէ Ս. Պատրիարքէն, խօսելու իրեն զիմոյ Վարդապետները Կառավարչատուն կը կանչուին, Կառավարիչը խիստ կերպով կը յորդորէ զիրենք որ Կարգապահ եւ հնազանդ ըլլան իրենց Պետին եւ ունենան կրօնականի վայել ընթացքը :

Ահա «Երուսաղէմի տագնապը» իր զիմաւոր փուլերուն մէջ, եւ ճշգրիտ ներկայացումով : Զէինք ուզեր, ինչպէս բախնք, այս էջերէն խօսիլ ներքին ալս տիսուր իրադարձութիւններու շուրջ, սակայն այլևս անհրաժեշտ կը նկատենք անոնց ճշգրիտ պատկերը տալ բոլոր անոնց՝ որոնք կ'ուզեն իրազեկ ըստալ ճշմարտութեան :

Այս բոլորէն վերջ, չենք կրնար հոս չյայտնել մեր ցաւը երուսաղէմի կարգ մը ազգայիններուն, որոնք առաւելապէս խմբակցական ողիէ եւ անծնական նկատումներէ տարուած, ուղղակի եւ անուղղակի միջոցներով քաջալերեցին Խշանութեան դէմ այս անկարգութիւնը, եւ պատճառ եղան որ երկարաձգուի ան, երթալու համար մինչեւ Բարձրագոյն Դատարանի:

Տիտուր այս իրադարձութեանց ի խնդիր, նաևս Եգիպտոսէն, ապա Սիրիայէն, կղերական եւ աշխարհական պաշտօնական մարմիններու ներկայացուցիչներ անպաշտօն եկան, ու սրացաւօրէն նետաքրրուեցան եղածներովը, որոնց արձագանզը շատ աւելի եղած էր քան իրականութիւնը, ու տեղւոյն վրայ ստուգեցին եղելութիւնը իր արտաքին եւ ներքին ծալքերովը։ Կանցին երկու կողմերէն, եւ բոլորն ալ, համաձայն իրենց գրաւոր ու պաշտօնական յայտարարութիւններուն, զատապարտեցին խոռվարարները կրօնական ու ազգային այս Տանը նկատմամբ իրենց ունեցած ոգիին՝ եւ Խշխանութեան հանդէպ ցոյց տուած իրենց նեստ կիցուածքին համար։ Յորդորեցին որ զիտակցին իրենց դերին, յարգեն այս նուիրական Հաստատութեան վարկը եւ ննազանդին Խշխանութեան, որպէսզի չխոռվի իրենց նկատմամբ Սպառի խղճմանը եւ Աստուծոյ նայուածքը։

Վարժարանի հինգ Մարկարագները, որոնք անխոհնմօրէն միացած էին խռովարդներուն, տարուած անոնց խոսառուներէն, ներլողագիր ներկայացուցին Արքազան Պատրիարք Հօր եւ նեռազան ապօտամբ խմբակէն:

9

Կուգանք քանի մը խօսք նուի իրելու իրողութեան արձագանզին, Սփիւռքի Հայ Մամուլին մէջ, որ հանրային կարծիք ստեղծելու եւ զայն զեկավարելու կը ծառայէ ընդհանրապէս. «Երուսաղէմի տագնաապին» նկատմամբ ունեցաւ տարբեր եւ ներհակ կեցուածքներ, համաձայն զինք ներկայացնող խմբակցական ողին եւ ազգային այս կարգի հարցերը դիմաւորելու մնթուին:

Յաղաքի կրուստում առաջնահանդիպությունը կազմում է առաջնահանդիպությունը՝ առաջնահանդիպությունը և առաջնահանդիպությունը։

Սակայն արդար ու նիշտ չէին իր այն արտայայտութիւնները, թէ կրօնական, բարոյական եւ ազգային զգացումներու հետ միասին՝ անտեսուած են Օրէնքն ու Կանոնը: Զենք զիտեր թէ ներքին եւ արտաքին ինչ փաստերու կրթնած, ինքվինքին իրաւունք կուտայ Յանձնաբերը այսկերպ արտայայտուելու. սակայն միակ իրողութիւնը այն է որ յանուն այդ մեծ եւ սրբազն սկզբունքներուն է որ կը մղուի պայքարը, եւ Խշանութիւնը չէ որ անհաւատարիմ կը մնայ անոնց, ինչպէս ցոյց կուտան ժողովական ատենապութիւններէն երուցուած համառօտ բայց ճշգրիտ իրադարձութիւնները:

Աստեղուած չեն Օրէնքն ու Կանոնը, ոչ ալ խախտած բարոյականը, այս Հաստատութիւննեն ներս : Աւելորդ կը նկատինք այս աւելի քան ստոյգ իրողութիւնները փաստերով պաշտպանել, քանի որ այդ աշխատանքը ըրբն արդէն այնքան ծնունդասութեամբ եզիպառածն եւ Ամիրիայէն անպաշտօն կերպով Ս. Աթոռս եկած յարգելի ներկայացուցիչները : Հակառակ իրողութեանց այս պայծառ կերպարանքին, մենք կը զարմանանք թէ ինչպէս Յանձնէրը կ'արտօնէ ինքզինքը «տագնապին» մէջ տեսնելու նաեւ բաժինը՝ որուն պատասխանատուութիւնը իյնար Վանքին Օրինաւոր Իշխանութեան : «Պայծարող կողմէր» զիան, բողոքն ու դժգոհութիւնը ոչ մէկ ատեն կընան պայքարի դաշտ

դարձնել Հաստատութիւն մը, որուն հիմնական սկզբունքը հնագանդութիւնն է Խշանութեան, Հեղինակութեան: Եթէ դէպքերը զիցին անցան այս սահմանը եւ բողոքը վերածուեցաւ առերևոյթ պայքարի, ասոր պատասխանատութիւնը պէտք է փնտուել բողոքարկուներու մօտ եւ ոչ թէ դարաւոր իրաւունքներու նախանձորդ Վանական Օրինաւոր Խշանութեան: Եթէ կարելի չեղաւ զիրար հասկնակ եւ այդ ոգիին մէջ կարգադրել հարցը, ասոր պատճառը ոչ թէ որովհետեւ խնդիրը բազմերես եւ դժուարալուծելի էր, այլ ընդհակառակի՝ անոր հիմքէն նիհար ըլլալն էր: Մարդիկ երբեմն չեղածէն հարցեր կը ստեղծեն, կիրքի մը գոհացում առաջ եւ կամ յիմարութիւն մը պարտկելու համար:

Սիրելի են Յուրի զգացումներն ու պահանջները կրօնական ու ազգային այս Հաստատութիւններն, սակայն աւելի արդար պիտի ըլլային անոնք, եթէ Յուրի բարձրական հարցը կողմերու վերածած՝ դատաստանի կերպարանը մը տալու, ամէն բանէ առաջ զիտնար վճարել Խշանութեան, Օրէնքին եւ Հեղինակութեան նկատմամբ յարգանքի այն տուրքը, զոր մենք դժբախտաբար յանախ վարժուած չենք վճարելու. եւ հաւասարապէս արդար ըլլալու իր մտածումին մէջ՝ չմնար միայն թէրութիւններ մատնանշողի գերով: Հանրային Օրկան մը երբ քարերէն առաջ եւ կամ քարերու հնտ աղաղակելու կը ստիպուի, պէտք չէ միայն որովհներէն խօսի, որ ամէնայ ցորննի արտը: Ազնուական ու շինարար կերպ մը չէ ասիկա կը խորհնինք. ոչ ալ անկեղծ պաշտպանութիւն մը ազգային զերագոյն զգացումներու եւ արժէքներու ի խնդիր:

Դեռ աւելին, «Պատրիարքի շրջապատը ամրօրէն կառչած է պարիսպներուն», թէ «արտաքին միջամտութիւնները փոխանակ իրարահասկացողութեան՝ բայցայած են բողոքող ճակատը» որուն համար կարծես կը ցափի Յուրի: Թէ «Հայր պէտք է ըլլայ Պատրիարքը որպէսզի միւսները կարենան որդի ըլլալ», ու տակառին այս կարգի մեզադրանքները: Յուրի «Կարմանը» խորագրով Խմբազրականին մէջ, որոնք քննադատութիւնէ աւելի ուրիշ բաններ ըսելու կը հնտամտին, բաններ՝ որոնք ոչ միայն հիմնովին հակառակ են նշարտութեան, այլ նաեւ առնուազն պէտք չէ նկատառուէին ազգային շահերու սպասը ընողններէն: «Կարմանը» այս կարգի տագնապներուն, նոյն չափանիշերով չկենալ է Խշանութեան եւ անոր հերթումը փորձող մարդերու նկատմամբ: Մեր հանրային բարոյականի պարը այսքա՞ն ալ պիտի չըլնար որոշել կամ պիտի չուզեր որոշել:

Զուրին+, ազգային ընդհանուր շահերու եւ բարոյականին աւելի նախանձախնդիր, չբաւականացաւ միայն թէրութիւնները մատնանշելով, այլ զգաց եւ զգացուց մանաւանդ այն մեծ պակասը՝ որ ծնունդ տուած էր այդ անկարգութեան: Առիկա Խշանութեան եւ Հեղինակութեան նկատմամբ ցոյց տրուած թէթեւ վերաբերմունքն էր, ըսելու համար անհնագանդութիւնը: Ուակայն հոս փակագծի մը մէջ, պարտինք ըսելու թէ Զուրին+ը շատ թէթեւ կը կշռէ վերջին քառորդ դարը Հայ երուաղէմի կեսներին վրայ: Անարդար է ստորագնահամաել սերունդը իր ամբողջ կազմին մէջ, որ հասակ առաջ լիշեալ երեք Պատրիարքներու շրջանին: Եթէ այդ սերունդէն ումանք այսօր իրենց պաշտածները այբելու երեւոյթ մը կը պարզեն, յանցանքը տարակոյս չկա թէ մերը չէ:

Զուրին+, դէմ է անկարգութեան եւ անփշանութեան, եւ կը պահանջէ որ ամէն գինով պահպանուի Օրէնքն ու Պատրիարքական Հեղինակութիւնը: Աղջամիտ է այս կեցուածքը, եւ միայն պատիւ կրնայ ըերել հանրային Օրկանի մը: Վանելիք կրօնական եւ ազգային շահերու նախանձախնդիր ոչ մէկ հայ կրնայ թոյլ տալ ինքինքին զօրավիզ հանդիսանալու կարգ ու սարքին եւ Բարձրագոյն Հեղինակութեան մը դէմ եղած ծախող շարժումին կամ կամակոր կեցուածքին՝ որ կը սպառնայ վերիվայր շրջել ոչ միայն մեր հանրային բարոյականը, այլ նաեւ այս պարագայիս, վտանգել դարաւոր մեր իրաւունքները բրիտանէական այս ոստանին մէջ:

Աւելի մէջ հրատարակուած Մեթր Շ. Սեւյնը երեանի տեղեկատուութիւնը, որ անդրադարձ կը փորձէր առաւելապէս Վանքի բարոյական ու կրօնական վիճակներուն, նուիրումի յարգանքի եւ ննացանդութեան նոյն այդ պէտքը կը շեշտէին, կոչ ընելով Միաբանութեան որ զբաղէր առաւելաբար ներքին, հոգեկան, մտաւոր ու հաւաքական աշխատանքով, ննացանդ եւ համակամ, իրագործելու այն ինչ որ Ազգը բովանդակ կը

սպասէք այս Հաստատութենէն։ Անկողմնակալ եւ կրօնազգաց այս արտայայտութիւնները գովելի են իրապէս։

Վերոյիշեալ թերթերու այս արտայայտութիւնները իբրև թելաղրանք կամ ակընկալութիւն, առաւելապէս համակրական ու սրտցաւ, կը նկատենք քարի պահանջը Ա. Սթոռոյ վերանորոգուած կիանքին ի հաջիւ։ Սակայն չենք կրնար դառնութեամբ չմտածել Ա. Ն. Պ. Ռ. շարաթաթերթի յօդուածներուն, երրուսազէմի հարցին շուրջ, ուր գայթակութիւն եւ յոտի կողմ միայն տեսնելու տրտում, ցաւառիթ ախորժակներ ու հետարրերութիւն միայն զգալի կը դառնան։ «Յանցաւորը դրութիւնն է» առաջնորդականին մէջ, Ա. Ն. Պ. Ռ. նորէն մեղադրանքներ կ'ընէ Միաբանութեան, Պատրիարքական ընտրութիւններու ձնի մասին, երբ շատ լաւ զիտէ թէ քաղաքական վերջին իրադարձութեանց եւ Կանոնական փոփոխութեանց պատճառաւ էր որ Սզգը այլնեւս նիւթապէս չէր բերեր իր մասնակցութիւնն այս ընտրութիւններուն եւ ոչ թէ «Սզգին միջամտութիւնը թօթափելու ցանկութիւն» ինչպէս կ'ուզէ ըստ Ա. Ն. Պ. Ռ. որուն խմբագիրը այս իրողութեանց շուրջ այդքան մը զգիտնալու չափ «մանուկ», չէ կը խորհինք։

«Հաւատքի պակաս» իր ուրիշ մէկ հմբագրականին մէջ, նոր հաւատքի եկած այս «մանուկը, անհնիթեթ, գռեհիկ», այլ մանաւանդ անխիղճ զգացումով «հաւատքի պակաս» կը տեսնէ Հաւատատութեան մը մէջ, ուր ամէն օր այդ հաւատքին սպասը կ'ըլլայ: Հաւատքի նախանձախնդրութիւնը չէ անշուշտ պատճառը այս տողերուն, վասնզի այդ կարգի պարսաւներուն նեղինակները ոչ անոնց նիշտ հասկացողութիւնը ունին եւ ոչ այ իրական համակրանք կը զգան այդ հաւատքը ունեցող անձերու նկատմամբ: Աշտարարը կրօնական եւ ազգային անկեղծ մտահոգութիւններէ մղուած չէ որ կը զբէ այդ յօդուածները, այլ երբեմն «քաց նամակ»է մը եւ շատ անզամ գոց նամակներէ թելադրուած: Մարդ աւելի քան կոյր պէտք է լինի եւ փոքրողի, ափ մը յարդի ծուխով ամպոտած տեսնելու համար ամբողջ երկինքը:

Խսկ «Անձէն առաջ օրէնքը» եւ «Պատրիարքը իրաւունք չունի վարդապետ մը կարգագրկելու» յօդուածներով Աւագանը իր պաշտպանողականը կը հիմնէ զժբախտաբար աւազուտներու վրայ, առանց մտածելու իր ըսածին։ Դիմում կ'ընէ Ազգ. Սահմանադրութեան եւ մեր Կանոնի հատուկուոր վկայութիւններուն, ապացուցաներու համար թէ Ս. Պատրիարքը կրնայ ամբաստանուիլ «Կանոնադրութեան հակառակ կամ անոր գործադրութեան անհոգութեանը համար»։ Սակայն Աւագանը ինչո՞ւ չի հնատաքքրուիր գիտնալու համար նախ թէ Սրբազն Պատրիարք Հայրը նման օրինազանցութիւն մը գործած է։ Երկրորդ՝ կարգագրկման պարագան կրօնական խնդիր մըն է եւ կը վերաբերի միայն Եպիսկոպոսական իշխանութեան եւ ոչ թէ ժողովական որոշումներու, կամ խմբագիրներու աղաղակին եւ յանուն Ազգին եւ կարգ մը նուիրականութիւններու եղած բոլորին։

իսկ թէ Ս. Պատրիարք Հայրը իրաւունք ունի՝ կարգադրելու մէկը՝ որ արժանի ըրած է ինքինը այդ պատիժին, ատիկա Եկեղեցական իրաւասութեան կը վերաբերի, եւ Նորին Ամենապատութիւնը Աւտորաբի “Մաժակ,,ներէն եւ “մանուկ,,ներէն պէտք չունի սորվելու թէ իրաւունք ունի թէ ոչ:

Մամուլի այս արտայալտութիւնները մենք կը նդունինք որոշ հանդարտութեամբ, որոնց մէկ մասին մէջ լայնօրէն զգալով ազգային համակրանք եւ հաւատարիմ վերաբերում հանդէպ Ս. Սթոռոյ դերին, անոնց մէկ փոքր մասին մէջ զգալով անտեղի, չկամ, թիւր վերագրումներ, բայց դարձեալ որոշ շահազգութիւն հանդէպ այս Սթոռուին, (չենք կրնար այս հանդարտութիւնը տարածել նաեւ Արարատ թերթին որ հիւրընկալած է անստորագիր բան վարդապետներու անունով պարսաւագիր մը, մեղանչելով այսպէս հրապարակագրի ամէնէն տարրական պարտականութեան հանդէպ։ Քան վարդապետներ անուններ ունէին անշուշտ, եթէ ունէին, եւ ոչ թէ երկու բառերու դի-

մակ մը : Անոնք պարտաւոր էին իրենց ստորագրութիւններով երեւիլ, եթէ ունէին, հետեւաբար դիմակներու չնոք պատասխաններ), այս խօսքերը Հայ Մամուլին մէջ մեր հարցի մասին երեւան բերած կեցուածքի շուրջը՝ չըմեղանքի խօսքեր թող չնկատուին: Երուսաղէմի Հայոց դարաւոր Աթոռը ծանր պարտականութիւններ ունենալով հանդերձ, կը սպասէ առնուազն իրաւունքի, արդարութեան զգացում մը՝ մեր ժողովուրդին միտքը առաջնորդելու կանչուած բոլոր սրտցաւ մարդերէն:

Եղէք այս Հաստատութեան նկատմամբ արդար՝ եթէ կը սիրէք կրօնական եւ ազգային այս Աթոռը: Գերագոյն եւ կարելի արդարութիւնը ուրիշ բան չէ բայց եթէ գտնալ հիմնական կարեւորութիւն ունեցող արժէքներուն զոնկ մասնակի պարագաները: Արժէքներու նկատմամբ մեր այս անհասկացողութիւնն է պատճառը յաճախ, տրուած հարցերու շուրջ մեր թիւր եւ անախորժ աղմուկին:

Ս. ՅԵԿՈԲԻ ՆԵՐՍԵՒ

ՏՕԿԱԿԱՆ Ք ԵԿ ԲԵՄԱԿԱՆ Ք

* 9 Հոկտ. Եր. — Սուրբ Գեորգ. երեկ նախատօնակը, այսօր՝ Ա. Պատարագը մատուցուեցաւ Ղպուց Ա. Գեորգ Եկեղեցին մէջ, քարոզեց Տ. Գեորգ Վրդ., ներկայացնելով յանդկնութիւնը օրուան սուրբին, պաշտպանելու համար իր կրօնքը. նույրումը՝ սրով անիկա տրամադրեց իր պանուական ժագուամբ տարածումը մին համար քրիստոնէական հաւատքին:

* 10 Հոկտ. Կիր. — Տօն Վարազպ Մրոյ Խոչին, երեկ երեկոյն՝ ՀՀրաշափառով մուտքը, այսօր՝ առաւտօնեան ժամերգութիւնը կատարուեցաւ ի Ա. Յարութիւն: Ա. Պատարագը Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին մէջ մատուց Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. որ և քարոզեց «Զի ճառ խաչին, կորուսելոցն յիմարութիւն է, այլ քրիելոց մեզ՝ զօրութիւն յիմարութոյ ընարանն օրուան տօնին աւանդութիւնը ներկայացնելով. ցոյց տուառ որ Եկեղեցին հաւատացնելուրու մէջ կինզանի կ'ուղէ պանել խաչին խորհուրդը, Ու մարդիկ իրենց կիանքը պէտք է վարեն խաչին ստուերին մէջէն:

* 17 Հոկտ. Կիր. — Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յակոբ. քարոզեց Տ. Նորայր Վրդ., Շիբարան Արաք. խաղաղութիւնը արարէք և կատուած խաղաղութեան և սիրոյ Եղիշեի ընդ ձեզ ընարանով. ցոյց տուառ թէ մարզիկ սրբան հեռու են իրենց հազիներուն մէջ ընդունելէ այդ կատուածը: Մարզիկ սիրոյ են խորհութեան, շարութեան, խարիբայութեան, բայց քրիստոնեային հաւատքն է թէ ի վիրջոյ հաստատուի պիտի աշխարհի մէջ խաղաղութիւնն ու սէրը հշմարիտ Աստուծոյ:

* 23 Հոկտ. Եր. — Տօն Մրցոց Թարգմանաց Վարդապետց. Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յակոբ. քարոզեց Տ. Նորայր Վրդ., ներկայացը նելով կերպ Թարգմ. Վարդապետներուն Ա. Գրիգի թարգմանութեան, կրօնական, պաշտում ի բ-

մացական հետաքրքրութիւններու տեսակետով: * 24 Հոկտ. Կիր. — Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յարութիւն, քարոզեց Տ. Պարզեմքը, «Եւ մի տանիք զմեկ ի փորձութիւն» ընարանով. ցոյց տուառ աղօթքին գերը մարդու կեանքին մէջ, անիկա սրբան հաւագանդութեան, ծառայութեան ոգի մը ի յայտ կը բերէ աղօթքովին մէջ, նոյնքան ներքործարութ ուժ և զօրութիւն կը զառնայ անոր հոգեկան, իմացական, փիզիքական ալ կարողաւթիւններուն զարգացման, անումին մէջ: Աև ատար համար, պէտք չէ ձանձրանալ աղօթիէ:

* 7 Նոյեմբ. Կիր. — Գիւտ Խոչ. երեկ երեկոյ ՀՀրաշափառով մաւրքը ի Ա. Յարութիւն կատարուեցաւ հանգիստապատճեամբ Գիր. Տ. Արտավազ Արք. Արքամեծեանի, որ Արքական Պատրիարք Հօր Հրամական կատարութիւնի կը կրօսուակէմ էր ճամանած, նախագահներու համար Գիւտ Խոչին տօնին հանդիպութեանց: Կիրակիւութիւն ժամերգութիւնը և համատօնակը Գիւտ Խոչի, տեղի ունեցան Ա. Գրիգոր Լուսաւորիչ մեզաղատական եկեղեցին մէջ: Այսօր, Նոյնպէս, Գիշերային ժամերգութիւնը ի Ա. Պատարագը մատուցուեցան Գիւտ Խոչի վայրին զրացնութեանը մէջ: Ա. Պատարագին քարոզեց Գիր. Տ. Արտավազ Արք Արքամատին յիմարան յիմարութիւն է Խաչին ու արքիւնաւորուած հոգեկը կեանքին ժողովուրդներու պատճութեան մէջ: Հայ Ժայռուրդը ամէնէն աւելի հաւատարիմ որդիկիրն է Խաչին ու Խաչեալ Փրկիչին: Եւ ասիկա իրոզութիւն է առաջն դարերէն իսկ քրիստոնէութեան:

Ա. Պատարագի աւարտումն կազմուեցաւ մեծանդէս թափօր Քիստոսի Ա. Գերեզմանին շուրջը, հանդիպակետութեամբ Գիրաշնորհ Սըրբազնութիւն:

— 9 Նոյեմբեր Երեքշարթի ցերեկին, Գիր. Տ. Արտավազ Արքական Սիրուագառ վերմէն վերապարզաւ ի Պէյրութ: